



Ա. ՏԱՐԻ 1962
ՍԵՊՏԵՄԲԵՐ 9

باكين
مجلة شهرية ، ادبية وفنية علمية
مدير المسؤول
السيد ارتين كارنيك قزائجيان

PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

Բ Ա Գ Ի Ն

ԱՄՍԱԳԻՐ

ՆՐԱՆԱԿԱՆ ՊԻՔՆԵԱՆ

ԵՒ ԱՐՈՒՆՍՏԻ

ՎԱՐՈՑ ՆԱԲԱԳԻՐ

Կ. ՍԱՍՈՒՆԻ

ՆԱԲԱԳԻՐՆԵՐ

ԵՐ. ՊՕՅԱԶԵԱՆ, Գ. ՍՆԱՊԵԱՆ

ՆԱԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ԱՆԴԱՍՆԵՐ

Յ. ԳԵՂԱՐԿ

Տ. ՈՍԿՈՒՆԻ

Բ. ՓԱՓԱԶԵԱՆ

Վ. ՕՇԱԿԱՆ

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

Ն. ՊԷՇԻԿՈՍՏԼԵԱՆ

ՆՈՒԱՐԳ ՕՏԱՃԵԱՆ

ԵՒ. ՊՕՅԱԶԵԱՆ

Ա. ԵՐԿԱԹ

ԱՐԱՔԱՒ ԶԱՐԵՈՒՏԵԱՆ

ՇԱՀՊԱՆ

ԱՐՏ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ԱՐՄԷՆ ՍԱՐԵՆՑ

Ղ. ԺԻՐԱՅՐ

Բ. ՓԱՓԱԶԵԱՆ

Վ. ԳԵՈՐԳԵԱՆ

Լ. ԳԱՐՄԷՆ

Վ. ՕՇԱԿԱՆ

Բ. ԹԱՇԵԱՆ

ԱՐՏԱՇԷՍ ՏԷՐ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ

Բազմ

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

Ա. ՏԱՐԻ, ԽԻՒ Յ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 1963

ՊԷՐՈՒԹ

Գ Ր Պ Ա Ն Ի Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

Երկասիրեց՝ ՆՇԱՆ ՊԵՇԻԿՈՒԱՇԼԵԱՆ

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Մատենագիտութիւն մը կ'արձանագրուի երկասիրութեան մը վերջաւորութեան. բայց մեր ներկայացնելիք մատենագիտութիւնը անսովոր ըլլալով՝ իր սովորական տեղը փոխած է:

Այս բառարանը կազմելու համար օգտուած ենք միայն մեր երգիծական պործերէն, այն ալ մասամբ, այսինքն քեզիկ մը բանաբարութիւն ու բանադրութիւն կատարած ենք մենք մեզմէ: Մարդ ինքզինքն ալ կրնայ կողոպտել, ինչպէս ինքզինք կը խարէ յաճախ: Օգտուած ենք առաւելապէս կեանքի մատենաներէն, որոնք տեսանելի չեն ամէն մարդու. տեսանելի ըլլալու պարագային իսկ չամէն մարդ չի կանա կարգադր:

Ահա այսքան է մեր մատենագիտութիւնը. Ստեղծարարական երկերը չեն

ունենար մատենագիտութիւն: Մեր երկը թէեւ փոքրիկ բառարան մըն է, բայց ստեղծարարական ճիւղի վրայ բուսած է:

Մեր բացատրութիւնները հիմնաւորելու համար, երբեմն ըրած ենք մէջբերումներ՝ կէս աշուղ ու կէս քերթող ախայխայի կուպոյին անտիպ տաղերէն, հեղինակին բարեհաճ արտօնութեամբ:

ԵԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Հայերէն բառերէն դատ, մեր բառարանին մէջ առնուած են նաեւ քանի մը օտար ու միջազգայնացած բառեր, որոնց ամբողջովին կամ լիովին հայերէնով կազմուած ըլլալը ապացուցած ենք:

Մերը՝ Մալխասեան բառարան չէ, այլ Մալխասեան բառարան մը:

Մերը՝ գրպանի բառարան ինչ չէ, այլ գուլպայի բառարան մը, որ կրնայ պահուիլ արանց ու կանանց գուլպային վերնամասէն ներս մտցուելով: Եւ այսպէս, առաւելութիւնը ունի չուռեցնելու գրպանները, որոնք այնքան լեցուն են թղթադրամներով կամ այլ թուղթերով, եւ տեղ չունին ամէնէն բարակուկ գիրքին համար:

Գի՛րք՝ գուլպայի մէջ...: Թող ասորիսնակ ու սպիտակ չիտի, խոնարհ անուամբ մեր օրերուն, երբ տաղանդ, լընորհ ու միւր իշած են ստինքներու կամ սրունքներու մէջ, հաւանաբար աւելի մօտէն ծառայելու համար ժողովուրդներուն:

Մեր բառարանն ալ տարուած հոսանքէն, առայժմ թո՛ղ մտնէ գուլպաներու մէջ, օր մը, գլուխներու մէջ մտնելու յաւակնոտ յոյսով:

Ա

Ազգ. Միլիոնաւոր մարդոց միութիւն մը, իր անմխարանութեամբ անուանի, թէ՛ դաւանական, թէ՛ դասակարգային, թէ՛ դաւադրական, թէ՛ դադափարական, թէ՛ դեղեցկադիտական հարցերու մէջ: Այս միլիոնաւոր միութեան կան անմխարանները երբեմն կ'ազդարուին միեւնոյն կրկէսին մէջ, խաղալու, խեղկատակելու, դիմակաւորուելու, դերակատարելու, նոյնիսկ իրարու արին թափելու համար:

Ազգային. Ամէնէն նեղ օրերու մէջ գանձելի իրաւունք մը, կը նշանակէ նաեւ «ձրի»: Առնելիք մը աղքատի, սեւ օրուան մէջ, Հարուստներն ալ մերթ կը տիրանան այդ առնելիքին, բայց ոչ խնդրելով, այլ խօսելով: Ինչատիտո Գովիթ Թուլթուլիցի իր «Պորբախտապատում» երկասիրութեան մէջ կը գրէ. «Երբ սմն իւր սզգային բաժինը գանձելու նպատակաւ կու գիմէ յափշտակութեան, արդար զոգութիւն կատարած կու լինի»:

Ամուսնութիւն. Կիներուն լարած թակարդը, որտալու համար այրերը: Եր-

բեմն, որսին փափաքին գոհացում տալու համար, որոգայթին մէջ կը դրուի գրում, իրրեւ խոյժ: Վա՛յ այն որսին որ կ'իջնայ՝ դրամ պարունակող ծուղակին մէջ:

★ Պրոպատիկէ աւազան է ամուսնութիւնը, որուն մէջ նետուելով օրիորդները կը հրաշափոխուին ձկնորսի, իսկ պարոնները կ'ալլափոխուին ձուկի, տապկուելու համար:

★ Ամուսնութիւնը միջազգային, մեծազոյն, հին ու յաւիտենական դիճակահանութիւն մըն է, միլիաւաւոր թիւերով, որոնք յաճախ կ'ըլլեն պարսպ, երբեմն կու տան պատիժ ու պատուհաս, քիչ անգամ ալ պարգեւ: Այդ պարգեւները շահուած են մեր նախնիքներուն կողմէ: Մերօրեայ մարդոց մտացած են պարսպ կամ պատուհասող թիւերը: Ներկայիս, պարսպ թիւ մը կը համարուի պարգեւաւոր: Հակառակ այս այսպէս ըլլալուն, այրերը միշտ յոյսով կը մտանակցին դիճակահանութեան:

Այր. Անցեալին մէջ, հրամայող մը անապատի մէջ: Ներկայիս հրամայող մը հրամայուած: Ապագային, հլու հնազանդ մը, հարձի վերածուած:

Անտարքերուքիւն. Հոգի մը կամ հողամաս մը, որուն մէջէն հանուած է սէրն ալ, ատելութիւնն ալ: Ձէզոք գօտի: Վտանգաւոր դիճակ, վտանգաւոր վայր:

Անցեալ. Եթէ ժողովուրդի մը կը վերաբերի, մոմիա մըն է պակասաւոր մարմնով, եթէ անձի մը կը պատկանի, մոմիա մըն է, որ չի ցուցադրուիլ ամբողջութեամբ:

Առած. Ժողովուրդներու իմաստութեան կարճ ու կուռ խօսք: Լողոս լսական: Օրինակի համար չինական առած մը կ'ըսէ. «Ո՛վ որ չափազանց արեւմուտք երթայ, արեւելք կ'երթայ»: Եւ ընականաբար, ո՛վ որ չափազանց արեւելք երթայ, արեւմուտք գացած կ'ըլլայ: Նոյնն է աջ կամ ձախ երթալու պարագան:

Արևելահայերէն. Աշխարհաբար հա-

յերէնը երկուորեակ լեզու մըն է: Արեւելահայերէն կոչուող եղբայրը եղաբախտաւոր, դառնալով պետական լեզու: Վաղուց է վեր արեւելահայերէնը բազմակիս է, ամուսնացած ըլլալով Ֆրանսացի, գերմանացի, ռուս ու թաթար կիներու հետ, որոնք, իբրեւ դրամատիս, իրեն բերած են բառե՛ր, բառե՛ր ու բառե՛ր, որոնց բնաւ պէտք չունէր, ջանի որ կրնար առնել իր Արեւմտահայ եզբորմէն, որուն ունեցածները հաւասարապէս ինն ալ են: Վերջերս կը խօսուի Արեւելահայերէնի կտորաբիւրէ ապահարզաններու մասին: Յուսալի չեն այդ ամուսնալուծումները: Եթէ նոր ամուսնութիւններ չկատարէ, արդէն բարեբախտութիւն է:

Արմէն. Լատիններէն կը նշանակէ հովիւ: Այս հովիւը իր ոչխարներէն շատերը զոհ տուած է դայիբուն, որոնք ներկայիս ա՛լ ոչխար չպտնելով՝ սկսած են ուտել դիրար՝ խիստ խոստմնալից արորժակով:

Աւանակ. Ազատագրուած չորքոտանի, որ կ'ըսէ մարդուն.— Տէ՛ր, տաբոսը բեզի:

Բ

Բառարան. Լեզուի մը գանձարանը, որուն գուռները բաց են բոլորին առջեւ: Վախ չկայ կողոպուտի: Երբ բառերը արուեստադէս դրապէտները կ'առնեն, կը վերածեն ոսկիի կամ գուհարի: Երբ դրակները կ'առնեն, կը վերածեն թիթեղի: Եւ սակայն, ո՛վ որ ալ առնէ, գանձատունէն ոչինչ կը պահուի: Թշնամութեան կամ բարեկամութեան ատեն, բառերը կ'արձակուին առատաձեռնօրէն: Կան սակայն կծծիներ ալ, որոնք այդ ձրի բառերն անգամ չեն ուզեր տալ ո՛չ ոքի: Բառատութեան մէջ, ամենէն առատաձեռն անձերը՝ կատաղի ճառագոսներն են, որոնք ժամերով ունկընդիտները կը յազեցնեն բառահեղեղով, սկանջները լեցնելու եւ խցելով խլացրելու աստիճան: (Մեր բառարանը, անա՛ղ, մեր լեզուին գանձարանը չէ, այլ

զինարանին մէկ բաժինը նետերու եւ նիզակներու):

Բերան. Բանուկ վաճառատուն մը, որ կը դրաղի ներածումով եւ արտածումով: Կը ներածէ, որքան որ կրնայ, ուտելիք, խմելիք, ծխելիք եւ օդ: Կ'արտածէ խօսք ու խուփ եւ թուք ու թոյն: Խօսքը սուտ կամ ստախառն է: Իսկ միւսները լի են մանրէներով: Այս վաճառատունէն ամէն ոք հատ մը ունի: Ինչպէս կը տեսնուի, ամէն ոք առեւտրական է: Այն հազուադէպ բերանները, որոնք չափով կը ներածեն, ու կ'արտածեն ճշմարտութիւն, թէեւ կը սնանկանան, սակայն, սուրբ են: Այդպիսիները բերան ըլլալէ աւելի՛ խորան են, որով համբուրելի: Բերաններ կան, որոնք անուխ կ'ուտեն ու կրակ կը փրսխեն. իսկ բերաններ ալ կան, որոնք եթէ ջելօ մը անոյշ ուտեն, երկու ջելօ ժահր կ'արձակեն:

Բարբարոս. Մարդ՝ որ դեռ չէ սորված քաղաքավարօրէն կեդծելու, կեղեքելու եւ կերակրուելու կենցաղադրուութիւնը:

Գ

Գաւառ. Կը նշանակէ խաւար: Գաղաքամայրերը եւ ուսանները վայրեր են քաղաքակրթութեան, քաղաքավարութեան եւ քաղաքակրթութեան խաւարներու մէջ են: Եւ սակայն, քաղաքացիները դաւառ կ'երթան մաքուր օդ, անարատ ու թարմ սնունդ եւ լո՛յս ունենալու համար:

Գնտնառիւծ. Քամիլիւն, որ նախապէս մակարոյի բողոն մըն էր գունափոխուող: Հիմա, իր յատկութիւնները պահելով հանդերձ, այս մակարոյի մարդացած է բարեշրջութեամբ: Ոչ միայն մարդացած, այլ առիւծացած ալ է: Ընդունակ է նոր բարեշրջութեանց:

Գռլ. Թշուառ ու գժբախտ արարած, որ չէ կրցած ըլլալ դրող, իր գողութիւններուն հազցնելու համար պատ-

ույն պատմուհան:

Գրող. Ընդհանրապէս կեղծարար մը, որ պատիժէ խուսափելու կամ իր պատիժը թեթևացնելու, յաճախ ալ պատուոյ արժանանալու համար, իր կեղծարարութիւններուն մէջ կամուրջ կերպով կը մտցնէ փոքրիկ փոփոխութիւններ, ճիշդ դրամանկերի մը նման: Գողին ու գրողին մէջ եղած տարբերութիւնը տառ մըն է միայն. «ը» դիրքը: Ս'վ որ ճարտարութիւն չէ ունեցած դառնալու գրող, յաջողած է ըլլալ գող: Միջնադարեան մատենագիրներէն Կարլոս Փոլյատիս իր «Յոստովանանք»ին մէջ կը գրէ— «Եթէ իբրև գրող՝ եղայ անկարող, բայց իբրև գող՝ դարձայ յաջող: Ճիշդի մը վերայ պատահած անյաջողութիւնը կարելի է վերածել յաջողութեան՝ ուրիշ ճիւղի մը վրայ»: Գրողը, հին իմաստով, արձանագրողն է այլոց մեղքերը: Նոր իմաստով ալ իր արժանիքները արձանագրողն է: Առած մը կայ, որ կ'ըսէ.— «Գրող՝ գող ամենակարող»: Հինէն ի վեր կ'ըսուի իբրև անէճօք.— «Գրողը տանի...»: Գրողի տեսակներ կան. գրողներ կան՝ որոնք իրենց խաչը կը տանին. գրողներ ալ կան՝ որոնք խաչի ծանրութեամբ ոսկի կը տանին: Ժամանակակից գրողներէն շատերը ճիւղ գողեր են, տակայն, անոնց համար կ'ըսուի թէ Բեզաս ունին:

Գ

Դրացալ. Տուփ՝ ուր կ'ամփոփուի մեր բովանդակ ոչնչութիւնը:

Դուռեման. Հողի ու հագուստ (մանաւանդ շապիկ) փոխած բառ: Հին իմաստը եղած է անբնութեան: Ներկայիս, դաւաճանը դէպի բարեչըրութիւն թեւողն է, որով պէտք է ըսել թեւարժան կամ թեւաճան:

Դրափնի. Մշտադալար այս տունկէն տները ժամանակին կը գործածուէր պտակելու համար հանճարեղներն ու յաղթականները: Ներկայիս, զափնետները կը գործածուի մանկէն կարգ մը կերակուրներու պարաստութեան ա-

տեն, յանուն համին յաւելման: Ինչպէս կը տեսնուի, հիմակ ալ դափնետներուով կը պտակեն ստամոքսը:

Դիրեկտոր. «Տնօրէն» կամ «տեսուչ» բառերուն արեւելահայերէնն է «դիրեկտոր»ը, որ բարձր բառ մըն է, կազմուած «դիրեկ» («տիւն») եւ «տոր» (հնդեւոթու) բառերով: «Տնօրէն» վերջին դիրքը ինկած է: Ուրեմն «դիրեկտոր» կը նշուի յանակէ «հնդեւոթուի սիւն»: Եւ շատ չիտակ է. բազմաթիւ տեսուչներ ուրիշ բան չեն, եթէ ոչ սիւներ հողածուխի, անհրաժեշտ պարագային վառուելու եւ իրենց գտնուած հաստատութիւնը տաքցընելու համար:

Դրամ. Միակ անմահ գերմարդը, որ դարերով տուն մը անգամ չունէր, հակառակ իր հանճարին, եւ հակառակ իր դէրճին, ըլլալով պաշտամունքի առարկայ: Ներկայիս, փա՛ռք Սաղաթէնին, ունի ամէն մէկ քաղաքի մէջ բազմաթիւ տուններ, որոնք կը կոչուին դրամատուն: Ալ անտուն չէ, կարասարձակ չէ, սնտուկներու խորքը թաղուած չէ: Իր տունները կը նմանին պալատներու: Ինքն է, թաղաւորներու սովին մէջ, միակ արքայից արքան:

★ Ըսուած է.— «Դրամը երջանկութիւն չէ»: Մասնակի ճշմարտութիւն մըն է այս: Բայց դրամ չունենալը ապրիլանկութիւն է: Այս մէկը ճշմարտութիւն մըն է բացարձակ, որով անվիճելի:

★ Դրամը երբ բացակայ է, կը թուի թէ թշնամի մըն է ցանկալի. երբ ներկայ է, բարեբար է. թէեւ երբեմն չարարար ալ է: Երբ բուսական է, բերկրութիւն է. երբ մեծաքանակ է, մտահոգութիւն է: Օրհնեալ է ու անխնայ: Կեանքը թուաւորած է, բայց առանց իրեն կարելի չէ ապրիլ: Անհրաժեշտ թոյն մըն է, որուն շափը չէ գտնուած:

★ Դրամը նախապէս մետաղ էր ու կ'ըր եւ կը թաւալէր, կ'երթար. հիմակ թուղթ է ու կը թռչի, կ'երթայ: Թէեւ

Թաւալողն ալ, Թոչողն ալ զսպողներ ու զնտանը զետեղողներ զանուամբ են միշտ:

★ Աշուղ Կոպօ երգած է.

Անունը դրամ է,
Երբ չըկայ տըրամ է:
Երբ շարուած է մէջքիս,
Հոգուս մէջ կայ մէջիս:
Ոսկին լոյս, լաւ դեղ ա,
Երբ բախտից կը տեղայ:
Թէ լիքը դեղ ունես,
Աշխարհում տեղ ունես:
Թէ կարօտ ես դեղին,
Այստաւոր ես դեղին:

Ծ

Երգահամ. Հայ երազողտեսներուն նախընտրած գիրքը: Միակ դիրքը, որ մեր մէջ անդադար կ'արժանանայ նոր տպագրութիւններու: Եւ այդպէս ալ պետի շարունակութիւն, մինչեւ մեր երազներուն իրականացումը:

Երգախաղ. Օրէրա: Թատերախաղ մը, որուն զործող անձերը կը խօսին երգելով, կը սիրեն երգելով, կը նախանմին երգելով, կը դուստն երգելով, կը վիճին երգելով, կը կուսին երգելով, կը ճաշեն երգելով, կը քալեն երգելով, կը քանանն երգելով (երբեւ ինքնօրօր), կը մեռնին երգելով, մեռնալին վրայ կ'երգեն երգելով:

Երգանիկ. Երջանիկ երկու հոգի կրցած են ըլլալ. այն ալ մասամբ: Մեր նախահայրերը.— Աղամն ու Եւան: Աղամ երջանիկ էր, որովհետեւ զրքանչ շունէր, Եւա երջանիկ էր, որովհետեւ ո'չ կեսուր ունէր, ոչ ալ տալ: Աղամ երջանիկ էր, որովհետեւ տուրք չէր վճարեր: Եւա երջանիկ էր, որովհետեւ տնային աշխատանք չկար: Աղամ երջանիկ էր, որովհետեւ զինուորութիւն չունէր: Եւա երջանիկ էր, որովհետեւ ունէր գիրք Թաղուհի: Աղամ երջանիկ էր, որովհետեւ ուրիշ կին չկար, որուն ցանկար ու տառապէր: Եւա երջանիկ էր, որովհետեւ ուրիշ կին չկար՝ որմէ նախան-

մէր, ուրիշ այր չկար՝ որուն հետ բաղդատէր իր մարդը: Աղամ երջանիկ էր, որովհետեւ զրամ շահելու ինչդէր չկար: Եւա երջանիկ էր, որովհետեւ չկար հարց զնումի: Աղամ երջանիկ էր, որովհետեւ աշխարհի տէրն էր: Եւա երջանիկ էր, որովհետեւ աշխարհի տիրոջ տիրուհին էր, այսինքն բուն տէրը աշխարհի: Երբ ընտանիքը բազմացաւ, երջանկութիւնը վերջացաւ, որովհետեւ երջանկութիւնը կ'ըլլայ մէկ հոգիով, ա՛մենաշատը երկուքով: Ուր բազմութիւն՝ այնտեղ վէճ, կռիւ, սպանութիւն, զբժարատութիւն եւ ողբերգութիւն, հանդերձ խայտառակութեամբ: Փաստը մէջտեղն է. միլիոններով մարդիկ ու քաղաքներ, զաթաթրոֆիա եւ քառս:

★ Աշուղ Կոպօն այս մասին ունի տաղ մը, որ անաւատիկ.

Ինոնք ուր կայ բազմութիւն,
Շա՛ւտ էնտեղից փախչիր դուն:
Մի բամ գիտի մզնաւոր,
Որ այրում է մեծաւոր:
Ատա՛ւմ ես վէճ ու յուզում,
Երբանկութի՛ւն ես ուզում,
Եվի՛ր դու՛՜ քալաւոր,
Ապրիր որպէս մզնաւոր:
Ինոնք ուր մարդը շատ է,
Ձիով փախչիլ աշխատէ:

Ձ

Ձուակ. Կը նշանակէ փոքրիկ կենդանի: Ահա թէ ի՛նչպէս. յունարէն «զօ» կը նշանակէ «անասուն» կամ «կենդանի», նախապէս «օ» դիրք չունենալով մեր նախնիքը այդ տառին տեղ կը գրէին «աւ». որով «զօն» եղած է «զաւ». անոր ծայրն ալ գրուած է «ակ» փոքրացնող մասնիկը, որով եղած է «զաւակ», այսինքն փոքրիկ անասուն կամ ողբալիկ կենդանի: Անուն մը, որ նախատական ըլլալէ աւել, իրապաշտական է, քանի որ զաւակ մը, իր սկզբնական շրջանին, տարբերութիւն չունի անասունէ: Կան ալ՝ որոնք մեծնալով ալ, զժբախտարար,

սարքերու թիւն չեն ունենար: «Զաւակնը փոքրիկ անասուն նշանակելուն ուրիշ ապացոյցներն ալ կան:— լամուկը եւ լակոտը. վերջինը կը նշանակէ շան մագ, միտամանակ՝ մանուկ: «Ճետն» ալ կը նշանակէ թի՛ տրու զաւակ, թի՛ նորածին վառեակ:

Չոհ. Բացատրութեան կարօտ բառ մը չէ, Հայոց Համար: Սա չափը ըսենք որ անասուններուն մէջ, ամէնէն աւելի զո՛ւկն են Հնդկահաւերը եւ ոչխարները: Մարդոց մէջ առաւելագէտ զո՛ւկն են Հայերը, իսկ Հայերուն մէջ մասնաւորապէս զո՛ւկն են պրագէտները եւ ուսուցիչները:

Չոխանչ. Փետային կետերը կամ փետային դիտան վրայ կարեւորած սուրբը:

Ե

Եգ. Կրկնապէս կին, հոսպատիկ կին, նոյնիսկ աւելի, որ սակայն չ'արժէր քառորդ տանտիկին: Կի՛ն՝ բոժոժաւոր ու պոչաւոր, որ դիտէ իր բոժոժներուն նուազով՝ պոչը խաղցնել եւ անոյշ տենդով ու տենչով տոչորել սյրերը, այնքան դիւրավառ: Այլ բացատրութեամբ, էզը չափազանց կին է, միտամանակ պակասաւոր կին:

Խոլքիւն. Գոյութենէն առաջ է, գոյութեան վերեւն է, գոյութեան մէջն է ու գոյութենէն վերջն ալ է: Պարապին լիութիւնն է:

Ը

Ընթացաւարտ. Գարոցական շրջանը աւարտողին կ'ըսեն ընթացաւարտ, մինչդեռ պէտք է ըսուի կեանքը աւարտողին, որ լուսաւոր խաւարէ մը կը մտնէ խաւար լոյսի մը մէջ, առանց բան մը ըմբռնած բլլալու:

Ընկիւր. Այս բառը կազմուած է ճշմարտութեան, որ կը նշանակէ «միասին ուսող». «դ» զիբը ինչալով՝ մտացածը միացած ու եղած է «ընկեր»: Ուրեմն «ընկեր» կը նշանակէ ապուրը միասին ուսող, հին իմաստով. իսկ նոր իմաստով կը նշանակէ դիւրար ուսող:

Ընտանիք. Երկտեղ զուգապետութիւն մը, որուն մէջ կ'իւր թաղուհի է, իսկ այլը թաղուհին ամուսինը եւ Հըպատակը (ամուսինին թաղաւորութիւնը մէկ օր կը տեսէ. պակասած օրը): Երբ կը ծնի անդրանիկը, թաղուհին ալ, ամուսինն ալ կը վերածուին սարուկի: Կը մենատիրէ մանուկը միգիւրով ու մլաւելով: Հետզհետէ կ'աւելնայ ընտանիքը, ու տէրութիւնը կ'անցնի ձեռքէ ձեռք: Կան անշուշտ տեսակներ ընտանիքի. թոչնոց բոյն ալ կայ: Սակայն, ընդհանրապէս, ընտանիքը կամ բռնակալական, կամ անիշխանական վարչակարգ ունի: Պահապան Հրեշտակը երբ փախչի սոսկումով, ստտանան մուտք կը գործէ քրքրելալով... Յայնժամ, ընտանիքին պատուոյ պատերը փլած են ու դայթակղութիւնը սարքած է բաց բարեկենդան: Ընտանիք կայ՝ որ մանրանկար Գոնկո մըն է, իր լուրումպաներով, Զուլումպաներով, Զոմպէներով, Զոմարներով ու Պոմպոններով: Կատարեալ խափլիկեան խառնարան:

★ Լսենք մեր օրերու մեծագոյն քերթող-աւուղին տաղը, ընտանիքի մասին.

Մարդիկ ունին մի տանիք,
Կազմում են մի ընտանիք:
Միլիառամերով մարդիկ կան,
Մօտիկ, հեռու ազգակամ...
Բոլորս իրար ենք աղբար...
Քարանձաքա է աշխարհ...
Միմ ունէ տառը սեմեակ,
Միւրը մի խուց կամ խշմեակ:
Միմ գնում է իր կառնով,
Միւրը յոգնած ու առնով:
Միմ պարարտ խոզ, գէր ախար,
Միւրը ճօքի աւ սկիւր:
Ունեմ աղբէր հազար մի,
Ափսո՛ս, միմիանց քշեմի:
Էս ի՛նչ տեսակ ընտանիք,
Գլխում փլչի իբ տանիք:

Թագաւար. Նոր իմաստով մեծագոյն տէր՝ մեծաքանակ ապրանքի: Օ-

րինակներ. կաշիի թագաւոր, երչիկի թագաւոր, պղպեղի թագաւոր, թաղաւոր արիքնեղու: Կան նաեւ մուրացկաններու թագաւորներ, ինչպէս գնչուներու թագաւորներ: Այս նոր թագաւորները, մէջը ըլլալով նաեւ մուրացկաններունը, չիներէն աւելի հարուստ ու հանգիստ են: Նորերը մէկ կերպով կը նմանին չիներուն.— ունին կանանոց, որուն թէ՛ տէրն են, թէ՛ ներքինին:

Թագունի. Հին թագուհիները կ'ըլլային տիկին ու կը կոչուէին զարկնաց տիկին»: Նորերը օրերոգ են ու կը կոչուին օրերոգաց օրերոգ կամ օրերու օրերոգ: Հին թագուհին խորհրդանշէն էր զեղեցկութեան, Նոր թագուհին մարմնացումն է զեղեցկութեան: Հին թագուհին մարմնական մերկութիւնը ոչ մէկ այր կրնար տեսնել: Նոր թագուհին մարմնական մերկութիւնը արար աշխարհ կը տեսնէ, ամուսնի լուսանկարներով: Հինը թագաւորի մը հետ ամուսնանալով եղած էր թագուհի: Նորը զեղեցկութեան թագուհի ընտրուելէն ետքն է որ կ'ամուսնանայ, անշուշտ միլիոնատէրի մը հետ: Նոր թագուհին մեծ առաւելութիւն մը ունի. կրնայ ամուսնալուծուիլ ու վերամուսնանալ ուղած ատենը, միշտ է խնդիր զեղեցկութեան ու շքեղութեան եւ յանուն նորամուսնեան:

Թարգման. Լեզուի լուսամասիոյ, քիչ անդամ անխորզախ:

Թերթ. Թնդանօթ, թուր ու թըմբուկ: Թերթ լուսնեցողը թո՛ղ զգուշանայ թերթի հետ խնդիր ունենալէ: Կը զատապարտուի լուսնեան: Ամէն ձայն, ամէն խօսք, մտնուանդ վերջին ձայնը, վերջին խօսքը, անսխալական վճիռը թերթին է: Պէտք չէ բերանը բանալ տալ թնդանօթին: Թերթերը զիբար ալ կը ոմբակոծեն, բայց երկուստեք կը մնան յաղթական: Պարտութիւնը թերթ լուսնեցողին համար է: Թերթ սննեցողը եթէ թերթը կորսնցնէ, կ'ըլլայ զինաթափ, կ'ունենայ տերեւաթափ: Թերթ ըսուածը՝ ամէն օր պայթող նախահիւշական ուսման է, որ եթէ միշտ կրակ չ'արձակեր, բայց անդադար թոյն կ'արձակէ:

Թռչն. Մահացու ժահր, որ ընդհանրապէս կը գտնուի օձերուն բերին մէջ: Այդ թռչնը դեղ է, երբ կը զործածուի չափով: Թռչնին յունարէնն է «Ֆարմաքի», որմէ «Ֆարմաք», այսինքն «դեղարան» բառը, որ այլ լեզուներու մէջ կը նշանակէ «թունարան» կամ «թունալաճատ»: Ամէնէն սարսափելի թռչնը, սակայն, կը գտնուի մարդկային բերին մէջ, որ նրեթական ըլլալով՝ չի կրնար օգտագործուիլ իբրեւ դեղ:

Ժ

Ժամագարծ. Մէկը որ ապարդիւն կերպով կը ջանայ իր ձեռքը անցած բոլոր ժամացոյցները գործոն անդամներ ընել միեւնոյն կուսակցութեան, որ ո՛չ յետադիմական է, ո՛չ ալ յառաջդիմականը, այլ ճշգրտականը: Մէկը որ կը զբաղի ժամալաճատութեամբ:

Ժամադրութիւն. Որոշուած ժամ մը, զիբար տեսնելու կամ հաւաքուելու համար: Տաղանդաւորները մէկ-մէկուկէս ժամ ուշ կ'երթան ժամադրութեան: Եւ որովհետեւ բոլոր Հայերն ալ տաղանդաւոր են, բոլորն ալ կ'ուշանան: Հանճարեղ Հայերը քնաւ չեն երթար ժամադրութեան: Սակայն, եթէ ժամադրութիւնը զանձուսի համար է եւ կամ եթէ սիրային է, այրերը կը փութան ժամանակէն առաջ ըլլալ ներկայ: Իգական սեռին պատկանողները պարկեշտ են, չեն դաւանանք իրենց տաղանդաւորի սկզբունքին, ու միշտ կ'ուշանան:

Ժպիտ. Մի կաթիլ մեղր, բխած հողէն ու ծաւալած դեմքին վրայ: Երբեմն մեղր չէ, այլ խայթող մեղու: Երբեմն ալ թունաւոր մեղու: Կը պատահի ալ որ կաթիլ մը մեղրի պատճառով պայթի պատերազմ, ինչպէս կը պատմէ Հայկական զրոյցը: Կանացի ժպիտներ կան, որոնք կտիւի պատճառ եղած են:

Ի

ԻճԱ. Գազան մը որ թշնամի է մարդոց միտին, մինչդեռ խեղճ մարդիկը այնքան բարեկամ են իր մորթին:

Իշխան. Իշխանները ջուրը նետուած են: Իշխան ըլլալով մնացած է համանուն համեղ ձուկը Սեւանի:

Իւզանկար. Հին, համով հոտով, չէնքով շնորհքով նկար, որ ներկայիս գրեթէ բոլորովին ինկած է նորածեւութենէ: Հիմակուտները ալ իւզանկարներ չեն, այլ քացախանկարներ:

Լ

Լարիւլիմբոս. Մեր անճարակ նախնիքը տակաւին կէս դար առաջ, հագիւ կրցած էին չինել քանի մը լարիւրինթոս: Մերօրեայ ամենակարող մարդիկը կըրցան ամբողջ աշխարհը վերածել լարիւրինթոսի: Եւ կրցան այս հսկայ լարիւրինթոսին տակը տիղմով ձեփել ու վըրան պատել քառոսով, որպէսզի ըլլայ երիցս երեւելի:

Լաւաւեւաւքիւն. Բարեբախտ խելագարութիւն մը: Ամենուն համար ալ բարեբախտութիւն կ'ըլլար, եթէ փխանցիկ ըլլար:

Լոյս. Աստուծոյ նայուածքը: Երբ Աստուծոյ նայուածքը կը քաշուի երկրի վրայէն, կը գործեն գողերը մթութեան մէջ: Հիմա, սակայն, ապրուստը այնքան սղած է որ հէք գողերը միայն զիշերները աշխատելով չեն կրնար շահել իրենց օրապահիկը, որով ստիպուած են ցերեկուան լոյսին, այսինքն Աստուծոյ նայուածքին տակ ալ իրենց ժանսպիտութիւնը ի գործ դնել, շարաշար սըքնելով տիւ եւ գիշեր, եւ ենթարկուելով ձերբակալուելու վտանգին: Լոյսը որ այնքան զեղեցիկ ու օգտակար բաներու խորհրդանիշն է, չէ սիրուած կողմատողներէն, ինչպէս նաեւ գիրար կողմատողներէն, այսինքն սիրահարներէն:

Լրտեսուելի. Պարուհի եւ պաղտնի տեղեկութեանց պարութայ:

Խ

Խաղ. Պաղարիկ, երգ, կատակ, թըղթախաղ, թատրոն, զբօսանք, պար, զըւարճութիւն, հնարք, խաբէութիւն,

խայտառակութիւն, ջրոտ տեղ: Պաղ՝ մէկ խօսքով բովանդակ աշխարհը, ամբողջ կեանքը:

Խաւմանիկ. Բոլոր մարդիկ, որոնց կապուած լարերուն ծայրերը կը գտնուին ձեռքին մէջ Բախտին, որուն ղեկավարութեամբ կը շարժին:

Խաչ. Մարդածեւ գործիք մահու: Պաչին վրայ կը բեւեռէին յանցապարտները, նաեւ անմեղները, քանի որ հինէն ի վեր մեծագոյն յանցանքն է անմեղութիւնը: Գործիք նաեւ տառապանքի: Ամէն ոք կը կրէ իր խաչը, առաւել կամ նուազ ծանրութեամբ: Մարդիկ կան որոնք խաչը իրենց վրայ կ'առնեն. խաչն ալ որոշ մարդոց կը մեղքնայ ու զոհոնք իր վրայ կ'առնէ: Կան նաեւ խաչադոզներ, որոնք մարդկային տառապանքը թեթեւցնելու համար խաչ կը դողնան, երբ մանաւանդ խաչը ծանր է, ըլլալով լիքը ոսկի: Պաչ նուէրող խաչադողներ ալ կան:

Խաւարակուտ. Ածական՝ տրուած Ափրիկէի: Եթէ այս ածականը տրուած ըլլար Ափրիկեցիներուն, մասնաւորապէս խափշիկներուն մորթին համար, տեղին պիտի ըլլար, ըլլալով նոյնքան ալ անտեղի: Բայց աշխարհի ամէնէն լուսաշող ցամաքամասերէն մին այդպէս ածականելը անարդար է: Պիտի առարկուի որ կ'ակնարկուի տեղացիներուն ողիտութեան, վայրենութեան, մարդակերութեան: Դարձեալ անարդար, որովհետեւ Ափրիկէի բնիկները եթէ մէկ դար անդադար մարդակերութեամբ զբաղին, չեն կրնար ոչնչացնել այնքան մարդ, որքան կրնան ընել լուսակուտ Եւրոպան, լուսակուտ Ռուսաստանը, լուսակուտ Ամերիկան՝ հինգ վայրկեանի մէջ:

Միծեանակ. Թռչուն՝ որ տաք երկիր կը զաղթէ ու գարնան կը վերադառնայ: Նաեւ թռչուն կին մը, որ տաք տեղ մը կը զաղթէ, բայց ա'լ չի վերադառնար:

Մազիկ. Եթէ բնութեան մէջ բուսածն է՝ բանաստեղծութիւնն է Աստուծոյ: Գողտրիկ քերթուած՝ ձեւով կուսական, բովանդակութեամբ անկուսակ-

ցական: Բովանդակութիւնը բոլորն է: Եթէ անբոյր է, դոյնն է անկուսակցական: Ծաղիկը եթէ կոյս է, վաղահասօրէն կը բացուի ու կը բուրէ: Եթէ կին է, կը նուիրուի ընկերութեան: Գրականութիւնն ու գեղարուեստը կը սնանին ծաղիկ կիներու կեանքով, ինչպէս Մարկըրէթ Գոթիկ, Մանոն, Պովարի, Լուա եւայլն: Ընտանիքի պարկեշտ կիները ծաղիկներ չըլլալով, չեն կրնար նիւթ ըլլալ ստեղծագործութիւններու, իրենց

միօրինակ կեանքով: Ծաղիկներն են որոնք կը զարգարեն սրահները, սենեակները, սրտերը, ստեղծագործութիւնները եւ մինչեւ անգամ գերեզմանները: Ծարաւ. Հեղուկի պահանջ: Ժողովուրդէ ժողովուրդը կը տարբերի տեսաւ կը հեղուկին: Կան որոնք կը դո՛ւսնան ջուրով, ուրիշներ կը դո՛ւսնան գինիով, այլք ալ՝ արեւնով:

Ն. Գ.

Ե Ր Է Կ

Քեւերու մէջը լոյս մը կար երէկ...
Անհո՛ւն, ամսամա՛ն աշխարհ մ'էր կարծես,
Բիւրեղ աչերու, արե՛ւ կար երէկ...
Կեանքը ջերմութեամբ կ'օրորուէր բեկ - բեկ...:
Հոգիս ծաղկազարդ գարուն էր երէկ,
Սիրս... սիրէ սիր, քիթն էր քեթն...
Ու ծաղկէ ծաղիկ կը թռչէր երէկ...

* * *

Բայց սիրս այսօր անդունդ մ'է խաւար,
Եւ հոգիս կուլայ, կուլա՛յ վթառնար...:
Սեւ ու թախծալի գաղափարով նոր,
Անդունդի եզրին նսած գըլխիկոր...
Հարց կուսայ Տըխուր ներաշխարհըն իմ,
— Ապրի՞մ... թէ վիհի մութին մէջ քաղուիմ...:

ՆՈՒԱՐԴ ՕՏԱՃԵԱՆ

Նիւ - Ծար

ԵՒ ՊՕՅԱԾԵԱՆ

ՊԱՏԵՐԱԶՄ ԵՒ ԳԱՄԱԿԱՆԻՐ

Հարիւրուոր ազազ զինուոր էին Բայազի մէջ, Ապլաշի մէջ, Դամասկոսի մէջ: Անշուշա, Մուսաազգի այս զազ-թականներէն զառ - տնօրէ, կիսամերկ եւ ուրիշ զորներու համար տնկարակ - , հին զազթական ուրիշ շատ Հայեր եւս զինուոր էին, Հալեպի մէջ, Պէյրութի մէջ, ձեզիբէի մէջ:

Յզաւ պատերազմ: Հին մարդիկ չախորժեցան: Ետերը՝ լա՛ւ է, ըսին, կրակը երկրի վրայ բաներ կը փոխէ, կը բերէ բողբոջ մահ, բայց նաեւ հոց, բայց նաեւ դրամ, զարծ ու հանդէսա:

Առաջ հետու եւ կարծես սա՛ւս վայրերու մէջ կը ժղուէր պատերազմը: Հեաազբբական էր այդպէս: Նայինք ո՞ր պիտութիւնը աւելի զօրուոր է, ո՞վ շէշ-ձեցնող դիւս մը պիտի ընէ յանկարծ, ո՞վ շատ պիտի սպաննէ, շա՛ս արիէ:

Հետու էր ու հմայիլ: Հրդեհ մը՝ կարծի՛ք կարծի՛ք, բայց կարծես սուս վայրերու մէջ, սուս բանակներու մասնակցութեամբ: Կար ու կը ժղուէր բազմաթիւ հորիզոններէ տնդին, բազմաթիւ սահ-

մաններէ դուրս: Կարծես ուրաւ-ներկայ ժամանակի մը մէջ, արաւ-ներկայ ոչ-խարհազրութեան մը մէջ:

Նւ նաեւ խաշ՛ք խաշ՛ք ու չափազանց ազեղ կատակի մը պէս էր ան, չափանաներաւ ուղիւն, ծաղկեալ ու հին բաղաբարբութեան մը համար խորթ եւ այլեւս ուժաբարբ: Մաղաղ, այլ տնով մասնազ ծաղափուրդներու համար երբեմն անանտական ջայջայում էր, երբեմն մեծ հարստութիւններ զիջելու տնակնկալ, բայց ամէն սր եւ ամէնու՛ն համար՝ թերթ կարգալու գերազանց տխարժակ մըն էր անկատկամ:

Կարծես մարզու տնուններ կը մեռնէին եւ ոչ թէ մարդիկ, կարծես ծոզու վարդի տնուններ կը ատուաղէին եւ ոչ թէ ժողովուրդներ, հողի տնուններ կը գրաւուէին եւ ոչ թէ ասարածութիւններ:

Ճրտնասն ինկաւ. թերթէ՛րը զրեցին: Կիւղին ըսլոր ասարազիբները ալիբեցան: Իրենց երկու տնզամ բարիք ըրած էր ու չափազանց մեծ ազգ մըն էր: Կարեւի՛ք էր տեղաւարել մաղին մէջ՝ որ իրաւ, ինկած է Ճրտնասն: Բայց միթէ

պրտի՛ց աղբ մըն էր Գերմանացին, որ պէտք էրու շԱՄԱՐ թերթերուն գրածը: Զարգացող պարտուր չէ՛ր շիթերը, Գերմանիան:

Ասով հետո էր: Յայտ տեսնումուտի մըն ալ խելոյն մտեցու գտանքադ մը: Հաստ նախիկի զաղթականներու զիւղաբազուկն մտերը, շուրջերը: Հաստ ամէն մարդու սաթն սակ: Այնքան մաս էր այլևս, որ ամէն սառ կընար կոխել սառ կրակին վրայ, ամէն զիթ ձնել զարշիւթ նուիր, ամէն լազու-թին անհունդատանու մաս սխաղ աղ-մուկներէն:

Սուս բան չկար, անուն չէր կրակին հետ կապում ամէն ինչ, այլ բացար-ձակ կրտսերութիւն:

Սուրբոյ ևս Արամանի մէջ Ծրանու մը ուրիշ Ծրանայի մը զէմ կուտեցու: Երկուքն ալ մէն Ծրանաներ էին, երու ու եղբորիան: Եղբու արիւթիւն: Թշու-զանովներ զստացին ընաներու ևս բար-ներու ևսունին: Եղբու զաղթականներու զիւղաբազուրը զանաւ ձնազքներու սըր-տան վայր: Սուսանակներ սուր մայնե-բով սուսը սեղապուցին ճամբաներու վրայ: Գիւղաբազուկն զիշ մը հետու, որտի մը եղբրը, հողաշինցի պզտիկ զինուոր մը երկու երեք կտոր եղաւ: Գամային ճիշտ լավը, հին սալիէ մը մէջ, երեք սեւամարթներ զնապոյրի բը-նըւնցան ու փնայան:

Ու զինուորական հարիւրուոր կա- ջեր մասն զիւղաբազուկն մէջ: Ամէն սեւակ աստիճանուարներ, ամէն սեւակ զինուոր:

Անձկութիւն արեց ձնազքներուն մէջ, ազգակամներուն ու բարեկամներուն մէջ, սրանց ևսկառը զինուոր սնելին: Նշանուած ազիլիկներ զազանորէն լացին, ճամ վտակցին, սխալ քրին: Նարանաբս կիներ ևս մայրեր նայն բաները քրին, ս-ւելի շերտ արտասուքով, սելի լուրջ և պարտուր սխալեր բանաձեւելով:

Էր ամէն ինչ անձկուից, էր ամէն բան զմոզակ:

Երկու մեակի լուրեր եկան նախ:

Ու Ինձիները շտայան ամէն երգիք սակ, ամէն թաղի մէջ:

- Ե՛րբ պիտի վերջանայ:

Ար էր սիրող խաղը, սիրող մաս- մամը, մասուղութիւնը:

Մեանդներն մէկը կարմիր երե- ներով, պրտիկ, շոտ պրտիկ զէմբով աղայ մըն էր, երեսուն սարեկան. սխ- սանները մանր, զիթը մանր, զբարը մա- նրը: Հասուր կարճ էր, ևս մայրը շո- բանակ ուղեկուտ: Ամէն սաստ, կրք զինուորական լայն զտան կապէր ևս սարիկիան սրապղնձու Ֆիւր զնէր սու- կուամաղ զիտան՝ սրայան էր որ յար- նէր էր զժպտութիւնը զինուորական կեանքն զէմ: Ձեր սրեր զինուորա- թիւնը, մարտազգեսն ճամպաններ սու- նէր: Կընէր շուրջ չի միւր քեպն: Կընէր. սեւանի սեղ էր զնն քեպ: Ու կընէր սակաւին. «Հարուսաները կը մը- զնն գտանքազը ևս աղբանները կը մե- նին»: Արաղե, ևս պրտիկ, շոտ պրտիկ զէմբը, Կոնստանին մէջ կ'անէր զը- սանի խաղը, շոտ խաղը արտայայ- տութիւն մը, ամենան կազմէ անանկի, ցարտան:

Միւս մեանոցը թուի էր, սմաբ սու- բան զնալներով ևս միջուտակ: Քա- զաբակն համարումներ շունէր: Արտի, սեղբամ ևս սեւարհուտ մէկն էր, քանը- վից սարեկան: Կը սրէր զինուորութիւ- նը ևս կը խնայր զայն նանր բան մը կարծողներուն վրայ: - Մարգանք քրէ, հայ կեր, գրո՛մ ստացիր, կը փիլիսո- փայէր: Ու կարեւորութեամբ կը շե- սէր. «Տրտինը չկայ՝ կը բուէ»:

Ըտակցու որ մեանն են միտսին, հարիւր մեթը կըտրէ հետու: Գտան- քազը նայն յայտարարին վերանան էր մէկուն սարտափելի զգուսնն ու միւսին սարտափելի զսեւանակութիւնը:

Օրերը կը յաշարգէին իրարու, մը- սասանլութիւնները նմանապէս: - Ե՛րբ պիտի վերջանայ:

Հետուէն, մտէն, կրակը մեծամը- սունչ մայրեր կը հանէր, սակիսուրայ եղան նովու պէս: Անյայտն մէջ, զէպի

հարաւ ու զէպի արեւելք, հրաշէկ նը-
 ւադ մը, հորիզոններու հսկայական ա-
 ղեղին վրայ կարմիր ու սեւ երամշտու-
 թիւն մը: Արիւնն ու սարսափը որոտա-
 ցող իրականութիւններ էին քաղաքներու
 եւ գիւղերու մէջ, ջազացքներու եւ զե-
 ղեցիկ պարտէզներու շուրջ: Սուրբական
 հողը հանդարտ չէր, եւ Լիբանանի զե-
 ղակատոյց ճամբաները յորդահոս դեմեր
 էին զինուորի, զէնքի, զինամթերքի:

Երբ ճակատը բաւական մօտեցաւ,
 դիւղաքաղաքէն շատեր այցելեցին ճա-
 կատի իրենց հարազատներուն: Պզտիկ,
 շէկ մազերով տղայ մը, հազիւ տասնը-
 մէկ տարեկան ու քիչ մը կաշ, լացաւ,
 երբ զինուոր եղբայրը համբուրեց զինք
 ժայռի մը քով ու դրամ տուաւ «Տունին
 համար»...

- Քեզի՛ կարօտցայ - ըսաւ տղան, և
 արցունքները հատիկ հատիկ ինկան զե-
 տին: Աեւբին մէջ բռնած էր թարմ սի-
 սեռի թուփ մը:

Ի՛նչ ալ ըրաւ եղբայրը, պզտիկ շէկ
 տղան չտուաւ դրամը: Հոյս տուաւ: Անօ-
 թի էր: Քիչ ետք սաւառնակներ եկան,
 ոտմբ տեղացուցին, ու պզտիկ զաղթա-
 կան հայ տղեկը, հացն ու սիսեռի
 թարմ թուփը ձեռքին, մեռաւ այդ մը-
 ոսյլ դաշտին մէջ, «մեծ աղբարձին հետ
 միասին, անոր հասա մանթոյին փէշը
 ամուր բռնած ու խեղճուկ: Սքանչի՛ք՝
 կազդիկ Վաշէ, կարօտն ու անօթութիւնը
 ո՛ւր բերին փոքրիկ մարմինդ: Ի՛նչ օ-
 դուտ, ևթէ թունուզցի զինուորները յու-
 զումէն քարացան ժամը տասի արեւին
 տակ. ի՛նչ օդուտ, եթէ մալկաշ ենթաս-
 պայ մը երկինք նայելով վայրենի ա-
 տամնաշարով մը, կարծես աշխարհի բո-
 լոր արեգակներուն հայհոյեց: Ի՛նչ օ-
 դուտ... Ձինուորական կառքերը կ'անց-
 նէին նորէն, հրասայլեր կը թաւալէին,
 հսկայ թնդանօթներ ահազին ազմուկով
 կը մեկնէին ճակատ:

Եւ հորիզոններէն խորացող աղմուկ
 մը կու գար...



Պատերազմէն առաջ, նետած էին

Միսաքը եւ ուրիշ երկու ձէպէլ-Մուսա-
 ցի տղաներ զինուորական պզտիկ զէմբի
 մը մէջ եւ կարծես մոռցած: Իրենց հետ
 կային քանի մը աստիճանաւոր ծրարա-
 ցիներ, երկու թունուզցի տասնապետ եւ
 տասնեակ մը արար զինուորիներ:

Փոքրիկ զիւղաքաղաքէ մը անդին
 էր զէմբը, ձէպէլ Եէյիթի ստորտը: Ձին-
 ուորական քանի մը ընդարձակ պարազ-
 ներ, տոտա թղեհի եւ սակաւաջուր առ-
 ուտի մը: Յաջորդ առաւուտ դուրս ե-
 կաւ որ զէմբին բնական հարստութիւն-
 ներուն վրայ պէտք է աւելցնել նաեւ
 ուղտի չափ հուչակաւոր ուրիշ բան մը,
 - ոչի՛լը: Որտ մեծ եւ դժնդակ ոչիլներ
 էին ասոնք, ճիրանաղնաց եւ ստպատա-
 ւոր, որոնք իրենց բարձր հովանիին ասկ
 առած էին զինուորական այս հեռաւոր
 կայանը:

- Ես ազարի՛տ - կը հայհոյէր դա-
 մաւորացի թուխ Մուսթաֆան ոչիլնե-
 բուն, - ձէպէլ Եէյիթի չափ են, ի՛նչ պի-
 տի բնենք: Եւ անոնցմէ մէկը ափին մէջ
 դրած կը սկսէր դերասանութիւններ ը-
 նել եւ սիրային երգեր երգել անոր:

Ոչ ոք տրեք զէմբը առաջին մէկ օ-
 բէն: Ջուրը անհամ էր, կանաչութիւնը
 միջակ: Տաղտկալի տեղ մըն էր, աշխար-
 հէն հեռու: Բայց այդ տեղը ատողներուն
 մէջ ախոյեան հանդիսացաւ Միսաք, որ
 փոխանակ հոս եւս իւնալը եւ կատակա-
 բանութիւն խառնելու իր ատելութեան՝
 խառնեց անոր մալաբիա եւ դաման զեղ-
 նութիւն՝ ամբողջ զէմբի: Ջորս ամիս
 դոցաց, զատանցեց, կծկուեցաւ, յօրան-
 ղեց: Տարբեր էին միւս զինուորները: Ե-
 նովք իր ատելութեան կը խառնէր քիչ
 մը լաւ բան. -պատյոս եւ զիւղաքաղաքի
 սղջիկ: Վահրամ, երբ աշխատանք չկար,
 կը խառնէր անոր բունն որորդութիւն,
 Համացի Մահմուտ բարութեան ժպիտ
 կը խառնէր իր ատելութեան, իսկ զը-
 ւարթաթոս Մուսթաֆա՛՛ կրդ:

Թունուզցի տասնապետներէն մէկը,
 խոհուն եւ տգէտ՝ օրը հինգ հարիւր ան-
 դամ Ահ, oui ! կ'ըսէր, ներքին սարսա-
 փելի անստուգութեան մը մէջ, եւ կըլ-

ուազ սիկարէթին ծուխը կը ծծէր ներքին թունուզի մը հաշուոյն: Կ'երազէր կը հայտնէր, ջգային էր: Մտերիմ վայրեր ունէր թունուզի մէջ, մտերիմ անձեր: Ու կարօտ, Ah, oui ! կարօտ...

Միւս տասնապետը նուազ թխամորթ էր. միջահասակ էր եւ շատախօս. առոր թունուզը խորունկ չէր, անսպառ չէր. մակերեսային թունուզ մըն էր եւ քանի մը պղտրիկ բաներէ կեռ, պղտրիկ բանի մը պէս կը վերջանար յանկարծ. հոգիին հասած ու հոգի ելած երկիր մը չէր. իր առաւելագոյն արտայայտութեան մէջ իսկ, տրտունջի բառ էր միայն ու տրտունջի պարագայ շարժումէ:

Առաջին ժառանգեալը մասականը կը յատկացնէր թունուզի սիրոյն ծիւղած կոլուազ սիկարէթի եւ նորէն թունուզի սիրոյն սիրուած հանրակիներու: Հայրենիքը հոգիին հասած հոգի էր մէջը: Երկրորդ ժառանգեալին մասականները կը մնային անխաթար: Ոչ մէկ հայրենիքի զգրու էր այս զինուորին մասականները մաշեցնելու:

Մանր ու տաղտկալի տեղ մըն էր զինուորական զէմբը: Ուրախ մարդ չըկար զոն: Քէմբին բարձրագոյն աստիճանաւորը անխառն-շէֆ մըն էր, կապոյտ աչքերով գառն մարդ մըն էր ասիկա: Երբ ժպտէր՝ արցունքի պէս բան մը կ'երեւէր աչքերուն մէջ: Բարի բան մը չէր ասիկա, տաք ու տրտում, այլ ստոն, սառուցիչ, երկիւզարեր բան մը: Կը նշանակէր, որ մարդը շատ ջլաշնացած է, աշխատանքներէն զո՛ւ չէ, եւ կը փնտռէ յանցանք գործած զինուոր մը, որ խտտօրէն պատժէ: Իրեն գործակից երկու սերժանտներ ունէր: Փարիզցիին կարծուկ էր եւ կոկիկ, ամէն օր ամիլուտը. միւսը հարաւային Ֆրանսայի շրջաններէն էր. գէր էր, մառլլ եւ հոգի հանող աշխատանքներ կը պարտադրէր զինուորներուն: Մահմա՛տ, - կ'ըսէր, եւ Մահմա՛տ գիտէր որ մինչեւ կէսօր բրիչ պիտի շարժէ առանց շունչ առնելու: Կը ժպտէր ճարպայեղջ սերժանտին եւ բարակ պէխներու բարի՛ բարի՛ ժպի-

տով կ'ատէ՛ր դայն: Կար նաև Ֆրանսացի տասնապետ մը, որ ափրիկեան երկայն Ֆէսը գլխուն՝ կը զմաղէր Ֆրանսացիներու ճաշով. կը կոտորէր ամաններու մէջ հաւկիթ, կը մաքրէր դիրուկ հաւեր ու քէմբին շունները կը տանէր պտոյտի: Յետոյ Միսսօնի քով կու գար, հեռաձայնին սենեակը, գովքը հիւսելու Մահարայի Քըլարկներուն եւ հիւսիսային Ափրիկէի Բուս-Բուսին (փիլալ)...



Չորս ամիս Միսսօն մնաց ձէպէլ Շէյխի ստորոտը: Առաջին երկու ամիսը անցուց հիւանդութեամբ, Դամասկոսի զինուորական հիւանդանոցը տասնընչորս օր պառկելով, քանի մը Ֆրանսերէն գիրքեր կարդալով այնտեղ եւ Օտար Լէզէոնի հիւանդ զինուորներուն սիրոյ, պատուի և ոճիքի պատմութիւնները մտիկ ընելով: Հիւանդանոցէն ետք, վերադարձաւ զէմբ եւ դիտեց հորիզոն:

Երբ փարիզցի կոկիկ սերժանտ մեկնեցաւ Ֆրանսա, անխառն շէֆը Միսսօնը ըրաւ հեռաձայնի ամբարշտապետ: Ատկէ ետք էր որ իսկապէս ադի ջուր քամուկեցաւ Միսսօնի բերնին: Հանգիստ եւ քուն ըսուած բաները ծիծեռնակներու պէս գաղթեցին. ջուր թափել մը իսկ դարձաւ վտանգաւոր, մանաւանդ երբ չէր քէմբերու Լաֆարոնը գիւղաքաղաքը իրեն կեղրոն ըրած՝ սկսաւ ամառամուտի իր ուղեւորներուն: Այլօ, այլօ... եւ Միսսօն մաշեցաւ:

Որչա՛փ կ'ատէր Միսսօն միջակ կանաչութեամբ այդ զէմբը, որչա՛փ: Բուլը զինուոր ընկերները Ապրիլ էին կամ Բայազ, զաղթականներու իրենց գիւղաքաղաքին մօտ, կերակրի արձակուրդը հայրենակիցներու մէջ անցընելու բարեբախտութեամբ մը: Կը տեսնէին գիրար, կը տեսնէին ազգական եւ ծնոյք: Մինչ-դեռ ինք...

Միտակ քանի մը անգամ դրեց իրեն միսթարական բաներ, որոնց պատասխանեց անհամ տողերով ու յետոյ լը-

սեց: Այդ սպուշ տեղէն ի՞նչ զրէր: Կրնար հետաձայնով խօսիլ, բայց արամադրութիւնը լաւ չեղաւ որ: Ատեց յայտնամ կեանքը եւ սպասեց:

Յետոյ սկսան պատահիլ արագ բաներ, մեծ եւ տխուր բաներ, որոնք ուրախացուցին արամադրութիւնը: Ուշ զիշերին, Միսաք մտիկ կ'ընէր դադանի ու մեղմ խօսակցութիւններ հեռախօսին մէջ, որոնք տեղի կ'ունենային զինուորական պատասխանատու սպասարկութեանց միջեւ: Բանակին մէջ զաստիճաններուն թիւը կը շատնար, կ'անցնէին տը կօլիստներուն կողմը, մանաւանդ զնշապետ Բօլջի փախուստէն ետք:

Եւ քաղաքական հորիզոնը մթաղանցաւ հետզհետէ, եւ անգլիական սաւառանակներ պտտեցան Փրանսական զօրակալաններու վրայ: Բայց ուժակոծուեցաւ: Ամառնամուտի լուսաղէմի մըն ալ քէմբի սանթրալին դանդը հնչեց. չէր քեղներու Էօմանտանն էր ուզուողը, Դոմասկոսէն: Միսաք մտիկ ըրաւ: Կը հաղորդուէր պատերազմի յայտարարութիւն: Անդլիացիներն ու տը կօլիստները մտած էին արդէն Սուրիա: Միսաք անհամբեր սպասեց արեւածագին, լուրը քէմբի տղոց հաղորդուեւ համար: Ուրախ էր, պիտի ազատուէր միջակ կանաչութեամբ այդ տեղէն, հոգ չէ թէ պատերազմով:

Արեւածագին, իր տուած լուրին հետ քանի մը զինուորական կառքեր եկան: Առաւօտը թարմ էր, եւ սակաւաշուր ատուակը զլզլալով կը հոսէր զինուորական պարագաներուն ջովէն:

Մտան կառքերուն մէջ: Երեք Հայերը ուրախ էին. զուարթօրէն կ'երգէին «Մենք անկեղծ զինուոր ենք»: Անիւտան Ղեֆը, սեսնելով Հայերուն զուարթ արամադրութիւնը, ըսաւ ճարպայեղձ անբժանին. «Թիւրիմացութեան մէջ են սա հայերը. կարծես ասոնց հարսնիքի լուր մը հաղորդուած ըլլայ, փոխանակ պատերազմի»:

Հասան Դոմասկոս: Բոլոր զօրանցներուն զինուորները դուրս թափած էին:

Հրամայուեցաւ իրենց երթալ հարաւ, գտնել ափրիկեամ որսորդներու 7-րդ ընծիմանը:

Ու անհամար զինուոր կար հարաւային Սուրիոյ ճամբաներուն վրայ, ու փոշի կար ու արեգակ: Հնդկաչինցիներ կային, սեւամորթներ, օտար լէգէոնականներ՝ - Ձեխեր, Լահեր, Սպանիացիներ:

Այդ զիշեր, քանի մը ժամուան համար Միսաք եւ ընկերներէն շատեր դըտան զիրար, յետոյ բաժնուեցան դանդան գործերու եւ սպասարկութիւններու մէջ:

Յաջորդ օրը, յետմիջօրէին, կատակը վերջացած էր, լուրջ էր այլեւս ամէն բան, թիւրիմացութիւն չկար: Սաւառանակները թուցիկ չէին նետեր, այլ երկաթ: Ու մարդիկ գինի չէին խմեր միայն, այլ նաեւ կը մեռնէին: Այլ նաեւ զէնքերուն երաժշտութիւնը շար էր ու դժնդակ: Ու Միսաք տեսաւ մահը Լեւոնին, որ կարմիր երեսներով եւ պղտիկ, շատ պղտիկ դէմքով երիտասարդ մըն էր, զինուորութիւնը չսիրող, բայց որ մտաւ զինուորութիւնը պաշտող Գուրգէնին հետ, որ ամուր ու բուռն զնդերներով տղայ մըն էր:

Գրեց Միսաք Միսակին, բայց լուրեց հաղորդել Լեւոնին եւ Գուրգէնին մահուան լուրը:

- «Միրելի Կարնս,

Տեղէս դժգոհ էի եւ չգրեցի քեզի: Հիմա հազարաւոր զինուոր մարդոց հետ խենթ բաներու մէջ ենք: Թիւրիմացութիւն չկայ, կոխ է, պատերազմ, իրական դժբախտութիւն: Մարդիկ շատ են չորս դիս, բայց թիւրիմացութիւն չըլլայ, բնաւ եղբայրութեան համար չեն հաւաքուած. հրահանգուած է, որ իւրաքանչիւրս ուրիշ մարդեր սպաննենք: Որչա՛փ հրացան կայ ամէն կողմ, որչա՛փ թնդանօթ, որչա՛փ հրասայլ: Կը նայիմ հրացաններու փողին, թիւրիմա-

ցութիւն չկայ բնաւ, սիրելի Կարճս, այս
Հրացանափողերը անաւոր գործերու հա-
մար ստեղծուած են:

Կը ժպտինք, կը խնդանք, երկրորդ
օրն է կռիւներուն եւ արդէն անբանցած
ենք:

Եղբայրակամ համբոյրով՝
ՄԻՍԱՔ

Գրեց Ղազարի մը քովէն.

— «Սիրելի Կարճս,

Պատերազմը ոչ լաւ բան մըն է թե-
րեւս եւ ոչ ալ դէշ բան մը: Կե'նք բան
մըն է, խենթ ազահութիւն մը: Մարդի-
կը կը հանէ բարութեան նարիկին կեց-
ուածքէն, թաղաղութիւնէն, խոնարհու-
թիւնէն, աւօրեայ մանր շարագործու-
թիւններէն, որոնք կեանքը բարելաւելու
համար անհրաժեշտ շարժումներ են հա-
ւանաբար: Կը դնէ թեղ պատերազմը պե-
նով կացութիւններու մէջ, անասնական
բաներու մէջ, բազմաթիւ արագութիւն-
ներու մէջ:

Թերեմացութիւն չըլլայ. պատե-
րազմը ժպիտ չէ, ժողովուրդներուն ժը-
պիտը չէ եւ ոչ ալ անհատին: Բանի մը
ժպիտն է ան, որուն իսկութիւնը կ'ան-
գիտանանք: Պատերազմին ժպիտը տար-
բեր բան է. եթէ բանաստեղծ մը ըլլայի,
պիւրքեր պիտի գրէի այդ ժպիտի մասին.
Գիտեմ միայն որ կըրակի ստեն երբ զին-
ուորը ժպտի, քաջութեան պէս բան մը
կը տեսնես մէջը, որ թերեւս իրականին
մէջ քաջութիւն չէ, ալլ ախորաջած հո-
գիէ մը անասունի մը դուրս գալը: Ի՞նչ
օգուտ, Կարճս, բանաստեղծ մը պէտք
էր ըլլայի որ գրէի: Բարեւներ գիւղա-
ցիներուն, մեր տղաներէն ոչ նոր վերա-
ւոր կայ եւ ոչ ալ նոր մեռել:

Համբոյրման
ՄԻՍԱՔ

Պատասխանի պարտագներէն:

Սիրելի Կարճս, Միտակ,

Կրակի գիծին ետին ենք, պարտէր-
ներու մէջ: Ձիւնուորներ հոն պիտրար կը

մեռցնեն. մենք ալ հրացան եւ համազ-
դեստ ունինք, բայց փոխանակ կռուե-
լու, նստած ենք ծառերու տակ եւ կ'ու-
տենք ծիբան, սպասելով կռիւններու ել-
քին:

Երկու տեսակ մորանացիներ եւ Ան-
դրէիացիք կռիւ կ'ընեն: Տխուր է: Եղբայր
մարդ իր ազգակիցին դէմ ի՞նչպէս կըռ-
ուի. կա՞յ բան մը որ աւելի թանկագին
ըլլայ քան երկու եղբոր եղբայրութիւնը:
Ուրեմն կեանքին մէջ կան մեզի ծանօթ
դժուարութիւններէն շատ աւելի դժուար
բաներ, սիրելի՛ Կարճս:

Բայց եւ այնպէս յտակ է. օտար
հողի մը վրայ, որ բարի Արամներուն
դարաւոր հողն է, Ֆրանսացիներն ու ի-
րենց մեծ դաշնակիցը իրար կը յօռտեն:
Արարը կ'ուզէ՞, ան է տանտէրը, կ'ու-
զէ՞:

Բայց պիտի ըսես՝ — խենթ Հայու
կտոր, թեղի հրացան մը տուեր են. հը-
րացանը ձեռքիդ՝ արդարութեան մասին
այսքան մտածելու ի՞նչ հարկ կայ. ա-
մէն ինչ կարելի է վերջը մտածել: Ա-
ռայժմ նայինք այս խենթութիւնը ո՞ր
պիտի հասնի: Թամպուրածիները հիմա
անապատներուն մէջ կըրակէ թամպուրա-
ներով կը պատին:

Տղաքը լաւ են, շարիք չէ պատա-
հած:

Համբոյրման
ՄԻՍԱՔ

Յ. Գ. — Լեւոնին եւ Գուրգէնին մա-
հերը իմացաք անշուշտ: Պատերազմը
լա՞ւ է:

ՆՈՅՆ

Բլուրի մը ստորտակն:

Սիրելի Կարճս, Միտակ,

Դուն այդտեղ ճահճներ կը շորցը-
նես, մալարիտի դէմ կը կռուես: Մա-
քուր պատերազմ մըն է ատիկա, օգտա-
կար կռիւ մը: Մէջը հերոսութիւն չկայ,
բայց կեանքի վերաբերեալ մեծ շահ մը
կայ: Արդէն մարդ ըսածդ պէտք է կը-
ռիւ ընէ իր նմաններէն դուրս թշնամի-

ներու դէմ, որոնք մեր խելքը շունին եւ որոնց հետ հասկացողութեան գալը անկարելի է: Բայց մարդը մարդուն դէմ կռիւ, ահա որ խենթութիւն է: Խելքը հասկացողութեան համար չէ: Մարդիկ պէտք է յարգեն զատուցութիւնը եւ նեղը մնացած ատեն դիմեն անոր: Դատուցութիւնը իրաւունքներ կը ճանշնայ, բարի ազատութիւններ կ'արտօնէ, արդարութիւնը տեղաւորելու միակ զործիքն է ի վերջոյ: Խելքը ուժին ծառան ըրած են, զայն ուժին տէրը պէտք էր լնէին: Այս ձեւով միշտ սխալ պիտի ըլլայ, թիւրմացութիւնները պիտի չվերջանան եւ բոլոր սերունդները պիտի մեռնին, որովհետեւ խելքը դիտէ իսկ ուժը բան չի գիտեր, կոյր է: Բանաստեղծները ըստ՞ծ են արդեօք, սիրելի՛ Կարճս, որ ուժը կեանքին արդարութեան մէջ ամպամած գիշեր մըն է, իսկ խելքը արեւակայլ ցերեկ մը: Պէտք էր ես շատ կարգացած ըլլայի, շատ...:

Բան մը չկայ. կարծես մեր պատերազմը շատ չի տեսեր. կեցցէ մօեզ ըսպանող ձեր մազութիւնը. քննի՛ մը համբուրէ իմ կողմէս, քննի՛ մը, Կարճս:

Ստացաւ Միտաք նամակ.

Սիրելի Միտաք,

Խորունկ խորունկ բաներ կը մտածես: Պատերազմ ընող պիտուրը երեւի կը ստիպուի մասծել: Նաեւ խենթ բաներ ալ կ'ըսես: Խենթ խօսքերն ալ երեւի պատերազմէն կու գան, խորունկ խօսքերուն հետ: Լաւ է: Դո՛ւք հրամայեցիք կռիւր: Ո՛չ: Մեզքը պատճառ եզոյններուն վիզը: Յաւալի մահեր եղան, եւ զիւղաքաղաքը մտահոգութեան արխուր վայր մը դարձած է այս օրերուն: Մարդոց ճակատները վախով փոշոտած ճակատներ են: Լեզի տուններ շատ: Ամէն տուն քիչ թէ շատ լեզի է: Հիմա փիլիսոփայօրէն մտածողի մը քով անպայման լեզի ծնողք մը կայ, լեզի կին մը, լեզի մարդ մը, լեզի աղջիկ մը, լեզի մանուկներ, Բայց բարեբախտաբար ամէն լեզի անձի քով ալ անպայման փի-

լիսոփայ մը կը գտնուի. փիլիսոփայ ազգական մը, փիլիսոփայ բարեկամ մը, փիլիսոփայ ծանօթ մը: Հոս դառնացող մը հոն միթէրող մըն է, եւ ատոր համար ալ կեանքը չի փլիւր:

Կրնայ ըլլալ որ բարեքներ ծնին այս դէշ բանէն:

Համբարձրներ՝
ՍԻՍԱԿ

Ստացաւ Միտաք ուրիշ նամակ:
Այնքարի ճակատներէն

Սիրելի Միտաք,

Կէսօր է: Մօեզներու մեր էփիլը նստած է ճահիճը մը եզերքը: Որչա՛փ պղտոր ջուր: Ամէն ինչ մզլած, ամէն ինչ նեխած: Մօեզներէն ոմանք կը նընջեն, ուրիշներ բարկ արեւի մը տակ կազուկեկ ամպ մը կազմած՝ կը շարժին: Զեր բանակին թնդանօթները կը զոտան, թշնամի սաւառակներու ձայն կայ Բայրազի վրայ, այլ մենք այստեղ տիղմերու եւ աղմարոյսներու վրայ մաղութի կը թափենք, փճացնելու համար մօեզի անհամար ձուները: Մենք լաւ բան մը կ'ընենք: Դո՛ւք...:

Վերջին հաշուով լաւ բան մըն ալ դուք կ'ընէք, դուք եւ ձեր թշնամիները, ըստ երկու կողմի հրամանատարութիւններուն: Հայրենիք կը փրկէ՞ ըստ քաղաքակնիւթեան եւ անոր մեծ մեծ փիլիսոփաներուն: Մեզ հոս ո՛վ բերաւ արդէն եթէ ոչ այդ փիլիսոփաները: Զմեզ զաղթական ըրին: Ուրիշի մը ժպտին համար մեր արիւնն ու իրաւունքը անարդեցին: Ու հիմա պատերազմ կ'ընեն: Ու հիմա ատելութիւն բերած են հոս. բերած են կրակ, ահ եւ մահ: Ծիշչի ու սխալը իրենց թող մնան, միայն շատ Հայեր զոհ չտայինք:

Եղբայրաբար՝
ՍԻՍԱԿ

Յ. Գ. - Գէշ լուր մը: Շատ պիտի յուզուիս: Այնպարհի բոլոր գլուխները առջեւը դիզած այն պառտուր երէկ թա-

զեցինք: Եռզարկաւորութեան ներկայ եղայ եւ քու կողմէդ ափ մը հող նետեցի վրան: Զկրցայ արցունքներս զսպել: Մեր կատակի օրերու Քիվերկն մէկն էր անհետացողը:

ՆՈՅՆ

Ստացաւ Միսաք Յորդ նամակ մը, Զուրի մօթօրին քովէն:

Սրկայն եղբայր,

Նոտած եմ մօթօրին տնակին քով, ժայռի մը տակ, ուր կը նստէինք երբ այստեղ էիր դուն եւ ուր անշուշտ պիտի նստինք տակաւին ու խօսինք հայ ազգի մասին տարօրինակ եւ տխուր բաներ, տարօրինակ եւ ուրախ բաներ:

Առտու է: Չեմ ըսած որ լեցուն զինուոր եւ ինքնաշարժ կայ զիւլիին մէջ պատերազմի առաջին մէկ օրէն: Բայց թերեւս արդէն լուր ունիս: Զինուորները ատոտուան նախանշուր կ'ընեն. յետոյ շատեր ուննցմէ նախատ պիտի մեկնին: Բան մը կայ սակայն. եթէ ձեզի ալ նոյն բանը կը պատահի, ջղայնացուցի՛չ է: Ամէն անգամ որ խեղճերը բան մը պիտի զննն բերաննին, սուստնակները կուզան եւ կը խանդարեն: Անտանելի բան է, եղբայր: Ուրիկէ՞ լուր կ'ունեն. ուտելու ժամ եղա՞ւ, մէկ ալ տեսնես երկինքը տանիկ կը դառնայ. կոկորդի ճանդիտս կտոր մը հաց պիտի չմտնէ: Հաւատա՞ որ մահը այնքան չի յուզեր զիս որքան հացի այս խանդարումը: Ո՞վ իրաւունք ունի մարդու մը կտոր մը հացը խանդարելու: Զգուելի միջոց մըն է ափկա կ'ըսեմ, եւ եթէ կ'ուզեն թող այս ըսածիս համար գլո՛ւխս կտրեն: Քաջութիւն չկայ մէջը բնաւ, պզտիկութիւն եւ դաւաճանութիւն կայ միայն: Երեւի կ'ուզեն որ զզուիս պատերազմէն եւ պարտուիս: Բայց արդէն պատերազմը շա՞տ ուզող ունի. բուն ուզողները այսպէս դուրսե՞րն են, զէնք կրողներն են, թէ հանգիստ հանգիստ պալատներու մէջ բնակողները: Զգուելի ձեւ մըն է: Ահա

եկան, չըսի՞:

...Այսպէ՛ս է միշտ: Սաւառակները անցան:

Պատիկ բուն մըն ալ կայ, զարմանալի եւ ուրախալի: Եթէ ուզեն շատ մարդ կը մեռնեն եւ ինքնաշարժ չեն ձգեր: Արդեօք ձրանսացին ձրանսացիին եւ Քրանսական գոյքերուն կը խնայէ՞, Կըրնայ ըլլալ: Ամէն պարագայի տակ թեթեւ միջոցառութիւն մըն է: Կ'ըսեն որ այս խենթութիւնը շատ չի՛ տեսեր: Երանի թէ: Թերթերը գրեցին թէ Ռուսերն ալ պատերազմի մտած են: Այս ի՛նչ վարակիչ բան է պատերազմը. եղբայր, ազգ պիտի չմնա՞յ, ամէնքն ալ պիտի կռուի՞ն:

Շա՛տ տխուր է սիրտս: Հայաստանն ալ: Ափ մը պանդուխտներու համար՝ պատերազմի դժուարութիւններ եւ մահ. անպին նոր տուն եղած Հայեր՝ եւ աւելի՛ դժուարութիւն, եւ աւելի՛ մահ: Հոգիս նեղ է. երկիրը կ'այրի, եւ երկինքը բարի չէ: Այս բոլոր մեծ բաներուն մէջ, շար եւ անսահման, կարճուկ հայ երիտասարդ մը եղիք եւ ամէն օր զնա ճահճներուն մէջ փոքրիկ բարութիւն մը ընելու: Գործերուն զգուելին՝ մե՛ր գործն է: Մտե՛ղ սպաննել: Խօսքերէս դուրս, դիտես որչափ բարի եմ. բայց խոստովանիմ, Միսա՛ք, որ այսքան շատ շարիքներու եւ անխղճութեանց մէջ, սկսած եմ ամենալ անմիտ բարութիւնն, անմիտութիւնն: Կ'ըսեմ ես ինձի. «Ամօթ է, եղբայր, անմեղ մը ըլլալը մեզաւորներու մէջ, բարի մը ըլլալը շարիքուն մէջ»: Ահա աշխարհը կուր կ'ընէ, կը յոգնի, կը մեռնի, հոկայական բան մը տեղի կ'ունենայ, եւ դուն փօժիտ մը ունիս եւ դիմացդ մտեղներդ:

Միսաք, շատ զէչ է վիճակս, շա՛տ: Լաւ կ'ընէ թէ գէշ՝ չեմ գիտեր, բայց գիտեմ հիմա որ մարդոց հաւաքականութեան պատմութիւնը մարդոցմէ արիւն եւ դժբախտութիւն կ'ուզէ, զրկանքներ կը պահանջէ, եւ երակներս ազա՛տ կացուցուած են, արիւնս անպէտք եւ տուրքէ զե՛րժ հոչակուած է: Վտանգէ հետո

եմ եւ կը գտնեմ ինքզինքս բարի, աշխարհը չար՝ - ի՞նչ ամօթ բան:

ՆԱԲԱՅՐԳ՝
ՍԻՍԱԿ

Յ. Գ. - Կէս ժամ առաջ խուճբ մը գինուորները գնդացիքի բռնուէր են սուսառնակներու կողմէ, Սթապլի մէջ: Հնդկաչինցի կառապանները հոն էին: Կ'ըսուէր որ չորս հօգի մեռած են անոնցմէ: Խեղճ ղեղնուկ մարդիկ, հեռուոր Հնդկաչինի ղեղնուկ մամաները ձեզ Սուրիոյ համա՞ր աշխարհ բերին: Հնդկաչինի խեղճ ղեղին մամաներ, խեղճ ղեղին կիներ, խեղճ ղեղին քոյրե՞ր, ղեղին նշանածներ: Եսլլա, վերջը բարի բլլա՞յ:

ՆՈՅՆ

Ու պատերազմը շարունակուեցաւ: Ու ճակատին վրայ գինուած մարդիկ աւելի անասնացան, բթացան, անբանացան: Ու պանդուխտ Հայերուն գիւղաքաղաքը հազար միասնեակ տնակներով օրէ օր աւելի տիրեցաւ: Կծկուեցաւ սամենուն մորթը, ամենուն հողին:

Ըսուեցաւ որ գինուորներ կը փախին բանակէն: Փախան: Ըսուեցաւ որ բանակը կը նահանջէ: Նահանջեց: Ըսուեցաւ որ բանակի զոյքեր կը կողոպտուին: Կողոպտուեցան: Ըսուեցաւ որ երկու օր վերջ կրիւները պիտի վերջանան: Զվերջացան:

Գրեց Միսաք Միսակին: -

Մերելի Միսակ,

Աչտին եւ իր կաղիկ պարտիկին մահը իմանալով, աշխարհը աչքէս ե-

լաւ: Անուշ տղայ մըն էր մեր Աչտը, գիտես, եւ անուշ մանչուկ մըն էր Վաչէն, կաղիկ, բարի ու կրակոտ: Կը մըրտածեմ շարունակ իր ծնողքի մասին. սոմէն բան կ'լած է աչքէս, ելա՛ծ: Վաչն իսկ եկողի մը հետ քեզի կը դրկեմ հարիւր սակի, գինուոր ընկերներէն հաւաքեցի. ձեւը դտիր եւ հանդուցեալ Աշտի ծնողքին յանձնէ այդ գումարը: Մենք պէտք է այդ ընտանիքը պահենք, մինչեւ որ նայիք ի՞նչ կ'ըլլայ: Գրելիք չունիմ, եւ կարծես շատ չին տեւեր պատերազմի ապուշութիւնները: Ըլլար այնպէս, որ մեր պզտիկ պատերազմը վերջանար: Վերջանար յետոյ մեծ, ընդհանուր պատերազմը, ու վերադառնայինք խաղաղութեան: Վերջանար տարագրութիւնը, ու վերադառնայինք տուն: Որչափ կարօտցած ըլլամ ձէպէլ-Մուսային, այլեւս հոն չէ որ կ'ըլլ փափաքեմ վերադառնալ, այլ Հայերուն հին ու հարազատ տունը: - Հայաստան: Թող Հայաստանը կանչէ այլեւս իր պանդուխտ որդիները ներս, եւ թող Հայերը կանչեն իրենց հազարամեայ հայրենիքը, բախեն դուռը, ուզեն, պաղատին, պահանջեն ներս մտնել՝ սիրոյ, աշխատանքի եւ հանգիստի համար: Յաջեցան մեր ուրբերը զէչ ճամբաներու մէջ: Մեր ախանջը օտար բաներով լեցուեցաւ, մեր սիրտերը տխուր են, եւ հողիները անհանգիստ: Ներս, Միսակ, ներս, Երկրէն ներս: Պուշուրիկ, ոչ-պուշուրիկ ապուշ բաներ են, անցնող բաներ են, Հայն է որ չ'անցնիր, կը մնայ: Նե՛րս:

Հագար կարօտով՝
ՄԻՍԱԿ

Ե. Գ.

(«Միսակ եւ Միսաք»)



ԱՐՍԷՆ ԵՐԿԱԹ

Վերադարձ

Վերադարձ եւ դարձեալ մեկնում, մինչեւ որ այլեւս ճամբայ չըլլայ վերջին համգրուամէն անդին. մինչեւ որ ձայները լսելի չընեն կամչ մը հրաւերի. մինչեւ որ բարի ձեռք մը մեղմօրէն իջեցնէ մեր արտեւանումքը աշխարհի տեսիլներում դէմ:

Բայց անա՛ կեանքը ներկայ է ամենուրէ՛ք հրեղէն գորութեամբ եւ փոքորկաշունչ կայտարդանով, հակառակ վիշտերուն, հակառակ հետզհետէ բազմապատկուող սուգերուն: Անոր ծիրանին կը ծածկէ դեռ գեղեցիկ եւ սգեղ մերկութիւնները: Անոր սկի ծնծղաները կը ենչեն յուսանեղեղ առաւօտներու գարբումին մէջ:

Կա՞յ անհամբեր սպասումը այդ առաւօտներուն համար, երբ գիշերակամ հսկումները այնքան թախիծ կը բերեն մեզի:

Կա՞յ ողջոյնը բարձրագագակ, երբ յաւիտեակամ լուսօրէնը կընփած է այնքան քաղցրամրմունց շրթունքներ:

Ես վերադարձայ հոն՝ ուր լեռներու խաղաղութեան մէջ կը յուսանի սպիտակ գտնել երբեք չգոցուած վերքերու համար:

Ես վերադարձայ ծառերուն, անոնց սօսափին մէջ նոր պատգամներ լսելու, եւ հաղորդուելու համար մեռած աստուածներու յիշատակին հետ:

Բայց ո՛չ ոք ինծի կը սպասէր: Հանգրուանը ամայութեան ոգիներուն ձօնուած անբակ մեհեան մըն էր կարծես:

Ո՛չ մէկ ձայն եղբայրական երաւեր մը եղաւ: Ո՛չ մէկ նայումք էր կարօտաշող լոյսը թափանցեց հոգիիս խաւարին մէջ:

Ի՞նչ փոյթ. քանի որ տարիները սահեցան եւ անոնց խորհրդաւոր գորութիւնը էին ճամբաները բացաւ դարձեալ, որպէսզի ուղեւորը ամնայար հասնէր եւ անցեալը վերադարձնէր անոր՝ յուշերու տխրութեան հետ՝ նաեւ քաղցրութիւնը ժամանակի ծովուն վրայ նաւարկուած արեւներուն:

Առանձին մնալու վայելք չէ, որ կը պղտորէ զգացուած բերկրանքին պայծառութիւնը: Ո՛չ մէկ ատեն բոլորովին մեկուսացած ապրեցայ: Ո՛չ մէկ ատեն խզուեցան շրթանները՝ որոնցմով կապուած մնացի միշտ զիս շրջապատող կերպարաններուն:

Վախը, որ այլևս կարելի պիտի չըլլայ արբենալ այն բաժակներէն՝ որոնք երբեմն լեցուցան թարեկամ մատուակի մը ձեռքով: Որ այլևս պիտի չչողայ ճրագ մը արտագին հրաւերով, կարօտաջեր տան մը սեմին վրայ: Որ այլևս պիտի չբացուի մատեան մը՝ որուն մէջ մանկութեան հրաշալի գրուցը կը պատմուի բազմաթիւ անմեղութեամբ: Վախը, որ այս ծառերը պիտի բարանան դաժան ոգիի մը հրամանով, եւ այլևս ոչ մէկ պատգամ պիտի խոստանայ ինծի աստուածուհիի մը ժպիտը:

Հակառակ ամէն բանի, ահա՛ եկած եմ լիքանանքեան այս գիւղը՝ ուր եկած էի նախապէս եօթը տարի առաջ: Փոխուած ոչինչ կը տեսնեմ: Հագի՛ս է, որ մթագնած հայելիի մը մէջ կը տեսնէ իր ցոլեկը: Հոգիս է, որ մոռցած է բառերն այն ազօթքին՝ որուն մէջ մանկութեան վարդերը կը բուրբիմ:

Իրիկուան դէմ, երբ արեւին բոցը կը մոխրանաք ծովուն վրայ, պտոյտի ելայ դիմացի անտառը:

Ձեմ կրնար երեւակայել անտառ մը առանց հզնիկներու: Ծառէ ծառ հայկերս կ'առաջնորդէին զիս եւ ստուերաշող թերեւտան տեսիլներ փայլող այծեամենքու կը կախարդէին մթնոլորտը:

Հասայ արանետ մը ու գտայ ապառաժի մամուկապա բեկորը՝ որուն վրայ կը հանգչէի տարիներ առաջ:

Ահա՛ նոյն տեղն եմ դարձեալ. բայց միեւնոյն սիրտը չէ որ կը բարայտ բարին վրայ հանգչողին կուրծքին տակ: Անկայծող բոց մը հրավառ խաբայկէն ետէ՛ որուն շուրջը պար կը դառնային փառապանծ փրահարները գեղեցկութեան:

Բացատէ մը անցնելով իջայ գիւղին գլխաւոր ճամբան: Մոռցեր էի որ այս ուղին կը տանէր հոս՝ ուր նոնի մը կը հսկէ, սլացիկ ու սեւ կերպի մը պէս, մեծաւոր շիրմաբարի մը վրայ:

Պահ մը կանգ առի հոն, եւ գերեզմանը բոլոր վերադարձներուն ունայնութիւնը յիշեցուց ինծի:

Քանի՛ մեկնումներ ու վերադարձներ զիս հասցուցած են այս օրունամ:

Կը յիշեմ առաւօտ կանուխ, արեւածագէն առաջ մեկնում մը դէպի Ար. Նշան վանքը: Գրեթէ ամբողջ գիշերը անհուն անցուցած էի: Հեռիաբային աշխարհի մը կախարդանքը կար հոգիս մէջ: Լեռնէն իջնող երկվարներու վրձիւնը կը փոխադրէր զիս առասպելի մը կամարին տակ:

Բայց մեկնումները հետզհետէ կը մօտեցնեն զիս այն դեռ անծանօթ հանգրուանին՝ ուրկէ անդին վերադարձը պատրանքի մը ողբերգութիւնն է միայն:

Թերեւս, յանկարծ, երբ դեռ չեն կարդացուած մատենանին վերջին էջերը, անոնք որ կ'անգի խորհուրդը պիտի պարզէին մեզ մտքին, թերեւս առաւօտ մը կամ գիշեր մը, ձայները բարանան լուսութեան մէջ, եւ լոյսերը կուրացող աչքերու արցունքը թափեն խաւարին անդունդը:

Այն ատեն է, որ իրականութիւն պիտի դառնայ գերագոյն վերադարձը դէպի անուճը տիեզերքին՝ ուրկէ թիսած է առեղծուածային էութիւնը աստուածներուն:

ԱՐԱՔԱԻ ԶԱՐԽՈՒՅԵԱՆ

ԶԱԽԱԿԸ

Դասընկերները երբ զինք տեսան, խումբով հեռացան իրմէ, ինչպէս պիտի փախէին վասնզաւոր ճամբայէ մը: Վըլ-տացած՝ պայուսակը սեղմեց կուրծքին, շատ սիրուած խաղալիքի մը նման: Նայեցաւ շուրջը. մեկամաղձոտ եւ արտում աչքերով կը գիտէր դպրոցին բակը, քանի մը հսկայ ծառերը, աշակերտներուն զանդուածային դոյուլիները, որոնք կը տատանէին իր տենդոտ եւ պզտիկ բիրտրուն առջեւ: Գիշ մը անդին՝ ուսուցչուհին խումբ մը տղոց առջեւ կեցած, բան մը կը պատմէր: Ան երբեք պիտի համարձակէ՞ր մտիկ ընել անոր: Ընկերները կողմնակի պիտի նայէին իրեն, իրար փայփայէին, դեղնած եւ վայրենի երեսներով: Եւ ինչո՞ւ այս ամէնը: Փոքրիկ ուղեղը կը տուայտէր զաննու այս հսկայ եւ բարձր խնդրին հանդուցը: Պիտի նախընտրէր տեսնել միտերուն արիւնիլը ծեծերու տարափին տակ, պիտի նախընտրէր կեղծ իր սպիտակ կոնսակին, քան այս վատ եւ նենդ ծիծաղը հեղանջին, որ կու դար ճգմելու սիրտը, սրտին ամէն մէկ անկիւնը, էութեան իւրաքանչիւր մասնիկը:

Կոնսակը դպցուց բակի ցանկտապատին, եւ սպասեց զանդին: Աչքերուն առջեւն տողանցեցին իր առաջին մանկութեան օրերը, երազի մը պէտ. զեղեցիկ

էին անոնք. հայրը եւ մայրը ուրախ էին այն ատեն. ոչ մէկ արցունք կը դուրէր իրենց թարթիչներէն. Հիմա ամէն բան փոխուած էր: Մայրը ալ չէր շոյիք իր մազերը, չէր համբուրեր զինք վայրագ եւ պզտիկ համբոյրներով, չէր ըստաւածքը դարձուց շուրջը. ինչո՞վ այս աղաքը տարբեր էին իրմէ. կը խաղային ազատ, անկաշկանդ. չէ՞ որ ինքն ալ դրեկիէ նոյն տարիքը ունէր:

Յանկարծ ձեռք մը դպաւ ուսին.

- Վաչէ՛, ինչու ընկերներուդ հետ չես խաղար - լսուեցաւ ուսուցչուհիին մեղեդիի նման ջնքոյշ ձայնը, որ տակաւ մարեցաւ աղմուկին մէջ:

Ինչպէ՛ս խօսէր տնոր. ըսէր ամէնը, ամէնը. թէ՛ Արամիկ որ նոյն չէնքին մէջ կը բնակէր իրենց հետ, անցեալ օր, երբ գլուխը կախ, կարգ բռնած էր աշակերտներու շարքին մէջ, միւս տղոց բաներ մը կը պատմէր - ԳՆՂ Կ - լսած էր այս երկու բառերը միայն: Որո՞ւն համար էր խօսքը: Ինք ո՛չ մէկ ընկերոջ մնաս հասցուցած էր, ինք միւտ ժպտած էր բոլորին, օգնած էր տկար տղոց. սիրած էր ամէնքը, իսկ հա՛յրը... Նիւանդ փափաքը զգաց պոռալու նոյն բողբոջի՛ ճշալու այդ խումբ մը լիտի եւ լիբր տըղոց երեսին, ճշալու իր ցաւը, սղբեր-

զուժիւնը, հօրը սրբութիւնը:

Իսկ մայրը... պիտի սիրէր զայն եւ ընտանեկանով անոր զեղիցիկ, երկար, սեւ մազերը, որ քանի սնկամներ զգացած էր գէժքին վրայ. բարակ եւ ճերմակ մատները՝ որոնց խնամքը տեսած էր, ճառագայթի պէս լուսարձակ բազուկները: - Մայրս, մայրս գէշ չի՛ կըրնար ըլլալ - եթէ միայն ան չբացակայէր ասունէն: Յաճախ, երբեմն նոյնիոկ իր տունը եղած միջոցին, կը մեկնէր. ինչ խնամքով կը սանաւրէր մազերը, կը քսէր եղունգին կարմիր ներկը, շպտորը... եւ տղայէս կը լքէր զինք, կը մընար միեւնակ, միտ միտակ տան մէջ, մինչեւ որ հայրը վերադառնար գործէն: Պայուսակը կը բանար, կը սորվէր դասերը անձկութեամբ, վախով եւ մղձալանջով լեցուած. փոքրիկ աղմուկ մը իսկ կը ստրտափեցնէր զինք. երբեմն զիտուսմուտը կ'երգէր, կ'երգէր ուրախ երգ մը, պոռալով, ճշարով, որպէսզի չվախնայ, եւ սակայն երկար չէր տեսէր տոբիկա. - ձայնը կը գողգողէր, կը սպասէր եւ կը մեռնէր լուսթեան մէջ, որ անխիղճ դադանի թաթերով, կը հարուածէր իր տղու հոգին:

Եւ հայրը կու գար: Կը սպասէին մօրը վերադարձին, լուռ, զլուխին կախ: Հօրը ձեռքերը որքա՛ն կը գողալին, երբ թերթ կարդար. յաճախ նկատած էր թէ անոր նայուածքը՝ սեւեռած կը մնար անձանթ կէտի մը վրայ: Վայրկեաններ, բողբոջներ կը սահէին այգպէս, անխոնջ արշալի մը թափով: Իրիկունը, եթէ մայրը դեռ դարձած չըլլար, միասին կ'ընթերէին, դէմ դիմաց և սնխոս, հօրը թանձր եւ մուկ աչքերուն ցաւը, ճակատին տրտում զիծերը, ամէնը, կ'աւելցնէին միակութեան խոնջէնքը:

Պուլ աղմուկ մը կը լսուէր դիւերը անոնց սենեակէն.

- Անտարբերութիւնդ տարիներ քաշեցի, - կը պոռար մայրը, - հիմա իմ կարգս է անտարբեր ըլլալու, վայելելու կեանքը:

Ի՛նչ էր վայելքը մօրը համար: Դուրս երթա՞լ էր: Այն ատեն ինչո՞ւ զինք եւ հայրիկն ալ միասին չէր տաներ... Ինչո՞ւ միտակ կ'երթար: Հիմա Արամիկ կը ծածէր Վահրամը, որ դասարանին ամենէն ծոյլն էր. որուն վրայ ամէնքը կը խնդային: Որքա՞ն հպարտ էր ինք: Դասարանին երկրորդն էր միշտ:

Կոնակը շտկեց քիչ մը, բացաւ պայուսակը, հանեց քարշիղովը, եւ վրայէն անցաւ այն աղօթքին, որ կը սորվէին շարաթէ մը ի վեր: Յիշեց Կիրակի օրերը, երբ հօրը հետ եկեղեցի կ'երթար կը լսէր աղօթքին լուսաւոր եւ անաղարտ յանկերգը: Քի՛նչ լաւ էր աղօթելը:

Յանկարծ դպրոցին զանգը զարկաւ. Վաչէ ցնցուեցաւ. առաւ խոշոր պայուսակը կարծացած մատներուն մէջ, եւ եօթը տարեկան տղու փոքրիկ եւ սատանոզ քայլերով, դուրսէր կախ, մտադասարան:



Դպրոցէն վերադարձը միշտ իրեն համար սիրտանք մը եղած էր, որովհետեւ ա՛լ ազատ եւ անկաշկանդ պիտի ըլլար, զո՞նէ քանի մը ժամ: Գալելով մինչեւ տուն կը հասնէր հինգ վայրկեանէն: Ամենքէն առաջ կը վազէր դուրս, կարծես կը վախնար տղոց նայուածքներէն, որոնք կարող էին դեռ տանջել զինք:

Հիմա կը քալէր շիտակ ասփայլէ ճամբէն. կոնակը կը ցաւէր օրուայ յողանութիւններէն վերջ, ստամոքսը կը կըծկրէր անօթութենէ: Ձեռքը խօթեց դըրպանը, բան մը գտնելու յոյսով. քիչ մը կարկանդակի փշուր կար, ամէնը դրաւ բերանը եւ սկսաւ ծածել աղահօրէն: Կը սիրէր դիտել իր շուքը որ կը քալէր միասին, որ կը կենար ի՛ր հետ, եւ ատոր համար դետին կը նայէր միշտ:

Դանդաղեցուց քայլերը. այսօր մայրը կրկին տունը պիտի չգտնէր. ինչո՞ւ անապարէր. իսկ հայրը կու գար ժամը 4-5-ին: Որքա՞ն կը սիրէր այս ճամբան, որ իր սիրտանքն էր, ուր ամէն

մէկ քայլը իր մէջ կ'արթնցնէր անցեալի, մտիկ անցեալի բեկոր մը: Զորս տարի առաջ նոյն ճամբէն առաջին անգամ ինք եւ մաման զացած էին Ղարոց, արձանագրուելու... Որքա՞ն տրտում էին եւ տարտամ այդ ժամերը: Օր մը հոս, կարկանդակ մը ձգած էր ցեխին մէջ. քիչ մը անգին, ինկած էր օր մը եւ ծունկը արիւնած, ղեռ քիչ մը անգին, օր մը ծեծ կերած էր մամայէն:

Եւ այդպէս՝ հասաւ տան դրան առջեւ: Իրենց յարկարածին փեղկերը դոց էին: Այո՛, վատահ էր թէ մայրը տուն չէր: Ետեցաւ աստիճաններուն վրայ, եւ պայտուակը զբաւ ծունկերուն: Որքա՞ն կ'ամշաթ այն ժարդոցմէն, որսնք կ'անցնէին իր քովէն վեր ելլելու համար: Ի՞նչ պիտի ըսէին անոնք: Կարծես վռնտուած ըլլար տունէն, պատժուած ըլլար մօրմէն, յանցանքի մը համար, երբ դիտէր թէ անմեղ էր:

Քիչ ետք Արամիկ եւ իր մայրը մըտան ներս. անոնք կը բնակէին առաջին յարկը: Թրտու եւ շար մայրը բռնած էր տղուն պայտուակը, որպէսզի զաւակը չյոզի: Արամ դարձուց երեսը, երբ անցան իր քովէն: Հաւանաբար մայրը արդիւած էր հետը ընկերանալը: Ա՛խ, եթէ միայն ծնողքը գիտնային...

Հիմա կը կարծէր թէ քարերը կը դողային ոտքերուն տակ. շուրջի տուները, ծառերը, խանութները կը տատանէին տարօրինակ հոլովոյթով մը: Բացաւ բերբերը:

- Աստուած կա՛յ - ըսաւ բարձրաձայն. պիտի աղօթեմ մօրս համար, որ հետս ըլլայ միշտ, որ զիս այսպէս միտակ չծագէ. հայրս կ'ըսէ, թէ պէտք է հաւատայ Աստուծոյ: Ան ամէն տեղ է, նոյնիսկ այն շար տղոց մէջ, որոնք կ'ուզեն զիս ծաղրել... վիրաւորել...

Սիրաւ յանկարծ խենթացաւ ամենաջինջ հրճուանքով մը, մանուկի մը արցունքին պէս անմեղ... սուրբի մը նայուածքին պէս մաքուր:

Որք էլաւ. հօրը սխլուէթը սեսած էր հոն, իր դէմը, որ մօտեցաւ իր տը-

ղուն եւ խոշոր ափը դբաւ անոր ճակատին, շոյեց մազերը: Որքա՞ն լաւ էր այս պահը... եւ որքան կարն:

Ելան աստիճանները դանդաղ քայլերով, մինչեւ երբորդ յարկ:

- Հայրի՛կ, - ըսաւ Վաչէ աթոռի մը վրայ նստելով, - հայրի՛կ, ընկեր լուսնիմ. Ղարոցը մինակս եմ, ո՛չ մէկը հետս կը խաղայ. ծոյլ չեմ, ղեխես, ի՞նչ է պատճառը:

Բարէ մարդը դուրսը վեր վերցուց եւ նայեցաւ տղուն, կարծես առաջին անգամ կը նայէր անոր: Զաւակն ա՛լ ուրեմն կը տառապէր, այդ ճղճիմ, վտիտ, եւ դեռ նոր ծաղիող էութիւնը՝ տակաւ կը թունաւորուէր օրերու շարժարանքով:

Որքա՞ն շուտ լոյսը հեռացած էր իրմէ. որքա՞ն կը զգար հիմա յաւիտենական պէտքը մահուան, ամէն մէկ բոպէի ընթացքին, որ կ'ապրէր, կը շնչէր. խեղդուած անմարդկային եւ ամբարիշտ անորոյութեան մը մէջ:

Երակներուն արիւնը կարծես տակաւ արցունքի կը փոխուէր. արիւնին մեծ մասը պատրաստ էր տալու, եթէ... Այս պահը, դժուար էր ջնջել, անհասարկելի. ան կը նմանէր գիտյա աղլկայ մը պղծուած արգանդին: Բառերը դժուար էլան բերնէն:

- Վաչէ՛, աղա՛ս: - Ծունջը հենկըտուէր մըն էր, որ կը տարածուէր սնեհակին աղջմղջային մթնոլորտին մէջ:

- Հայրի՛կ, եթէ մաման գա՛յ, պիտի ըսեմ իրեն այս անգամ, պիտի ըսեմ որ քովս մնայ, առաջուան պէս. դասերս սորվեցնէ, նայի ինծի. իրեն պիտի պատմեմ ամէն ինչ...

Տղուն վզին բարակ երակները ուռած էին խօսքերուն կրթէն, օրերու եւ ժամերու ցաւէն:

Բան մը պէտք էր ըսել տղուն - որ եւէ բան:

- Վաչէ՛, աղա՛ս, չէ՞ որ ես հեռու եմ - կը լսէր սրտին ջերմ եւ գառնացած արտփիւնը - չէ՞ որ կը սիրեմ քեզ:

Յանկարծ գրկեց աղան, առաւ անոր

գլուխը բազուկներուն մէջ, պատուհանէն ներս մտնող արեւին վերջին կայծերուն մէջ: Տղուն, իր հարազատին աչքերը, կը նմանէին երկու փարոսներու, իր անլուսին կեանքին դիշերուն մէջ:

Դրան ճունչոցը լսուեցաւ. դայն չէին սպասեր այս պահուն. զարմանքով ոտքի ելան, դատաւորի նման մութ երեսներով, աղօթքի մը նման ամբասիր սըրտով: Կարծես կը փնտռէին մէկը, մէկը որ այնքան մինակ ձգած էր դիրենք առանց պատճառի, այդպէս, թերեւս զբանտանոցի մը համար միայն. եւ ատոր պատճառաւ երջանկութիւնը ամչկուտ աըղու մը պէս փախած էր իրենց տունէն:

Ան հազած էր ամենադեղեցիկ շքեղազգեստը, սակայն ի՛նչ պատահած էր: Մաղերը խառնուած էին իրարու, աչքերը կասկարճիր եղած էին արիւնի փոքրիկ լիճերու պէս. սնորհործի մը լուսչին պէս արագ եւ տենդոտ՝ շունչը կը տարածուէր միջոցին մէջ:

Այս պահու. . Աղօթքի մը հսկայ կերպարանքը կը բարձրանար սրահու զոզոթայէն: Մարդը փորձեց թերթը կարդալ. սակայն ձեռքերը այնքան կթղտղային: Ուստի մէկդի դբաւ, եւ գլուխը կախ սպասեց:

Այո՛, Վաչէ պիտի ըսէր իր ժօրը, պիտի ըսէր թէ կեանքը առաջ աւելի լաւ էր, թէ ժամանակ մը ի վեր միս մինակ էր, տխուր էր, տխուր, տխուր...

Բաւերը եղան ընդունէն զառանցանքէ եւ ջերմէ բոնուած ցնորային թարթափումներով:

— Մամա, մենք տխուր ենք առանց քեզի. դպրոցը ընկեր չունիմ. Արամիկը չար է, միւս տղոց բաներ մը կ'ըսէ. չեմ ուզեր այս դպրոցը երթալ այլեւս: Ո՛չ մէկը հետս չի խաղար... մամա՛, ըսէ՛, ո՛ւր կ'երթաս, միւսները քեզ մեզմէ ա-

ւելի՞ կը սիրեն:

Ի՛նչ ըսած էր: Միբայր կուրծքին տակ կը զողար վիրաւորուած թռչունի մը նման: Ձեռքերը տարաւ ճակատին. . մազերը թրջուած էին. կոնակը կը ցաւէր տանջող կծկումով մը. մանուկի իր հողին հիմա կը նուանէր անծանօթ եւ տխուր հորիզոնները: Խոտվքի, ամօթի, ցաւի եւ զղջումի վանկեր լեցուցին միջոցը. մեղաւոր պահը կը մաքրուէր այս բառերուն ջրվէժով. ամէն բան ըսուեցաւ արկածի մը նման արագ:

— Տղա՛ս, պզտի՛կ տղաս...
Կնօջ հեծկտուքը խնջոյքի մը սարսըռացնող ուրախութենէն մեծ էր:

— Ընկեր շունի՛մ — զաւակին, իր հարազատին բառերը, որոնք ճակատագրին վայրահակ, զինախնդիր չրթներէն ինկած էին հողիին խորերը, սրտին անդունդին մէջ, ուր լեցուած էին մեղքին ծիւրերը: Ինչ մայրն էր: Դէմի այս վըտիտ սղան, որուն չրթունքները կը դողային հիմա՛ իր զաւակը: Իսկ հո՛ն, անկիւնը նստող, այդ լուռ մարդը, այնքա՛ն սիրած էր զինք տարիներ, իրեն համար ընկղմած էր ընկերութեան անդուք եւ կծու ծիծաղին մէջ, իր մի քանի տխմար զմահանոյցներուն համար, քանի մը այրերու մակերեսային ընկերութեան համար, անոնց շառլաթանութեան սիրոյն:

— Տղա՛ս, տղա՛ս, տղա՛ս...
Գիշերը կարծես մոռցուած էր: Երեքին այգերը իբարու կը խօսէին հարազատի, սիրողի շեշտով:

Այդ երեք զոյգ աչքերը, որոնք ծընած էին իբարու ըլլալու համար, զիրար սիրելու համար:

— Վաչէ՛, զաւակս, ա՛յ մինակ պիտի չըլլաս:
Եւ դիշերը վերջացած էր...:



ՇԱՀՊԱՆ

ՈՍԿԵՎԱՌ ՊԱՏՄՈՒԹԻ ԻՆ

Անս այդտեղ, հողին վրայ նուիրակամ իմ պապերուն,
 Պատմութիւն մը կայ քանդակուած ազատութեամբ ու պայքարի,
 Պըրում տառերն արիւնարորբ այնքան խորունկ են խարամուած,
 Որ տարիներ փոշիի պէս կ'անհետանան հողմատարած,
 Իւ պատմութիւնն այդ, ոսկեվառ ու պերճախօս կ'անմահանայ:

Ազատութիւն,
 Պայքարի կոչ...

Ինչքան մարդիկ տառապեցան ու մահացան անոր համար,
 Կաթիլով հուսկ իրենց արեան ու վըրէժի արդար շունչով
 Ճանկուողն ժանգը ժահրուտ ստրկութեան ու բռնութեան,
 Եւ ազգ մ'ամբողջ բարձրացուցին կատարներուն ազատութեան:
 Քանի՛, քանի՛ կուր բազուկներ քանտի շղթան խորտակեցին
 Ու պատուեցին աշխարհակուր բերանները գագաններուն.
 Անտէ՛ք ա՛յրոջ էին ու ժայռ՝ հասանքներուն դէմ դաւաղիր,
 Ու քշմամբ հորդաններուն հարուած տուող հսկայ բանակ
 Ու յաղթանակ:

Հողն հայրենի իմ պապերուս, ուրտեղ ծնան հերոս մարդիկ,
 Տիգրանի պէս աշխարհակալ ու վարդամի նման վանմ,
 Ուր հանճարեղ Մաշտոցներու գիւտը եղաւ աստուածային,
 Խաբտակուեցաւ ստրկութիւնն ազատութեան գոռ մաքնեբով,
 Հողն հայրենի իմ պապերուս դարձաւ արեւ, լո՛յս ու գարուն,

Եղաւ ազատ ու անկաշկանդ,
 Ամէն մէկ սիրտ դարձաւ պալատ,
 Ամէն պալատ՝ փառքի գագաթ,
 Ամէն գագաթ՝ վեհ Արարատ:

Հարէպ

Կ Ա Ր Ճ Տ Ա Ո Ւ Տ

Գրեց՝ ԱՐՄԷՆ ՍԱՐԵՆՑ

- Լէպէ՛ն, լէպէ՛ն...

Զորս եղանակներուն, համարեա ամէն օր, մայրամուտէն ոչ շատ առաջ, սա զտյգ համիմաստ բառերը, անփոփոխ յանկերպի մը պէս, կը տարածուին լայն-լայն՝ ամէնէն շատ, քաղաքի վերի թաղերուն մէջ, ուր համախմբուած են տասնըսինգ-քսան ունեւոր ընտանիքներ:

Պատիկ, սրածայր, քիչիկ մը վեր ուղղուած պիտերով Տառախինն է «լէպէ՛ն, լէպէ՛ն»ը՝ ուժեղ, լեցուն ձայնով: Ամէն փողոցի զլուսի, ան կը կրկնէ իր նոյնաձայն եղանակը՝ իր գալը տեղեկացնելու համար «փանրմաներուն» մանասանդ: (Տառախինն է չակերտուած բառը, որով արդարուած են ոսկէ ապարանջան եւ մանեակ կրող տիկիները):

Ամէն երեկոյ, քիչ մը առաջ, քիչ մը ետք, զինք կը սպասեն: Անհամբեր կ'երեւին ոմանք՝ պատուհաններէն բուսական դուրս ձգելով իրենց զլուսիները, իրանի վերի մասին հետ միասին: Լսրած են ականջները՝ ձայնին ուղղութեամբ: Հաճելի պահ մը տիկիներուն համար: Մէկ մայթէն միւսը, իրարու որպիսութիւնը կը հարցնեն մերթ: Կը զրուցեն: Կը խնդան՝ մերթ ալ պայթուցիկ քահ-քահ մը փրցնելով: Մէկ ալ, մէկ ձախ՝ կը նային, հեռուն: Տակաւին չկայ Տառա: Ձայն մը լոկ փ'ր ձայնը:

Շարժումի վրայ են ձեռքերը: Կը սպասեն:

Հիմա, տարիկից խումբ մը տղաք այդ փողոցներուն զուարթութիւն մը կը

բերեն, իրենց այլեւայլ շարժումներով եւ պոռչտութեամբ:

Այս զլխաւոր, հարուստի թաղերուն մէջ, այն ալ աղջամուղջն առաջ, «լէպէ՛ն, լէպէ՛ն» կանչողը միայն Տառա կրնայ ըլլալ. խաբի շարվարով, մոխրագոյն քաթէթով մածնամսանա կարճուկը. այդ կողմերուն մածուն հայթայթուը, տարիներ շարունակ:

«Քափու» ունէր Տառա՝ այդ կողմերուն համար:

Արդարեւ, Տառա ճշգրտակա ըլլալը ի վերջոյ սորված էր: Եւ հիմա, յարգանք մը ունէր ճշգրտակաութեան հանդէպ: Ան կը վախնար խանրման լեղի յանդիմանութեանց նշանակ դառնայէ: Անոր ուշացումը կամ բացակայութիւնը հազուադէպ բան մըն էր: Այսուհանդերձ, չէին քաշուեր անոնք, առիթը չէին փախցնիր բարկանալու (տեսակ մը հանոյք) այս պէխաւոր մարդուն վրայ, նոյնիսկ եթէ անդամ մը յապաղելու ըլլար: Իսկ Տառա ամենայն լռութեամբ կը տանէր թթու սաստերը խանրման: Ո՛չ մէկ արդարացումի խօսք՝ իր կողմէ: Կղպուած բերան մը: Ըսէ՞ք՝ համբ մը:

- Պէտք է կլիեմ, պէտք է լուեմ, - մտովի կ'ըսէր Տառա:

Ի՛նչ կրաւորական մարդ:

Արդեօք դրամի սիրո՞յն այս ոչ-անոյը ենթարկուումը, թէ ոչ լեզու չունենալու հետեւանք: Միասին են երկուքը՝ իրենց խոշոր ներկայութեամբը: Այս բոլորին վրայ գումարեցէջ նսեւ Տառա

տին կինը: զբամասիրութեան մէջ զինք
գերազանցող:

❖

Այս կարեւորագոյն մարդուկին ըն-
տանիքը շատուր չէ: Երեք զլուսն — ին-
քը, կինը եւ աշխիւր՝ տասնեօթը-տաս-
նըութ տարեկան: Այս թիւին վրայ ա-
ւելցուցէք երկու կողեր, երկու կաթնտու
կողեր, որոնք երկու-երեք տարին ան-
գամ մը կը փոխանակուին աւելի երիտա-
սարդներուն հետ: Տառւա մածուն կը
ծախէ եւ օրական շորս-հինգ ժամ կողե-
րը դաշտ տանելու չի մոռնար, առտու-
ները: Քիչ օրավարձով՝ կինը դաշտային
աշխատանքներուն կ'երթայ: Տուն վե-
րադարձին՝ կ'անակին ունի թարմ խոտով
լի պարկ մը: Աղջիկն ալ ուրիշներուն
համար մեռագործ կը բանի:

Աշխատանք ու զբամ: Քրտինք ու
վաստակ:

Մտքի չափանիշ կտրած խեղճութիւն
մը այս ընտանիքը: Կեանքէն շատ հեռու
չնշող: Միայն շնչել մը:

Երեքն ալ կը վաստակին զբամ: Մա-
կայն, միջակէն ալ վար ապրող մարդու
մը ծախսին կէսին շափով հազիւ կը
դպրին իրենց առատ եկամուտին:

Մտուածներ՝ աշխատելու եւ զբտինք
թափելու համար կարծես: Կեանք մաշե-
ցընել՝ լուր գրամ շինելու համար:

❖

Դիւրին դործ մը՝ Տառւաինը: Մա-
ծուն ծախել, զբամ կապել, միշտ կան-
խիկ առեւտուրով մը: Զերբուզատ՝ ու-
ղեղ յոգնեցնելէ եւ սիրտ մաշեցնելէ:
Զուտէր մասհազութիւնը զբամ դանձե-
լու:

Հարիւր առկոտով տղէտ Տառւա կը
կարծէր՝ թէ ամէն մարդ, իրեն պէս,
չահած զբամները պահ կը դնէր միայն.
կը դիպէր:

Մտքի ի՞նչ ազգաստութիւն: Մամո-
նային արժէքը տակաւին իրեն համար
կը մնար անծանօթ: Նանրամտութեամբ

թանճբացեալ բանաւոր արարած մը:
Մամոնան դարձած էր Տառւաին կեանքը:
Ամէն ինչ էր Մամոնան: Իր անփոփոխ
տարազը՝ լուս վկան իր շոր-ցամաք ապ-
րելակերպին: Օր-ցերեկով եւ տարիներ
ամբողջ ձորձակային վրայ հանգիստ տե-
սած չեն: Մոխրագոյն քսօքէթ մը եւ
գորշ գոյն շալվար մը: Զհիննալի՛ք բա-
ներ:

Տգէտին մէծը՝ սա մածուն ծախող
Տառւաը:

Այսուհանդերձ՝ կա՞ր մէկը, որ կա-
րենար զինք համոզել, թէ իր ցածիկ
տնակին քարիւղէ լամբարը վտանգուտոր
էր, ալքերուն լոյսը կը տկարացնէր: Յե-
տոյ, իրեն ցոյց տար, հասկցնէր, թէ
բոլոր դրացիները, շորվիշները, կը վա-
րէին երկարական լոյսը...: Ի դուր՝
այս ամէնը: Որովհետեւ, Տառւաին ու-
ղեղը մէկ ուղղութեամբ կ'ընթանայ
միայն: Եւ ինք այդ ուղղութեան անյե-
զու կամակատարը դարձած է: Ետհիւ,
միշտ շահիլ: Մակայն՝ քիչ ծախսել: Բը-
նաւ չծախսել՝ եթէ կարելութեան ըս-
տեղծուէր: Անա՛, թէ ինչու Տառւաին
համար նախապատիւ էր լամբարը կեկ-
տերական լոյսէն: Վասնզի քարիւղով
լուսաւորուելը կը զուհանայ նուազագոյն
ծախսով մը՝ իր քսակապալտ տէրը շատ
դու՛ ձգելով:

Տառւա, ականջները միայն իրեն վե-
րապահած ամբողջական կոյր մըն է,
հանդէպ իր դարու հսկայաքայլ յառաջ-
դիմութեանց: Ունեցած է մէկ մտա-
ծում, քսան-քսանըհինգ տարիներէ ի
վեք: Իրամ շահիլ է իր մտածումը:
Միայն զբամ:

— Հարկաւ օր մը պէտքի կու գան:
Անոնց արժէքը միայն ես գիտեմ: Անոնք
չըլլային եթէ՛ ինծի բարեւ տուող պիտի
չըլլար...:

Տառւաի ուղեղին մէջ նստած էր,
հաստատ կերպով, այն միտքը, թէ դը-
րամը յարգանք կը բերէ անպատճառ:

❖

Հիմա, խանրմներէն շատ աւելի,

Տառապան խիստ անհամբեր կը սպասեն խուճար մը լաճեր, տարբեր թաղերէ հոն հաւաքուած՝ ժամանակէն առաջ: Ձայնը առնելէ ետք, անոնք կը պահուրտին երկու-երեք փողոցներու անկիւնը: Երբեմն ալ՝ զիրենք պարփակող բակի դռներուն ետին զարան մտած:

Պատրաստ են, անակնկալօրէն, զկա՛րճ Տառապ, կա՛րճ Տառապ պոսալու, ա՛յն ալ պայթելու տատիճան:

Նպատա՞ կը այդ անչափահասներուն. Տառապը ճախեցնել է, անտարակոյս:

Իսկապէս, անպիտան տղոց այս այլապանի արարքը Ղլայնացոցի է: Անոնք առկէ աղուոր հանոյք մը առնելու սովորութիւնը նուիրականապուցած էին իրենցմէ շատ-շատ մեծ մէկը դեռնին տակը անցընելով: Տառապ, մաղ-ձօրուքով, կը ծաղուրէր այսպէս, ամէն օր, այն ալ՝ ինը-տասը տարեկան մանուկներէն: Թող չապրէր, քան թէ այսպէս զլուճուրդներէն խայտառակուէր:

Իայց՝ ո՛չ: Քաղցրահամ մեծ սխալք մը ասիկա:

Որովհետեւ, տարիներով կապած դրամներուն պահպանութեան համար էր այս մարդուն շնչելը, դոյրութիւնը:

Տառապը քրամի ճարտղականութեամբ կ'ապրէր:

Կարճահասակ այս մարդը շատ հեղ կը թթուէր, քաջախ կը կտրէր, ինքզինք կ'ուտէր՝ ի լուր իր գիտքիկ թշնամիներու պոռչտուքին: Ի՞նչ կրնար ընել սակայն: Որո՞ւն գանգատի երթար: Դիւրի՞ն է խօսք հասկցնել մէթէ փոքր այդ անամօթներուն, այն ալ՝ Տառապի պէս տակառ-զլուճի մարդու մը համար:

Մանուկներ զինք կը Ղլայնացնեն, կը խաղցնեն, ՔէՖ կ'ընեն Տառապով: Ձուարճութեան աղբիւր զարձած է:

Մածուն ծախող այս մարդուն համար անծանօթ մնաց տղոց արարքին պատճառը, ասի՞թ տուողը:

Փողոցներու մէջ՝ աղուոր տեսարան մը. կապած մարդու մը վաղվազուքը՝ տասնեակ մը անպայտ աղոց ետեւէն: Կը պոռթկայ Տառապ խոշոր, տարբեր տե-

սակի լուսանջներ: Անցորդը, անկատարած, ամօթ պիտի դադար նման երփնեքանդ հայհոյանքներ լսելուն համար:

Դատա՛րկ գլուխ Տառապ: Ուզե՛ղ լուսնեցող մարդ: Կը կարծէր թէ՛ այդ կերպով, կրնար հանդարտութեան բերել շարածճի անչափահասները: Մածուն ծախող մը, մանաւանդ՝ Տառապին պէս մէկը, կրնա՞յ մանուկները սանձել եւ լռեցնել, մանուկներո՛ւն յաղթել: Մածունավառ կարճուկը չէր անդադարանար, որ մանուկներուն խօսք հասկցնելը դրամ շահելու չի նմանիր: Մածուն ծախել չէ՛: Բացայայտ էր, որ անոր կողմէն ընթացքը տղոց փոքրիկ եւ փլեւրուն սրտերը կը վերաւորէր: Կրթի՞ կը բերէր: Ձինք աւելիով կը կատարեցնեն ասիկէ ետք:

Հողեհան, անվերջ քաշքուք մը:

Ինք՝ մէկ: Անոնք տասէն աւելի: Ո՛նչ Տառապ: Ի՞նչ գիտէր միայն, թէ ի՞նչպիսի շարժարանքով փողոցէ մը ալ փողոց ոտք կը դնէր, թէ ո՞րպիսի սպառումէ մը ետք միայն կը փրթէր, ի վերջոյ, այդ անառակներու ձեռքէն: Հոգին բերանը եկած կ'ըլլար արդէն:

Իրօք, սարսափելի, մանաւանդ՝ ամօթալի բան է տասնեակ մը մանուկներու հետ գործ ունենալը, այն ալ՝ փողոցին մէջ: Մանաւանդ՝ ճակատիլ ու կոտորիլ: Մանաւանդ՝ միշտ պարտուած նահանջելը:

Եւ այսպէս՝ տարիներ շարունակ: Կեանք մը:

Տղաք որոշապէս գիտէին, թէ ո՞ր ժամուն այդ կողմերը կու գար Տառապ: Կը խմբուէին ռազմավայր դարձած այդ գլխաւոր թաղամասը: Կը խաղային՝ քարով նշան առնել, եւ կամ քարուկէ փոքր գնդակով ճիւղ: Կը տաքնային, զիրար կը հրձակէին, զիրար գետին կը տապալէին: Այդ կրակոտ միջոցին իսկ, երբ մերձակայ փողոցէն իրենց ականջին հասնէր Տառապին անիծեալ զէպէն, լէպէնքը, իսկոյն կը դադրէին Քարերը. եթէ գնդակ ըլլար ամէնէն ճարպիկը իր ծոցին մէջ կը պահէր: Ապա, պահիկ մը

իրարու երեսին կը նայէին անխօս եւ «ի՛նքն է, ի՛նքն է» ըսելով, կը վազէին՝ դէրժ բռնելու: Փողոցը կ'ամայանար:

Տառափն համար, փողոցին ամայութիւնը անհաւատալի կը թուի: Վըստա՛հ է գլխուն դալիթին: Զգուշութեամբ խրամին կը մօտենայ: Գողի քալուածքով կը յառաջանայ: Զորս կողմը կը զննէ: Աջ ձեռքով ամուր բռնած է գլխուն վըրայի բոլորածեւ տախտակը՝ մածունի թասերով: Ո՛րքան դաւադիր է զոտթիւնը երբեմն:

Արդեօք վերջնական յաղթանակը ի՞նչն է, կ'անցընէ մտքէն Տառա: Կ'անցնի շտեմուտդի մը պէս: Ա՛հա՛, մէկէն ի մէկ, տասնէ ափլի մանուկներ իրենց կոկորդիներուն ամբողջ տարողութեամբ կը սկսին պոռալ:

- Կա՛րճ Տառա, կա՛րճ Տառա:

❖

Կառի թատերաբեմ դարձած թաղամասին սահմաններէն անդին է Տառա հիմա: Ազատ կը զգայ ինքզինք: Լայն

շունչ մը կը քաշէ: «Փա՛րժ Աստուծոյ, անվտանգ փրթայ անոնց ճանկերէն», - կ'ըսէ Տառա, մտովի: Կէս-հասկնալի բան մը կը ծածկէ: Մոլորուք մը:

Տառա երբ յոգնած տուն վերադառնար՝ մութը իջած կ'ըլլար արդէն, ամբողջ մածունը ծախուած: Երբեմն, նախքան յոգնութիւն տանելը, տաղտկացուցիչ վէճ մը ծայր կու տար՝ կիսաստուեր հիւզակին պատերուն մէջ: Որովհետեւ, այդ սրուն վաստակէն բան մը կը պակսէր: Անդրդուելի կիներ հաշիւ կը պահանջէր: Ինք՝ յանգաւորի պէս, կը ճըզնէր ինքզինք արդարացնլ, չհամոզուող կնոջ առջեւ: Բաւ չըլլար կարծես փողոցի կտիւր, հիմա ալ՝ փոխանակ հանդուսանալու, կը խեղճանար, շատ կը խեղճանար, կծիկ մը կ'ըլլար Տառա: Դիւրութեամբ կարելի էր դուրս նետել:

- Կնի՛կ, ի՞նչ բնեմ: Ծունշանորդիները հողիս կը հանեն: Քալածս քաշուելիք չէ՛...:

ԱՐՄ. ՍԱՐԵՆՑ



Արարաշէս
Հարութիւններ



Չամբար



Չամբար
Կարգաւորներ

Մտկար, 26/9 1907

Ազնիւ բարեկամուհի,

Ձեր վերջին նամակն ու իմ ջարդս՝ զիրար խաչածեցին: Նայելով ձեր այն յայտարարութեան՝ թէ զիչ օրէն մտադէր էիք մեկնելու Գոր-

ոէն, թերևս այս նամակը Պալտոյ մէջ ձևաքերնիդ չհասնի: Ամէն պտրադայի մէջ չեմ կրնար զայն չզրել ձեզի, ըսելու համար թէ անհունորէն երջանիկ եմ տեսնելով այն կարեւորութիւնը զոր կու տաք վերջին անգամ ձեր վրայ գրածիս: Ուրիշներ ինչ կ'ուզեն թող ըսեն:

Թոյլ պիտի տամ նոյնիսկ որ Տոմինօ զող անուանէ զիս: Բաւական է որ դուք կ'ըսէք թէ իմ գնահատումս իրենինէն տարբեր է. թէ՛ զձեզ ճանչնալու փորձիս մէջ անկեղծութիւն ու քիչ շատ ճշդութիւն տեսած էք դուք: Եւ հակառակ անոր որ Տոմինօն հերքելու մեծագոյն ապացոյցը ունիմ ձեռքիս մէջ, — ձեր նամակն ըսել կ'ուզեմ, — թողունք հրապարակային հերքում մը, այս մասին իրեն կամ որեւէ մէկուն ուղղակի թէ անուղղակի բան մը պիտի չըսեմ, Տոմինոյին թողելու համար զիս զող բռնած ըլլալու հաճոյքն աւ առանձին վայելելու համար ձեր գնահատման ինծի պարզեամբ գոհութիւնը: Միւս բոլոր բազմաբնիկներն, իրենց կարգին. ինձ համար ընա՛ւ նշանակութիւն չունին: Արդէն, իմ դրակներս, — շնորհեցէք ինծի, կը խնդրեմ, այս յատկանութիւնը, — բացարձակօրէն անհասական, Էմիլիոյ՝ տիւալիսը էք ես ինծի համար միայն կը զրեմ, եւ ի՛մ հաճոյքս, իմ գոհութիւնս միայն կը փնտռեմ ամէնէն աննշան տողին մէջ՝ զոր ստորագրած ըլլամ բնաւ: Հասարակութիւնը կը թողում իր զէ՛Փիս: Եւ ինչ դուրս՝ ուշադրութիւնս կը դառնայ այն մէկ կամ երկու բարեկամներու՝ որոնց հակացողութեան եւ անկեղծութեան վրայ հաւատք ունիմ: Հա՛րկ է հիմա ձեզի ըսել թէ այդ բարեկամներէն առաջինը դուք էք եւ եթէ երկրորդը հարցնէին, անմիջապէս պիտի չկարենայի պատասխանել:

Յետոյ, որովհետեւ առիթը ներկայացաւ, ըսեմ թէ քանի մը տըրպաչական սխալներ սպրդած էին այդ յօդուածիս մէջ, որուն վերջին սխալին մէջինը մանաւանդ անիմաստ դարձուցած է պարբերութիւնը, եւ է հետեւեալը «...որով այլևս ձեր զգացողութիւնը քիչ մը միւրախմ է...» պէտք է կարգաւ՝ թքացած է...:

Տակաւին ունէի շատ բաներ, բայց այսօր սարսափելի կերպով ըզբաղուած ըլլալով, պիտի չկարենամ ձեզի աւելի երկարօրէն գրելու բաղձանքիս գոհացում տալ: Կը խնդրեմ, ներողամիտ եղէք եւ մանաւանդ երկար ժամանակ անպատասխան մի՛ թողուք զիս:

Միշտ ձերը անձնուէր՝

ԱՐՏԱՇԷՄ ԵՄՈՒԹԻՆԵԱՆ

Ազնիւ բարեկամուհիս,

Մայիսիս, 19 Մարտ 1908

Եթէ քիչ մը ուշացայ այս անգամ ձեզի գրելու, պատճառն այն էր որ ուղեցի աւելի երկար առէն ձեր նամակը գրպանիս մէջ պահել, զայն աւելի շատ անգամներ կարդացած ու ձեր վրայ աւելի յաճախ խորհած՝ ըբլալու համար: Ներողամիտ եղէք ինծի, եթէ այս եղանակը գտնէք չարագանց ետական: Բայց ցորչափ դուք չձանձրանաք ինծի գրելէ, եւ չպիտի թերանամ, չպիտի թուլանամ երբեք՝ ձեր նամակները փութացնելու մա-

սին հարկ եղած հանդամանքներն ստեղծելու եռանդին մէջ: Եւ հիմա, որ այլևս չեմ կասկածիր թէ ձեր պատրաստակամութիւնը չարաչար կը գործածեմ, ահա կը գրեմ ձեզի նորէն իմ երկար նամակներէս մին, հարցումներով, կրկնութիւններով, զբաբանութիւններով լեցուն:

Ամէնէն առաջ՝ ամօթապարտ եմ հանդէպ ձեզի, ժամանակին ձեր բրած մէկ առաջարկին ղէժ խուչ ձեւացած ըլլալու անկրթութեանս համար: Ձէ՛, բնաւ չեմ մոռցած թէ, առաջարկած էիք ինձի՝ ձեր գիրն ու սուսնախրելի գրալուծական տեսակէտէն: Նախ կը խնդրեմ որ ներողամիտ ըլլաք գործած անփափկանկատութեանս համար: Բայց լուսեմանս պատճառը գոյութիւնը չէր կրնար ըլլալ ձեր մասին ըսելիք զգէշ բանեցողու, որոնցմէ թան մը գէթ շտեպս ես ձեր գրին մէջ. ապահով եղէք այդ մասին: Պատճառն այն էր թէ՛՝ ես մեծ բան մը, կարեւորութեան արժանի բան մը չէի գիտեր ու չեմ գիտեր այդ կնճառու ու ամենափոփոկ գիտութեանէն, կրափոյժիցն. դայն ուսանելու հետամուտ եմ միայն, եւ շատ վստահելի ձեռնհասութիւն մը չեմ յուսար ունենալ մինչեւ այսօր: Այն ատեն ի՞նչ պէտք համարձակէի ձեր փորձեր կրափոյժիցին յաւակնել: Միայն սաշափը պիտի ուզէի ըսել որ, ձեր մասին բրած մէկ ուսումնասիրութեան մէջ՝ օգտուած էի գրալուծական տուիքներէ, թափանցելու համար ձեր խառնուածքին ներքին քանի մը ծալքերուն, ձեր մտտ տը սանխալիլիքին, եւ կը կարծեմ թէ դուք զարմացում յայտնած էիք թէ, առանց զձեզ սեռած ըլլալու, ի՞նչպէս կարելի եղած էր այդ: Հիմա ալ կը խնդրէք որ գրեմ ձեզի ձեր թերութիւնները, անկեղծօրէն, առանց վախի: Այդ ձեր թերութիւնները, զորս ժամանակին դարձեալ կրափոյժի ընձեռումով կարծած էի տեսնել եւ զորս ահա երկու տարուան փորձառութիւն մը հեղա հաստատել, պիտի ըսեմ զանոնք ձեզի. երկու տարի է ի վեր՝ անոնց վստահեցայ, ձեզի գրելու համար տնօրինակ ֆրանցիզով մը, իմ ներքին ու ընտանեկան կեանքին վրայ, իմ գրադումներու վրայ, իմ հոգիիս մտերմութեանը վրայ: Վասն զի ճանչցած էի զձեզ, ձեր ճշմարիտ ու անխախտ պարզութիւնը, ինչ որ կար ձեր բնատրութեան մէջ անսեթեւեթ ու աննկատ, բընական ու լուայնալ. կարծած էի տեսնել ձեր գրին մէջ՝ մեծ ու վիպրանք սանխալիլիք մը, որուն խոռվքներուն ղէժ մարտնչելու համար ձեր ի գործ դրած ջանքն էր անտարակոյս՝ որ անփորձ նայուածքներու զձեզ կարծել տուաւ «հանգարտ ու վերապահոտ» անձնաւորութիւն մը, (Տօմինսոյին): Հիւանդազին դիւրազգամութիւն մը, մտքին մէջ դադափարներու եւ տըպաւորութիւններու խոռվայոյց իրերայաջորդութիւն մը, ամիթասիլոն մը, փոփոխականութիւն մը. մէկ վայրկեանէն միւսը՝ խանդավառ կամ տխուր, յուսալից կամ յուստթափ. բայց բնապէս՝ մանաւանդ արտօր սենեցող հոգի մը. ահա այսպէս ճանչցած էի զձեզ, ձեր գրին վրայէն. կարծեմ թէ շատ խարուած չեմ. մանաւանդ՝ դուք հաստատեցէք կամ հերքեցէք զիս: Ես քիչ բան միայն գիտեմ կրափոյժիցին, եւ այդ քիչ բանը կըրցու ընել որ, անկարծէն ձեր գրական կարողութիւններէն, ձեր մօտ ճանչնայի այն թանկագին ու ազնիւ հոգին՝ որ էք դուք, եւ որուն հեռաւոր գոյութիւնը՝ կ'ամփոփէ իմ առանձնութիւններս, կը փարատէ իմ ձանձրաբեկ հոգւոյս ամպերը:

Ահա իմ ընելիք կրափոյժիս: Ի՞նչ կ'ուզէք խորհեցէք անոր մասին. բայց մտնաւանդ՝ կը խնդրեմ, հաւատացէք իմ խորին անկեղծութեանս:

Ձեր սփիրիթիք պատմութիւնը խիստ մեծ հետաքրքրութեամբ կարգացի, արդարեւ հրաշալի է: Պիտի յիշէ՞ք ձեր խոստումը, ուրիշներ եւս պատմելու համար: Եւ եթէ արտօնէք զիս, ձեր պատմութիւնները պիտի հաղորդեմ Յով. Գազանճեանին, որ այս կարգի խնդիրներով լրջօրէն պարագող մըն է եւ սիանս օքքիլիթի վրայ կարծեմ թէ զիրք մըն ալ պատշառտելու վրայ է: — Ես տակաւին սփիրիթիզմը նոր կ'ուսումնասիրեմ: Փորձառական մասը բոլորովին անձանօթ է ինծի: Պէտք է որ նախ ուսումնասիրեմ Լեւոն Տըմիի Տոն Լ'Ենվիզիպլը, զոր նոր յանձնարարքի, փորձերու սկսելէ առաջ: Անկախօրէն սփիրիթիզմէն, երբեմն զբաղած եմ հիվանքիզով որ իր կարգին զարմանալի ու հետաքրքրաշարժ երեւոյթներ առաջ կը բերէ, ինչպէս գիտէք:

Աւարտելէ առաջ, պէտք չէ մոռնամ իմ շնորհակալութիւններս յայանելու ձեզի այն մտաւորական վայելքին համար՝ զոր պատճառեց ինծի ձեր Մամուլի եռամսեային մէջ հրատարակած գրութեան ընթերցումը: Տեսա՛յ զանոնք, բուրգերը, այնքան էվոքաքուար էր ձեր պատկերացումը: Ձեր բանաստօղութիւնը հմայիչ, թափանցող ու խորագղչեցիկ բան մը ունի իր մէջ, ճշմարտացէս կանացի, իզական: Երէկ իրիկուն կարդացի նաեւ ձեր մէկ նոր գրութիւնը, Փրանսայի կին գրողներու մասին: Ի՞նչ լաւ դըրած էիք: Մանաւանդ թէ, փիւրիսքներուն ալքը լոյս, ահա՛ ձեր լեզուն և ձեր ֆրազը որ աւելի մաքուր ու աւելի ինամքով աշխատուած են հետզհետէ:

Եղբայրս Վահանը շնորհակալ է ձեզի, ձեր թանկագին գնահատումներուն համար. մայրս եւ զոյրս ձեզի կը շրկեն իրենց բարեկեցիկը, լեցուն բարեկամական զգացումներով, իսկ ես՝ կը մնամ միշտ միեւնոյն անձնուէր բարեկամնիդ՝

ԱՐՏԱՇԷՍ ԵՄՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Թոյլ կու տա՞ք որ խնդրեմ մանաւորապէս՝ շուշացնել, եթէ կարելի է, ձեր նամակը, որուն պիտի սպասեմ անհամբերութեամբ:

ՆՈՅՆ

Տիկ. Զ. ԵՍԱՅԵԱՆԻ

ՈՒՂՂՈՒԱՄ ՆԱՄԱԿՆԵՐԷ ՔԱՂՈՒԱՄՆԵՐ

Մնթ. — Արտաշէս Յարութիւնեանի այս նամակները մեզի տրամադրած Պրն. Մկրտիչ Պարսամեան չի յիշատակեր, քէ «Ֆազուածները» ի՞նք քէ Ա. Յարութիւնեան անձնապէս կարարած է: Եւ յետոյ միակ նամակէ՞ մը քէ նամակներէ «Ֆազուածներ» եմ ստնք, քանի որ եզակիով ճամակէ մը» գրելէ ետք, տարբեր մեղմով մը՝ եզած է ճամակներէ» գործածուած միակ թուականը եմքադրել կու տայ, որ ֆազուածները կատարուած են մէկ նամակէ եւ հաւանաբար հեղինակին կազմէ:

ԲԱՊԻՆ

18/1/908

Առ այժմ կը մնամ իմ յամառ բժախնդրութեանս տիրապետութեան ներքեւ. բայց պիտի ջանամ, եթէ կարելի ըլլայ, վերսկսիլ զրական աշխատ-

տութիւններու: Ամէն պարզայի մէջ չեմ յուսար որ այլևս թերթերու յօդուածներ գրեմ: Արդէն այսօր ո՛չ մէկ թերթ կը տեսնեմ եւ կը կարգամ, «Արեւ-Մամուլ»էն զաւ: Ընթացիկ դրական շարժումը զիտ անտարբեր կը թողու, բոլորովին ազէտ իմ տեղի ունեցած խլրտումներու մասին: Կուսակցի աւելի լուրջ, աւելի հրահանգիչ ընթերցումներու հետամտիլ, եթէ ժամանակս եւ տրամադրութիւններս թոյլատրեն: Իմաստասիրութիւնը զիտ կը հետաքրքրէ. բայց բանաստեղծները կը սիրեմ միշտ: Անկախօրէն իմ սեփական ըմբռնումներէս, մշտամառ հետաքրքրութիւն մը կը մղէ զիտ ճշմարտութեան բոլոր կարելի երեսներուն ծանօթանալու. զիտական իմաստասիրութիւնն ալ կը հետաքրքրէ զիտ. և այս բանը շարդիլեր որ մղուիմ զիտնալու նաեւ զոր օրինակ օքսիւթիզմը, սփիրիթիւալիզմը եւն.:

Իմ մնայուն ուսումնասիրութեանս առարկաներէն մէկն է կրափօլօթին, իբրեւ ուսումն իսկ մարդկային հոգիին: Դեռ կը հարցնէք ինձի իմ երազներու, իմ յոյսերու մասին. ոեւէ յոյս չունիմ. իսկ երազներ՝ ո՛վ զիտէ: Կը սիրեմ իմ երազներս, ոչ իբրեւ կարելի իրականութիւններու նախադուլակ նշաններ, այլ իրենց ներքնուրոյն բանաստեղծականութեան մէջ: Երազել՝ առանց յոյսի. երազել՝ երազած բլլալու համար միայն, վայելելու համար անկարելի երազին նրբահամ աննիւթական հեշտանքը: Կը սիրեմ երազը. ոչ իբր խորհրդանշան իրականութեան, այլ իբր խուսափուկ անհպելի գեղեցկութեան մը վազանցիկ կրկնեփետր: Երկար ժամեր կ'երազեմ յաճախ, եւ տարտամին զինովութիւնը կ'արբուցանէ զիտ: Ունտ՝ յն է երազը: Անշուշտ: Բայց ամէն բան ունայն է, ամէ՛ն բան:

Ա. Յ.



Ղ. ԺԻՐԱՅՐ



Լուսաւոր է սենեակը :
 «Լոյսը ես շատ կը սիրեմ» :
 «Վայրենի մուսգ մը...», սիրտս պարելի կ'ուզէ :
 Փոքր սենեակիս մէջ փոքորիկ մը կը սկսի. *Քուիս* է փոքորիկին
 անունը :
 Անփայտ հոգիով անկողինին վրայ պարզուած, կը դիտեմ պարը :
 Նուրբ մկաններ, միտ'ը, գեղեցիկ կաղապարով իրան մը ամբողջ
 շարժումի մէջ է :
 Պարտէն վեր' ծիծեր կը հեւան :
 Պարտէն վար' դող մը ներկայ է :
 Կիրքս՝ երեւակայութեան վարագոյրին ետեւէն, կը ներշնչէ երկ-
 մըտանք, կը գրգռէ ախորժակս :
*Քուիս*ը՝ արտաշին աշխարհի փոքորիկն է :
 Հեւացող կուրծքերը, կուրծքերէն դուրս ժայթֆող տախուկ շուն-
 շը, կրակառ ժպիտները, ներքին՝ հոգեկան աշխարհի հրաքոյրներն են :
 Տիտը վերջացաւ : Անգամ մը եւս, անգամ մը եւս :
 Փոքորիկը նորէն սկսաւ : Փոքորիկը այս անգամ ներթափեց կուրծ-
 քերէն ներս, հեւքը շատցաւ, Ափրիկէի սեւամորթ պարողներուն նման նիչեր
 սկսաւ արձակել . սակայն լուրջ էր իր մտնցումը, ապրումներու զագաթ-
 նակէտին հասած, կը շարունակէր իր պարը :
 Տիտը նորէն վերջացաւ :
 Կուգիմ, կ'ուգիմ, կ'ուգիմ... :
 Շարունակեց իր պարը : Կարծես փորձ մըն էր ըրածը, ճիգ մը՝ բա-
 ւարարութիւն տալու իր աշխոյժ աջկէպ հոգիին :
 Կը դիտեմ արեւիքի սղու մը ազահութեամբ :
 Տիտը այս անգամ մինչեւ վերջ չկրցաւ պարել : Կէս ձգեց : Շըն-
 չասպառ նետուեցաւ կողքիս, անկողինն վրայ :
 Անձրեւէն բրջուածի մը կը նմանէր : Գրտնած էր շա՛տ : Կը հրդե-
 հէր իր հոգին : Սենեակին լուսաւոր լամպը տա՛նութիւն մը կ'աւելցնէր իր
 հոգիին :
 «Մամ մը ունի՞ս», հարցուց ինձի :
 «Ունիմ», ըսի :
 . . . «Մեծ լամպը մարէ, տեղը մամ մը վառէ» :
 Լամպը մարեցի . տեղը մամ մը սկսաւ իր սկար բոցով, կէսով մը
 լուսաւորել սենեակը :

«Մտեցուր մտը մեզի»:
 Լուսեան ընդերհերէն, բոլորին ծանօթ համերգը սկսաւ:
 Քուխտն է, կեանքն է, էրոսի խորհուրդին մարմնացումն է:
 Կ'ուզեմ... կ'ուզեմ... կ'ուզեմ...
 Բոլորին ծանօթ համերգը սկսաւ դող մը փոխանցել կէտով բոցկըլտազ մտին:
 Ձըլլայ մարի... համերգը թող շերկարի:
 Ձերկարեցաւ:
 Պահ մը լուսեան շնչեցինք երկուքս ալ:
 Լուս ժպիտ մը, արեւածագի նման, նոր կենդանութիւն ներշնչեց մեր հոգիներուն:

«Այդ մտը կը պաշտեմ», խզեց լուսեանը:
 Սկսաւ ազանի մը նման համարոյրներ տեղացնել:
 Վայրենի է: Կը մարմնացնէ օրերուն ճշմարիտ նւան:
 Փողոցի աղջիկ չէ ան. այլ՝ գիտակից եւ խորհող միտք: Նիւթապաշտ ալ չէ, այլ գգայնութեամբ լիացած, հոգեկան գեղեցկութիւններ որոնող, գեղեցկութիւններուն ձգտող նրբաշէն հոգի: Ազատութիւնը կը պաշտէ, հոգեկան ազատութեան կը տենչայ. ո՛չ ոք կընայ կաշկանդիլ իր հոգիին տենչը: Այս իր պատգամն է: Ինք յանախ՝ հասուն միջավայրին եւ քաղաքակրթութեան հովերուն կ'ապաւինի: Արեւելցիի մը համար, կեանքին վստահացած ընդունողութենէն, քարոյական վերելէն շեղած, կեանքի տարօրինակութիւնը մարմնացնող ցնարած մըն է ան:

«Մամը մարէ, մեծ լամպը վառէ», շնչեց ականջիս:
 Լուսաւոր է սենեակը:

«Ես Քուխտը մերկ պարել կը սիրեմ, մերկ, մերկ...»: Ձէ՞ որ վայրենի անտառներուն ծնունդն է այս պարը: Հո՞նք, Ափրիկէի մէջ, Քուխտը մերկ կը պարեն: Ազիկներ մերկ կուրծքերով, տղաք մերկացած կուրծքերով կը պարեն Քուխտը. կը խայտան, կը հպիկ իրարու, կը հասնին իրենց սպրումներու գագաթնակէտին. շատ բնական գարգացումով մը կը հասնին յագեցման աղբիւրին: Ամէն օր կը պարեն Քուխտը, ամէն օր մերկ կը պարեն, մերկացած կ'արքեան: Մեզմէ շատերը չուզելով կը պարեն. ուրիշներուն յագեցում տալու համար կը պարեն. իսկ ես, ինծի համար կը պարեմ, իմ հոգիիս համար: Ես կը սիրեմ մերկութիւնը ամէն ինչի. ես կը սիրեմ Արարիայ կիզիչ արեւին շողերը, մերկ անապատը, մերկ աւազակները...: Ա՛հ, բնութիւնն է. բնութիւնը մայր է գեղեցկութեան: Գեղեցկութիւնը արտացոլող պատկերն է՝ մերկութեան: Ամէն ինչ բնական, ամէն ինչ բնական, բնութեան նման բնական պէտք է պարել Քուխտը՝ այսինքն մերկ, մերկ, մերկ...»:

Լսելեայն կը ժպտիմ իրեն:
 «Ա՛հ, լոյսը ես շա՛տ կը սիրեմ»:
 «Վայրենի նուազ մը, Քուխտ մը...»:
 Ձէ՛, ալ չէր կրնար... յոգնած էր: Թէեւ իր անյազ հոգին, նոր փոթորիկներու, եւ բոլորին ծանօթ համերգներուն կը տենչար:

Ղ. Ժ.

Հոնտոն



Իմ ապական Հարժու՛ւ՛

ՆՈՐ ԶԱՄԲԱՆԵՐՈՒ ՓՆՏՈՏՈՒԲԸ

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԵՋ

Գրեց՝ Բ. ՓԱՓԱԶԵԱՆ

Նախամարզէն մինչեւ այսօրուան մարզը՝ հողովորով, փոփոխում, յեղաշրջումներ, յեղափոխութիւններ, պահպանում ձեռք բերուածի, պահպանողականութիւն, դասականի փնտտուք, դասականի արհամարհանք, նորի ծարաւ, փնտտուք նոր ճամբաներու՝ արդիւնք են մարդկային մտքի առջեւ շարունակ բարձրացող ու միշտ նոր հարցումներուն, մարդկային հողիին արձանագրած նորանոր թոփշներուն ու ներսուզումներուն:

Փնտտուքը երբ տեղի կ'ունենայ որպէս արուեստական ճիշդ, արդիւնք՝ ինքնատիպ երեւալու մարմալի, ամուլութեան սերմը իր հետ կը բերէ: Երբ իրօք չզոհացած ներաշխարհի մը արդիւնքն է, երբ արտայայտութեան միջոցները անբաւարար կը թուին արուեստագէտին, իր միտքն ու ազդումները արտայայտելու համար, այն ժամանակ է որ նորի փնտտուքը կը տանի իրական նորութեան, արժէքին:

Արուեստագէտը, ծնունդ իր դարուն, ժամանակին՝ ժամանակներու ըմբռնումներու փոփոխութեանց հետ կը քալէ, կ'ըլլայ արտայայտիչը անոնց, առաջի-

նը՝ նորը տեսողներուն մէջ, նորի պահանջը բերեղացնողներուն մէջ:

Գրեթէ ամէն քառորդ դար, արուեստագէտներու նոր սերունդ մը կուգայ ըմբոսսանալու գոյութիւն ունեցող արտայայտութեան ձեւերուն դէմ, գործածուած նիւթերուն դէմ, եւ կը յաւակնի ամբողջովին նոր ճամբարութիւններ բերել աշխարհին, ամբողջովին անկոխ, նոր ճամբաներով: Բերուած ճամբարութիւնները երբեք չեն ըլլար ամբողջովին նոր, ոչ ալ արտայայտութեան միջոցներն ու գործածուած նիւթերը: Մահայն կը պարունակեն իրենց մէջ բաւարար նորութիւն, առնուազն արտայայտութեան ձեւերուն մէջ, զոհացնելու համար ծարաւը, փնտտուքը աւելի հարազատ արտայայտութիւններու: Մաս մը, բերուած նորութիւններէն, կը տանի ժամանակի քամին, ծանրը կը մնայ, որպէս դարաշրջանի մը արտայայտութիւնը, սերունդի մը ճամբարութիւնը:

Թատերական գրականութիւնը ամէնէն աւելի եմբակայ է նման փնտտուքներու, քանի որ գրքէն գուրս գալով, արտայայտուածը կը դառնայ հանրաժատչելի (կամ հակուակը) բեմի չորս

պատերուն մէջ, լուսարձակներուն տակ, եւ Հանրութեան նիւթական ու բարոյսական գնահատանքին անգիղջելի կարիքը ունի, կարենալ զոյստեւելու ու զարգանալու համար: Իսկ Հանրութիւնը յարատեւ փոփոխութեանց այն կախան է, որուն մէջ կ'ապրի թատերադիրը, որուն մաս կը կազմէ, որուն ներքին պահանջները զանելու, պարզելու, բեմ հանելու պարտականութիւնը ունի նոյն ատեն, քանի որ ինք մէկ մասնիկն է այդ իրականութեան:

Վերջին հարեւրամեակը կը յատկանշուի արագութեամբ ընկերային, քաղաքական եւ անտեսական փոփոխութիւններով, որոնց ենթարկուեցաւ մարդկութիւնը:

Տեղի ունեցող յեղաշրջումներուն հետեւանքով առաջացած հողեկան ու մըտային հաւասարակշռութիւնը զոյսովիճակի խախտումը, շուտով Հարցումներու շղթայ մը, երբեմն խառնարան մը հանեցին գրագէտին, ընթերցողին, հանդիսատեսին դիմաց:

Նրկու համաշխարհային պատերազմները խորտակեցին դարերէ ի վեր կանգուն մնացած հաւատքի, բարոյականի, գաղափարականի, յուշարձան դարձած ստանդարտները: Անոնց ակնկառուցուած նիւթական աշտարակները, երկնաքեր շէնքերը, այդքան ալ չդիմացան:

Նիւթը, շօշափելին, նիւթական առաւելութիւնները չկրցան զոհանքել մարդկութեան ծարաւը: Նիւթականի բարելաման անունով մղուեցան ընկերային պայքարներ, առաջացան յեղափոխութիւններ, սակայն մինչեւ անգամ երբ անտեսական պայմանները բարելուուեցան, (Եւրոպա, Ամերիկա) ներքին տառապանքը չմեղմացաւ, փնտռուէր չզազրեցաւ:

Յրէտ ազատագրից սեռը: Սեռը գերեզմանի նոր սերունդները: Ազատագրուած Հաճոյքը, շուտաւ զսպուած Հաճոյքին բաւարարութիւնը. ծարաւը դարձաւ պապակ. նոր սերունդներուն փնտռուէր կը նմանի այլեւս անապատի

մէջ կորսուածին ջուրի ակի մը կ'ընթաց փնտռուէրին:

Ամէն ինչ որ հին էր, դարերէն կու գար, խորտակուեցաւ: Տեղը դրուած ամէն նոր սահմանում, տեսութիւն, փիլիսոփայութիւն, տանամեակ մը հազիւ դիմացաւ: Քսաներորդ դարը յատկանշուեցաւ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆԱՄՈՒՄ, անապատութեան զգացումով, չյազեցող պապակով, մշտական փնտռուէրով:

Տանամեակները չեն բաւեր ատուջանելու համար բաւարար չափով հաստատուն եւ բաւարար թուով մարդոց կողմէ ընդունելի նոր փիլիսոփայութիւն մը, նոր բարոյական մը, վարուելակերպի նոր չափանիշներ: Որով, իրարու յարգող տանամեակները, պատմութեան կ'անցնին որպէս խոտլայոյղ տանամեակներ, փնտռուէր, վերայարմարեցման, հաւասարակշռութեան մը վերահաստատման տանամեակներ:

Արդի երիտասարդութիւնը, մտաւորականութիւնը, արուեստագէտներն ու պրագմատիկները մանաւանդ, սուր կերպով կը զգան այդ եռացող վիճակը, կ'արձագանգեն անոր, կը փնտռեն ճամբան, միջոցը, ձեւը, որ պիտի զոհանքէ մարդկութեան մեծ մասը:

Այդ փնտռուէրը իր արձագանքը ունի նաեւ թատերական գրականութեան մէջ:

Ոչ մէկ երկիր այնքան սիրահար չէ արուեստի ու գրականութեան նորանոր շարժումներու, որքան Ֆրանսան: Կը բաւէ յիշատակումը միայն իրերայնորդ գրական դպրոցներուն՝ դասականութիւն, վիպապաշտութիւն, Պարնասիանանը, իրապաշտներ, ընապաշտներ, խորհրդապաշտներ, տպաւորապաշտներ, Իրպիսթանը, իւնամիսթանը, զերբապաշտներ, գոյապաշտներ, անդրադատնալու համար գրական յարգական դպրոցներու յաւիտենական որոնարատոյսին, եւ անոնց գաղափարական հայրենիքին Ֆրանսան ըլլալուն:

Ֆրանսայէն կու գայ նաեւ թատերական գրականութեան մէջ նոր ճամբանե-

բու պահանջը, ու դեռ անձեւ խառնա-
բանէն դուրս կը բերուին որոշ գէծեր,
որոշ ուղղութիւն՝ որուն կարծես թէ
պիտի հետեւին եւրոպական (եւ նաեւ աս-
մերիկեան) թատերական դրականութիւ-
նը:

Ճրանասացի արդի թատերագիրները
կը հաստատեն նախ հետեւեալ իրողու-
թիւնները: Յիսուն տարի առաջ էր որ
դեռ կը հաւատային ճարտեսաբան արուես-
տի համար» ասացուածքին, եւ ճարտեսա-
բան արուեստագէտին համար» սահմա-
նումին. այսօր, արուեստագէտը այլեւս
անփոխարինելի չէ, աշխարհը այնքան
հարուստ է բազմազան եւ այլազան գոր-
ծունէութիւններով, որ մարդկութեան
արուեստի ծարուր կը յագեցնայ այլ
յաճախ ոչ արուեստի դործերով (սինէ-
մա, լուսանկարչական ցուցահանդէսներ,
երաժշտական սկաւառակներ, հետաետե-
սիլ, ուստիօ եւայլն):

Եթէ այսօր թատրոնները գոցուին,
հաւանաբար ցաւող չզտնուի, կամ ջիւշեր
միայն:

Յաջողութեան ապահովութիւնը ու-
նեցող, լաւ կառուցուած թատերակ գո-
յութիւն չունի այլեւս: Երէկուայ տի-
պար թատերակները, թատերասրահները
չեն լեցնէր այլեւս, վաղուան համար
գրուած թատերակը՝ նոյնպէս:

Կանցնինք անկայունութեան շրջան
մը, եւ երկու հաստատուն շրջաններ ի-
րար միացնելու համար (երէկը եւ վա-
ղը) արուեստագէտը պէտք է զայն այ-
սօր անդունդներու վրայ, պրկուած պա-
րանի մը վրայէն:

Անցնող տասնամեակներու ընթաց-
քին հոյակապ պատրանաթափութիւն մը
առաջացած է. այսօր կասկածելի կը թը-
ւին, հանրութեան եւ մտաւորականու-
թեան նոյնիսկ, աշխարհի բոլոր Վիճակ-
բը, եւ խարկանքներով լի շաղակրատու-
թիւնը:

Ամէն ինչ որչ ու յստակ էր երէկ,
եւ անձնաւորութիւն մը ունէր անուն մը
եւ այդ անունին կապուած որոշ յատկու-
թիւններ: Որով բաւերու դործածութիւ-

նը իմաստ մը ունէր, կը ծառայէր բա-
ցատրեւու զգայնութիւն մը, մտածում
մը, պատրանք մը նոյնիսկ: Այսօր, կը
նշմարտի արդէն, թէ բառերը չեն ար-
տայայտեր լրիւ իրականութիւնը: Այսօր
կ'անդրադառնանք արդէն, քէ աքառ մը
աքառ չէ, դիմագիծ մը դիմագիծ մը չէ,
թէ ներթափ ԿԸ ԲԱՆԱԳԻՐՈՒԹԻ ԵՒ ԿԸ
ՏԱՐԲԱՂԱԳԻՐՈՒԹԻ ԱՄԷՆ ԲՈՊԻ, ԱՆԴԱ-
ԴԱՐ, որով ՎԵՐԱՏԱԿԱՆԸ ԿՐՆԱՅ ԱԻՆ-
ՎԻ ՄՕՏ ԸԼԼԱՄ ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ, զան
անմիջական նկարումը տեսնուածին:

Մինչեւ անգամ խառնուածքներն ու
տիպարները հորցակուն կը դառնան այ-
սօր. է՞նչ ենք մենք, ո՞վ ենք մենք, է՞նչ
կը ներկայացնէ անհատը, ինչպէ՞ս սահ-
մանել զայն. չէ՞ որ մենք նոյն ատեն
ձայն ենք, մտածում ենք, բառեր ենք,
լուսթիւններ. արձագանքներ, յիշողու-
թիւններ, յիշատակներ, ներաշխարհի
ցարդ շնամարում մղումներ, ժառանգա-
բար ստացած աննշմարելի ու անշափելի
կարելիութիւններ...:

Եւ դեռ կայ այն իրողութիւնը, որ
մենք ամէն բովանդակում մէջ ենք,
երբեք նոյնը չենք, խորքին մէջ, ընդհա-
նուր ձեւով միայն նոյնը մնալով հան-
դերձ:

Բոլոր ճշմարտութիւնները, յարաբե-
րական են այլեւս, ինչո՞ւ չարունակել
հաստատունի ու մնայունի մտասեւեռու-
մով ապրել:

Այս բոլոր հաստատումները կատա-
րելէ, հարցականները զնելէ ետք, նոր
ճամբաներու համար խարխափումներ
տևողի կ'ունենան, կարենալ գտնելու հա-
մար ներկայ ըմբռնողութեան ամենահա-
րազատ արտայայտութեան ձեւը, միջո-
ցը, թատրոնի բեմերուն վրայ:

Առաջին հաստատումը որ կը կա-
տարուի արդի թատերագիրներուն կող-
մէ, թատրոնի կոչումին կը վերաբերի:
Հեռատեսիլն ու սինեման յղիպացուցած
բլալով հանդիսատեսները, կեանքի ա-
ուորեայ դէպքերէն բխող տրամներով կամ
կատակերգութեամբ, թատրոնին պար-
տականութիւնը դարձած է հանրութեան

գլխաց ցուցանանքի այն խոր իրականութիւնները, որոնք առօրեայ կեանքին մէջ, սովորական գործունէութեան մը ընթացքին երեւան չեն գար, ըլլալով հանգերձ բուն մղիչ պատճառները մեր շարժումներուն, ապրումներուն, մտածումներուն:

Թատրոնը ուրեմն, ըստ նոր ըմբռնումներուն, պէտք է դառնայ մտաւոր որոշ պատրաստութեան տէր հասարակութեան մը արուեստի վայելքին տունը, ճշմարտութեանց փնտառուքի վայրը (յարաբերական միշտ):

Հարցը ենթադրական կանխիկ տրոտուքի մասին չէ, այդ ուղղութեամբ գրուած բազմաթիւ թատերական կանարդէն, եւ անոնք ալ սկսած են անբարար համարուիլ: Ենթադրական կանխիկ փնտառուքը դարձեալ որոշ քարացում կը պարունակէ իր մէջ, որոշ անշարժութիւն, մինչ մարդը յարափոփոխ վիճակ մը կ'ապրի: Աւելի խորը պահուածին փնտառուքն է, որ պէտք է նիւթ ըլլայ արդի թատերական գրականութեան:

Երկրորդ պահանջը՝ բառերէն ձերբազատուելու պահանջն է. բառերը, կ'ըսեն նորերը, այլեւս ոչինչ կը փոխանցեն, իմաստազրկուած են մեծ մասով, անբարար յանախ (քանի որ բառերը, գոյութիւն ունեցող բառերը՝ ծնունդն են հին դարերուն, երբ ներաշխարհի պիտութիւնը, գոյութեան անդրադարձումը անզամ, այսքան առաջացած չէր, ուր մնաց ներաշխարհէն անդին գտնուող, աւելի խոր ենթաշխարհը մարդուն):

Մէկզի պէտք է թողուլ, կ'ըսեն, նաեւ էնթրիլը, անմնաւորութիւնները, ոճը, եւ մանաւանդ կԱՊԱԿԻՅ կԱՌՈՅ-ՅԸ:

Պէտք չէ սարսփիլ յանպատրաստ-

տից արտայայտութիւններէ, հեղինակը պէպի հոս պէտք է առաջնորդէ դերասանները: Բեմին վրայ յորս հոգիի ներկայութիւնը ինքնին տրամ մըն է, տըրամ մը կ'առաջացնէ ու աւելի մօտ է առօրեայ յարափոփոխ իրականութեան, երբ կաշկանդուած ըլլայ ՏՐԱՄԱՌԱՅԱԿԱՆ կԱՌՈՅԻ, կԱՊԱԿԻՅ ԱՄԲՈՂՁՈՒԹԵԱՆ պահանջներուն հետեւանքով, բառերուն կաղապարումով, այլ պահուի տեսակ մը հոտուն, յարափոփոխ վիճակի մէջ: «Շարժումին եւ անկանոնութեան մէջ է, որ նոր կարգ ու կանոնը կարելի պիտի ըլլայ գտնել» (Փեթեր Պրուք): «Թատրոնները լեցուն պահուի համար, արդի հասարակութեան պահանջները դոճացնելու համար, պէտք է բեմին վրայ ներկայացուի կեանքէն աւելի ուժեղ բան մը. ատիկա պիտի տայ ցանկութիւնը կրկին դալու թատրոն: Սակայն եթէ տանք վերանցական (Թրամանտան) բան մը, փորձ մը, պիտի առաջացնենք պահանջը՝ վերադառնալու թատրոնին: Պէտք է մոլութեան վերածուի թատրոնը, հանդիսատեսին համար» (Փ. Պրուք):

Այս բոլորը դեռ փնտառուք է, եւ՝ եւրոպական մտաւորականութեան համար: Մեր կեանքը չէ անցած եւրոպական կեանքի փուլերէն, եւ անբնական պիտի ըլլար մեզի համար, (գէթ մեծամասնութեանը համար, մտքի հարցերով զբաղողներուն) յայտարարել թէ վերը յիշուած մօտեցումը մեր սպասածն ալ է, մեր փնտառածն ալ է: Սակայն անհրաժեշտ է կատարել ճիշտ մը, ըմբռնելու համար ինչուներն ու ինչպէսները, եւրոպական գրականութեան փնտառուքներուն, քանի որ կրնայ վաղուայ թատերարտիւթները ըլլալ այն՝ որ այսօր դեռ սաղմնային վիճակի մը մէջ է:

Բ. Փ.

ՀԱՅ ԳՐԱԿԱՆ ԱԾՈՒՆ

ՎԵՐՋԻՆ ՔԱՌԱՍՆԱՄԵԱԿԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆՆԵՐ ԾԻ
ՄԱՏԵՆԱՇԱՐԿՆԵՐ

Հրատարակչական հիմնարկութիւններ կամ միութիւններ, բառին լայն առումով, գրեթէ պակասեցան մեր մէջ:

Իր բնավայրէջ գրկուելէ ետք գրականութեան մասին մտածող իւրաքանչիւր հոսանք կամ անձ, աշխատեցաւ էր կարելին ընել զարկ տալու համար հայ գիրքերու հրատարակութեան:

Այս ուղղութեամբ առաջին լուրջ ձեռնարկը եղաւ Նաեասակ Գրազէտմբու Միութեամբ հրատարակչականը:

Յուժար մը գրողներ, մեծ մասամբ նորեր, միանալով՝ 1930-ին Փարիզի մէջ հիմնեց այս Ընկերակցութիւնը, ցարդ տուած է տասնըութը հասար մեծագոյն մասը նահատակուած գրագէտներու ընպատած գործերէն:

Յուսարի Մատենաշարը տուաւ հարիւրէ աւելի հատորներ:

Պէյրուսի մէջ 1925-ին Զանակիր մասնաշարը լոյս ընծայեց տասնըութը գործ:

Նոյն ջաղաքին մէջ, աւելի վերջը Ազդակ ունեցաւ էր մատենաշարը և վերհրատարակեց սպասած շարք մը բառարաններ, Համաստեղի Գիւղը, Հիւկոյի թշուառները, Սենթիեւիչի Յո՞ երթաւը, Անգլերէն Զրուցատուաբիւմ մը, եւււլն:

Անթիլիասի Կաթողիկոսարանը ունեցաւ նմանապէս էր մատենաշարը ու առուաւ շահեկան կարգ մը հատորներ:

Նոյն վայրին մէջ գոյութիւն ունին ներկայիս Համագոյալիներ, Սեւանի, Տօնիկեանի, Արամազդի, Էտուանի եւ այլ մատենաշարները:

Պոսթընի մէջ Հայրենիք եւ Պայքար, Թեհրանի մէջ Ալիք, Աթէնքի մէջ - ատեն մը - Նոր Օր, Պ. Այրէսի մէջ Արմենիա եւ որոշ տեղեր անհաս գրատուններ, ինչպէս Հ. Սամուէլեան, Մ. Պարսամեան, ունեցան իրենց մասնակի հրատարակչականները, առանց հաշուելու Վիեննայի եւ Վենետիկի Միթրարեան Միարանութեանց եւ Երուսաղէմի Մ. Յակոբեանց տպարանէն լոյս ընծայուած բազմաթիւ գիրքեր, որոնք սփիւռքեան գրականութեան մաս կը կազմեն:

Լքուած էր ճակատագրին, քառասուն տարի է ահա Սփիւռքի մէջ հայ գրողը կը պայքարի մէկ կողմէ էր օրապահակին՝ միւս կողմէ գրականութեան ի խնդիր:

Գաղթած իւրաքանչիւր թիրթի վոխարէն նոր մը լոյս կը տեսնէ միւս:

Այսպէս, տասը տարիէ ի վեր Փարիզի մէջ կը հրատարակուի Բ. Թոփալեանի խմբագրութեամբ Անդաստան ստուար պարբերականը, նոյն ջաղաքին մէջ Հ. Բալուեանի, ինչպէս տեսանք, կը շարունակէ էր Զուարթնոցը, Պէյրուսի մէջ Ս. Սեզա կը հրատարակէ Երևանասարգ Հայուհին, Միմոնեան՝ Սփիւռքը, Ա. Մատուկեան՝ Նայիրիւմ, Թեհրանի մէջ Ալիք օրութիւրթի կողքին սկսած է լոյս տեսնել գրական բովանդակութեամբ համանուն ամսագիր մը եւս:

Պոլսոյ մէջ Գարեգին Պատ. Խաչատուրեան խմբագրեց էր Եղակաբը, նոյն վայրին մէջ Միթրարեան վարժարանի սաներուն կողմէ կը հրատարակուի Սանը: Ազգ. Ս. Փրկիչ Հիւանդանոցի բժշկական ժամանի կողմէ՝ Ս. Փրկիչ առողջապահական թերթը:

Այս ամսաթիվներուն եւ պարբերականներուն կողքին լոյս կը տեսնէ մասնակներու համար Պարսկզ անունով շաբաթաթիւեր մըն ալ:

Երեսուն տարիէ ի վեր Պոլսոյ մէջ լոյս կը տեսնէ Բազմաթեւանի Երջանիկ Տարեգիրքը: Պէյրուսի մէջ կարօ Գէորգեան ինը տարիէ ի վեր ձեռնարկած է Ամէնում Տարեգիրքի հրատարակութեան, նոյն վայրին մէջ Պօզոս Արնապեան տուաւ իր Միջնարեւել զրական բովանդակութեամբ տարեգիրքին երկու հատորները:

Տարեգիրքէ հրատարակութիւնը զբաղական իւր յոյս սեռերէն մնաց մեր մէջ:

Տարիներ շարունակ թէրգիկ հրատարակեց իր համաբաւար տարեգիրքերը: Սիմոն Գարամանեան ունեցաւ իր Կրպանի տարեցոյցները: Արտուազը Եպիսոպ. Սիւրմէեան Հայէպի մէջ հրատարակեց Տարեւ անունով տարեգիրքը: Պոսթընի մէջ Ս. Վրացեան 1943-1948 տուաւ Հայրենիք տարեգիրքերու, վեց հատորները: Աթէնքի մէջ Նար Օրի խըմբազրութեան Նախաձեռնութեամբ 1928-1932 լոյս տեսան Յուճահայ Տարեգիրքերու լորս շարք, Հ. Բալուեան, Փարիզի մէջ տուաւ Առաքեանց Տարեգիրքի երկու համար: Տարեգիրքերը պատրաստեցին Մ. Մ. Պարսամեան Եղբայրներ, Ա. Սեւան, Համազգային Միութիւնը, Հ. Պոստըրեան, Պայժար, եւ ուրիշներ եւս:

ՍԻՋԻՆ ԱՐԵՎԵԼԻՔԸ ՔԱՌԱՍՆԱՄԵԱԿԻՆ

Միջին Արեւելքը, - անոր մաս նկատելով Եզիպտոսը, Լիբանանն ու Սիւրիան, - վերջին քառասնամեակին առաջնակարգ դեր մը ունեցաւ Մփիւղքի հայ զրականութեան մէջ:

Այս երեք շրջաններուն մէջ ունեցանք ոչ պակաս քան երկու հարիւր հազար ազգայիններ, որոնք հիւրընկալ երկիրներու կողմէ դասն բարոյական ամէն դիւրութիւն՝ զարգանալու եւ համախումբ կենցաղով բնավայրի իրենց ապրումները շարունակելու:

Եզիպտոս աւելի հին գաղութ, արդէն ունէր իր վարժարանները, ակումբները, թերթերը եւ մշակութային օրկաններ:

Հոն կեդրոնացած մասաւորականներ էթէ անձամբ ահօս շրային զրականութեան մէջ, կրցան զէթ իրենց շատ մօտ երկրի մը, - Լիբանանի մէջ, - Հայեցի դաստիարակութեամբ սերունդ մը պատրաստելու զաղափարը իրականացնել:

Ենորհիւ ուրիմն անոնց է, որ հիմնընկաւ 1929-ին Պէյրուսի մէջ Համազգային Փայանձեան ձեւարանը, որուն ղեկավարութիւնը ստանձնեցին Լեւոն Շանթ եւ Նիկոլ Աղլալեան:

Տասնեակ մը տարիներ ետք, արդէն պոլութիւն ունեցող ուժերու վրայ կ'աւելնային նորեր, և հունձքը կը դառնար շօշափելի: Հրատարակային դասախօսութիւններ, ներկայացումներ եւ հանդիպումներ կը ստեղծէին զրական միջնուրրտ, ուր կը խթանուէր նորերու հետաքրքրութիւնը:

Պէյրուսի ինքնին մասաւորական մեծ կեդրոն մըն է արդէն Միջին Արեւելքի մէջ: Աւելի քան մէկ դարէ ի վեր հոն հաստատուած են Ամերիկեան եւ Ֆրանսական զոյգ բժշկական, իրաւաբանական, երկրաչափական համալսարաններ:

Գրականութիւնը նմանապէս պատուոյ իր տեղը ունի բարձրագոյն ուսման յատկացուած այս հաստատութեանց մէջ, այնպէս որ պատկաւորներ՝ ստեղծուած զրական հայ միջնուրրտին նպաստէն օգտուելով՝ կարճ ատենէն զարձան ընդունակ օտար բարձրագոյն կրթութեամբ իրենց ստացածը դարձնելու ազգային մշակութիւն համար սատար մը:

Քառասնամեակին այս երեք կեդրոններուն մէջ հրատարակուած թերթերը, ամօպիւրները եւ զէրքերը իրենց քանակով ստուերի մէջ կը ձգեն Մփիւղքի ալ շրջաններու զրական արտադրութիւնները:

Եւ ասիկա հակառակ անոր, որ մինչեւ երկրորդ աշխարհամարտը Միջին Արեւելքի կարեւոր մէկ մասի մեր հայրենակիցները պահանջը զգացին իրենց հե-

ուսուր ազգակիցներու նիւթական ձեռնարկութեան, կրթական եւ այլ մարդերու մէջ:

Իր աշխարհադրական եւ քաղաքական պայմաններով, Լիբանան կ'ընձեռնէ հայ մարդուն կարգի մը բարիքներ, որոնցմէ գուրկ են հայրենակեանու գաղութներու մէկը ազգակիցները:

Այսպէս, օրինակ, իրիկունէ իրիկուն, մեր հայրենակիցները կրնան լսել Նրեւանի ձայնասփիւռը, ընդունիլ պարբերաբար այցելութիւնները մտաւորական եւ արուեստագէտ զէմքերու, շրժման գալ անմիջական հարեւոյն այլ գաղութներու հետ — Սիւրիա, Իրան, Յունաստան, Ֆրանսա, Կիպրոս — եւ այլն: Արդ լուրեր ստանալ զոր գաղութներէ ու յարաբերութիւններ պահել ամէն տեղի հետ:

Իրենց կարգին, երկրին իշխանութիւնները տունին ամէն ազատութիւն մեր բաղձութեանց՝ զարգացնելու իրենց լեզուն, մշակոյթը եւ այլն:

Հայութիւնը սիրուած տարբ՝ սիրեց հիւրընկալ երկրի, որ իր բնական գեղեցկութիւններով զարձաւ նոր ազգակ մը, հասնող սերունդին հողին լուսուոր սպարմաներու կապելու տեսակէտով:

Փրանսահայ մտաւորականութեան հետ Լիբանանայ մտաւորականութիւնը քառասուն տարիներու ընթացքին յժուեցաւ մեր զբաղանութեան ջանք բարձր ու մշտաժառ պահելու պատուարներ ճիւղին:

Հրաշք եթէ չգործուեցաւ, չեփորուեցան սակայն սերունդի մը կամքը նոր հանգանակներու ձօնեցնող խօսքեր...

Փրակնութեան պատմութեան կը մնայ օր մը անդրադառնալու անոնց:

ԻՐԱՆԱՀԱՅ ԳՐԱՎԱՆ ԿԵԱՆՔԸ

Իրանահայ զբաղան կեանքը ստանձին սուսմիասիրութեան մը առարկայ դառնալու ուստի՞ ճան հարուստ թաւալումներով ընթացաւ վերջին քառասունամեակին: Ատոր նպաստեցին Փետրուարեան ապստամբութեան հետեւանքով

հայրենիքէն հեռացած եւ Իրան անցած կարգ մը գրողներ եւ մտաւորականներ, ինչպէս՝ Լ. Շանթ, Ն. Աղբալեան, Ս. Վրացեան, Վ. Վալուդեան, Հ. Տէրաէրեան եւ ուրիշներ, որոնք ժամանակ մը հոն մնալով՝ ստեղծեցին մտաւորական մթնոլորտ:

Անցնող քառասուն տարիներու ընթացքին, Իրանահայութիւնը բախտը ունեցաւ ազգային գործերու առաջնորդութեան յժուած տեսնել Մելիք-Քանազեան Արք.ի նման մտաւորական եւ վարչական բարձր առաջինութիւններով օժտուած հոգեւորական մը, որ դարձաւ զօրավիդ աշխարհական տարբերու մշակութային մարդերու վրայ թափուած ճիւղերուն:

1930-էն սկսած Քեհրանի մէջ լոյս կը տեսնէ Ալիէլը, որ ունեցաւ իր մատենաշարը նոյնպէս: Անոր տպարանէն լոյս տեսան շարք մը հատորներ եւ անհատ գրողներու գործերը նմանապէս: Քեհրանի մէջ կան ներկայիս քանի մը տըպարաններ. հայ մամուլը կը գործէ անւարար:

Նոյն քաղաքին մէջ շուրջ տասներկու տարի է, իմբադրութեամբ Մ. Միրզոյեանի, կը հրատարակուի Նոր էջ գրական հասարակոյն, որուն կ'աշխատակցին չափածոյ եւ սրճակ գրութիւններով՝ Ա. Ասլըն, Ս. Մինասեան, Ա. Տ. Յովհաննէսեան, Մարգար Ղարաբեգեան — Դեւ —, Արսէն Գէս եւ ուրիշներ:

Հոն են բանաստեղծուհի Արշի — Արշալոյս Բարայեան —, Բժիշկ Իսահակ Տէրտէրեան, Վիլնը եւ տղամարդը, Փակ դրամ յետին եւ այլ ծաւալուն գործերու հեղինակը, բանաստեղծ Արամ Գարունէ, հեղինակը Հրամեյտի պոէմ, Բոննա-տեղծութիւններ, Արամ եւ Շամիրամ, Աշնանամուտ, Բոննա կատուն եւ այլ գործերու: Անոր իմբադրութեամբ լոյս կը տեսնէ շրջանի միակ մանկա-պատանեկան ամսագիրը՝ Լուսաբեր: Հոն է արեւմտահայ Հ. Աճէմեան, ծանօթ՝ Խըրիմեանի մտտին պատրաստած իր ընդարձակ մէկ ուսումնասիրութեամբ եւ այլ գործերով:

Իրանի մէջ մեր քանակը հաշուեց

կարգ մը ակննուոր մտաւորականներ: Յիշենք Հանդուցեալներ Համբարձում Տէրութեանը, Յ. Յակոբեանը - Իրազեկ - , մանկավարժ Պիոնեանը: Ներկայիս Հոն կը դանուին գործօն աշխատանքի լծուած մտաւորականներ Հ. Կոստյեան, Ա. Գասպարեան, Բրոֆ. Մինասեան, եւ ուրիշներ:

Այդ շրջանէն Մ. Նահանգները անցան Սփիւռքի մեր գրագիրուհիներէն երկուքը, Հեղինէ Դաւթեան եւ Լուսիկ Ստեփանեան - Լուսիկ - :

Խմբագրութեամբ Երուսաղէմ Բազմնի, 1949-էն այս կողմ, Թեհրանի մէջ լոյս կը տեսնէ արտասահմանի միակ հայերէն երգիծաթերթը՝ Յալալալի: Դարձեալ այդ քաղաքին մէջ է որ ամէն տարի կանոնաւորաբար հրատարակ կը հանուին պատի գունատիւլ եւ գրական բովանդակութեամբ պատկերազարդ սիրուն օրացուցներ, Նայիրի, Արեւիք եւ Բաֆֆի անուններով:

1940-ին Յովսէփ Թաղէտեան Հոն Հիմնեց իր Արիի գրական, գիտական եւ հասարակական բովանդակութեամբ ամսագիրը, իսկ Անտրէ Օհանեան, Հեղինակը Անցած օրերի շարքն գործին, խմբագրեց Արմենուի ամսաթերթը:

Երջանը վերջին քառասունամեակին տուաւ ինքնագիր ու թարգմանածոյ աւելի քան հարիւր հատոր բանաստեղծական, վիպական, բնկերաբանական եւ գիտական բովանդակութեամբ երկեր: Որպէսզի վառ մնայ մեր զանգուածներուն մէջ Հետաքրքրութիւնը հայ մշակոյթի եւ Դատի հանդէպ, հրաւիրուեցան տասնեակ մը մտաւորական ղէմքեր, ու կապը ըստ կարելոյն աշխատուեցաւ կենդանի պահել Սփիւռքի այլ շրջաններու հետ:

Ըսենք այս առիթով, որ Իրանի առաջին ապարանը հաստատուած է 1640-ին, Ռաչատուր Եպիսկ. Կեսարացիի կողմէ, նոր Զուղայի մէջ:

Հայութիւնը Հոն կը հաշուէ մէկ քանի միլիակարգ եւ բազմաթիւ տարրական դպրոցներ: Արդէն կազմաձեւուած գաղութ, շրջանին մէջ կան երաժշտա-

կան, թատերական, գեղարուեստական, բարեսիրական եւ այլ միութիւններ, լծուած ցեղապահպանման սրբազան աշխատանքին:

Ենթահիւ թափուած ջանքերուն, կարելի եղաւ վերջերս պետական համալրարանի մէջ հաստատել հայագիտութեան ամպիոն մը, որ կոչուած է ոչ միայն բարձրացնելու վարկը մեր բազմութիւններուն, այլեւ ուժ տալու որակեալ հայագէտներ պատրաստելու մեղին:

Իրանահայութիւնը Հայրենամերձ մեր մեծագոյն գաղութն է, իբրեւ այդպիսին, ան կը մնայ պահեստի անփոխարինելի զբամազլուխ մը ապագայ ազատ Հայաստանի համար:

ԿԱՊԻ ՊԱԿԱՍԷՆ

Սփիւռքի հայ գիրքը չի հասնիք հայրենիք, հետեւաբար ազատութ չունի շուրջ երկու միլիոն հայերու մօտ:

Կարգի պահպանել սահմանափակ է գիրքին ուղարկուած գաղութներու մէջ:

Վերջին աշխարհամարտով փակուեցան նաեւ ազատման երկու կարեւոր շուկաներ, - Պուլկարիա եւ Թումանիա, - ուր ունէինք որչափ ընթացողներ: Նոյնն է պարզան մասամբ Պոլսոյ, ուր արգելուած է մուտքը Սփիւռքի մէջ լոյս տեսած ազատաշունչ թերթերու եւ գիրքերու:

Գրական մեր ածուն հակառակ այսօրան աննպաստ պայմաններու, անցնող քառասունամեակին ոչ միայն չմնաց անհերկ, այլ յամառ ու կամաւոր նուիրումովը հայ գրողներու նոր փաղանգի մը, ծաղկեցաւ եւ աճեցաւ:

Տուաւ յարգարժան հունձք բանաստեղծական, վիպական, թատերական, կենսադրական, պատմական, յուշագրական եւ քննադատական մարզերու մէջ:

Կը գտնենք անտեղի եւ մեղաւոր թափուած շորս տասնեակ տարիներու այս վաստակը ստորագնահատելու հապենակ մը, իբրեւ հետեւեալ կոտորակուած եւ վարկապարտի պրպտումի եւ հետաքրքրութեան:

ԲԱՆԱՍՏԵՂԵԱՆՆ ԳՐԱՎԱՆՈՒԹԻՒՆ

Հին ու նոր բանաստեղծներ շարունակեցին դարձնել դարպասել մուսանի-րուն:

Անոնցմէ իւրաքանչիւրը համաձայն իր խառնուածքին ու ներշնչումներուն՝ ըսաւ իր խօսքը:

Որակը եթէ չգերազանցեց նախապատերազմեան շրջանի առաջին դժին վրայ կանգնած մեր մեծ գերթողներու գործը, կրցաւ ասկայն մնալ իր անունին պատիւ բերող բարձրութեան վրայ:

Գրականութեան այս սեւը նախնողունեան երկրորդ աստիճանի գերթողներու վաժնուակէն մնաց աւելի բարձր ու դարձաւ, առանձնապէս լեզուի մարդին մէջ, նոր նպաստ մը մեր մշակոյթին համար:

Առանձին Հասորներով գերթողական կալուածը պեղեցին Արշակ Զօպանեան, Ահարոն, Արամ Զարբա, Արսէն Երկաթ, Արմէն Սեւան, Արշամ Տարսեան, Անտոն Կաղէլ, Արամայիս Սրապեան, Անդրանիկ Մատուկեան, Արամ Գառնէ, Արմէն-Անոյշ, Ա. Յակոբեան, Արշ. Մըկըրաբէ, Ա. Սեմա, Ա. Շաւարշ, Արսէն Աճէմեան, Աբր. Սվանեան, Ա. Սոփոկլեան, Ա. Թազարեան, Ա. Գլընեան, Ա. Ալիքեան, Սեպա, Արմեպիլ, Ա. Աւլըն, Բիւզ. Թոփալեան, Բիւզ. Կոանեան, Բիւզ. Չէքիճեան, Գէորգ Կառվարենց, Գուրգէն Թրենց, Գառնիկ Յովհաննէսեան, Գէորգ Զաքընեան, Գէորգ Դարժի, Գուրգէն Գլխունի, Գալուստ Կաննեց, Մարգար Դարիպեան - Դեւ - , Դ. Շամլեան, Եղիվարդ - Ե. Աբբ. Տէրտէրեան - , Եղիա Մեիքեան, Ե. Այվազեան, Ե. Պարսումեան, Ե. Կոպէլեան, Եփրեմ վրդ. Ղազարեան, Ե. Գաւալընեան, - Արմէն-Ամուր - , Զաւէն Սիւրմէլեան, Զարեհ Պլպուլ, Զարեհ Գազադեան, Զոհական - Համբարձում Յարութիւնեան - , Զ. Մելքոնեան, Զ. Միրզայեան, Զահրատ, Թորոս Ազատեան, Թ. Գառնիկ, Ժառ Յ. Յակոբեան, Լուսինի Մինաս, Լեւոն Գարձէն, Եղուարդ

Պոյաճեան, Խորէն Լուսիկեան, Խաչիկ Ամիրեան, Խաչիկ Զուլֆայեան, Կարապետ Փոլատեան, Կ. Սիտալ, Կ. Զարեան, Կ. Մկրտիչեան, Հմայեակ Շէմս, Համասեղ, Հայրաբի, Համազասպ Մեհրապեան, Մատթէոս Զարիֆեան, Մեհրուստան Պարսամեան, Մուշեղ Իշխան, Մինաս Թէօլէօլեան, Մեսրոպ վրդ. ձահաչեան, Մանուկ Մանուկեան, Մ. Զըրզոն, Յակոբ Անտոնեան, Յ. Գեղարդ, Յ. Աստուրեան, Յարութիւն Աղայեան, Յ. Կոստանկեան, Յ. Տապաղեան, Ն. Սարաֆեան, Նշ. Պէշկիթաչեան, Ն. Թազուրի, Հարզան, Նուպար Զարեառեան, Շ. Նարդունի, Շ. Կառվարենց, Պ. Գրիգորեան, Ոստանիկ - Յովհաննէսեան - , Վ. Թէքէեան, Վահրամ Թաթուլ, Վ. Գ., Վ. վրդ. Յովհաննէսեան, Վ. Մալէզեան, Վահրամ Մաւեան, Վահրամ Սօֆեան, Վահէ-Վահեան, Օ. Զանգու, Օ. Կիւրմէլեան, Օհան Կարօ, Օննիկ Զարմունի, եւ ուրիշներ հաւանորէն, առանց հաշուելու մեր գերթողներները: Կան եւ շատեր, որոնց գործը դեռ հասարկ մը մէջ չէ գետնոդուած:

Ասոնք բոլորը կը մնան Սփիւռքի գրական մեր անունին մշակները, որոնց վառասակը անբաժան մասը կը կազմէ քառասուն ասրիններու արտերկրի գրական ճիւղերուն:

Յաւակնելի, թէ ինչ որ տրուեցաւ այս բաժնին մէջ զուտ ոսկի է, պիտի ըլլար միամտութիւն: Պղինձը մնաց միշտ ալ խառնուած ոսկիին, բայց սեւին լաւազոյն ստեղծազորութիւնները դարձան մեր ամբողջական մշակոյթը ճոխացընող հարստութիւն: Նոյնը կրնանք ըսել Հայաստանի մէջ մշակուած բանաստեղծութեան համար, ուր լուսաւոր յայտնութիւններու կողքին միջակութիւններ կը մնան անպակաս:

ՎԵՊԸ ՍՓԻՒՆԻՔԻ ՄԷՋ

Վիպական մարդի վրայ ինչ որ տըլաւ հայկական Սփիւռքը, կարելի է առաջընթաց նուաճում համարել:

Արեւմտահայերու ժողովրդի, Մա-
մուրեան, Այվազեան, Կամարական, Ե-
րուխան, Զօհիւրեան, Սրբուհի Տիւ-
սար, Զապէլ Եսայեան, Սիւլիւ, Ս. Բիւ-
րատ, Երտանեան եւ Քասիմ Մշակեցի
ընդարձակ վէպը: Վերջին երեքը մեջակ
արուեստով:

Յետ-պատերազմեան արեւմտահայ
վէպը յանձին Համաստեղի, Յ. Օշակա-
նի, Կ. Զարեանի, Եահան Եահուրի,
Վ. Երուստեանի, Հ. Զարգարեանի, Կ.
Փոլաանանի, Մ. Իշխանի, Լ. Եանթի,
Լուսիկի, Զարիստեանի, Մալխասի,
Վահրամ Տատրեանի, Հ. Զարգարեանի,
Լ. Մերտալի, Գ. Մերտալի, Ե. Պոյաճե-
անի, Ա. Անոյշի, Ա. Սահակեանի, Պ.
Սնայեանի, Յ. Տէրունիի, Բ. Նաւա-
նարեանի, Է. Բիւզանդի, յիշելով քա-
նի մը անուններ միայն, նոր զեղումով
խորացաւ ու զարձաւ ուշադրաւ:

Այս մարզին վրայ թափուած քրտին-
քը ոչ միայն արդարացուց յոգնութիւնը
այլեւ զարձաւ նպաստ մը բեղմնաւորե-
լու սկօսուած Հին դարը, որուն սահ-
մաները ներկայիս կը բացուին լուսա-
ւոր հորիզոններու վրայ:

ՊԱՏՄՈՒԱԾՔ ԵՒ ՆՈՐԱՎԷՊ

Սփիւռքեան կարգ մը գրողներ յա-
ջողութեամբ փորձեցին պատմուածքը եւ
նորավէպը:

Համաստեղ, Արամ Հայկազ, Ա. Մա-
նուկեան, Ե. Պոյաճեան, Բ. Նուրիկեան,
Փայլակ Սանասար, Կ. Մեհեան, Վիգէն
Գլակ, Զարեհ Որբունի, Սմբատ Փանոս-
եան, Պ. Սնայեան, Բ. Եղիայեան, Ս.
Մանուէլեան, Կոռապենց, Արսէն Եր-
կաթ, Ն. Զարիստեան, Արմէն Ամուր,
Պ. Զարոյեան, Հ. Սարգիսեան, Ե. Սիմ-
ֆէշեան, Յ. Ֆրէնկեան, Ս. Մանուէլ-
եան, (զանց առնելով կիները, որոնց
մասին առանձին) առին իրենց լուսա-
ւոր մշակող նորավիպադիրներու վաս-
տակէն:

Աւելին, անոնցմէ ոմանք, ինչպէս
Համաստեղ, Վահէ Հայկ եւ Ե. Պոյաճե-

ան, պեղեցին ուրացուած գիւղի կալ-
ուածը, ու խորացուցին հանդէպ բնա-
զաւաստի եւ Հողին՝ հետաքրքրութիւն
ու սէրը զանգուածներու մէջ:

Նետուած աշխարհի ամէն կողմը,
ուրիշներ փորձեցին տալ նոր չըջապա-
տէն անցքեր ու տիպարներ, Սօս-Վանի
հեքիաթով, Տարօնեան մանկապատանե-
կան պատմութիւններով թարմ տարր
մը աւելցուցին գրական մեր արժուին մէջ:

Եթէ հայրենի հողին կարօտը մնաց
վառ գրողներու մէջ, օտար միջա-
վայրէն բարձրացող իրաւունքներ ա-
ռաջացուցին անոնց մէջ հետաքրքրու-
թիւն, եւ արուեստը տեղ մը պահանջ
զգաց իր հովանին տարածելու անոնց
վրայ:

Այս տարրը փնտռեցէք ու պիտի
գտնէք Համաստեղի, Արամ Հայկազի եւ
ուրիշներու գրական վաստակին մէջ:

ՔՆՆԱՎԱՍԱԿԱՆ ՄԱՐԶԸ

Քննադատութիւնը, որ Օշականով
ենթարկուած էր պեղումի, փորձուեցաւ
ուրիշներու կողմէ եւս, համաձայն ի-
րենց խառնուածքին ու պատրաստու-
թեան:

Այս ուղղութեամբ իրենց նպաստը
բերին Գուրգէն Մխիթարեան, որ 1920-
1922, Պոլսոյ մէջ կեդրոնացած էր թա-
սերական գործերու եւ բեմական խա-
ղարկութեանց վրայ: Աւելի ետք, ան
ընդլայնեց իր հետաքրքրութեան ծիրը
եւ տուաւ Քառորդ դար գրականութիւն
չահեկան հատորը, նոյն ատեն կատարեց
թարգմանութիւններ Ձոյսյէն, Ձուտեր-
մանէն եւ Կուպրինէն:

Սեռը խայծեց ուրիշ կոչեցեալ մը
եւս, Բ. Թաշեան, որ Հայրենիք Ամա-
գրի մէջ կատարեց կարգ մը ուսումնա-
սիրութիւններ, կլանուելով ի վերջոյ մեր
լեզուին ու գրականութեան հետ սերտ-
րէն աղերս ունեցող հարցերով: Այս նը-
պատակով վերջերս երեւցան իր երկու
գործերը. Լսարան Հայ լեզու եւ Ներա-
ծութիւն հայ գրական պատմութեան:

Մկրտիչ Պարսամեան, նախեղեմեան

գրող, առաւ Մեռնոյ գիւղին պատմութիւնը, Ալին եւ Ակնցի գոյզ լուրջ գործերու հետ կարգ մը մենագրութիւններ, ինչպէս՝ Աւետիս Անարոնեան, կեանքը եւ գրականութիւնը, Ծաւալը Նարդունի, Արեւմտահայ - շորս - բանաստեղծներ: Պարսամեան երիտասարդի աւիւնով դեռ պատնէշին վրայ՝ կը շարունակէ կենդանի պահել իր հետաքրքրութիւնը հայ դրբին շուրջ:

Լիբանանէն, Գ. Շահինեան, առաւ գրքոյկ մը Համաստեղի մասին: Պ. Այրէսէն, Ա. Սեւան, լոյս ընծայեց նախապէս Հայրենիք Ամսագրի մէջ հրատարակուած իր մենագրութիւնները, այս անգամ Նախաստեղծներ անունին տակ: Համակրելի անուն մըն է Մ. Նահանգներէն Տոքթ. Հ. Գէլիքեան, որ թափանցումով կը պեղէ քննադատական սեռը:

Աւելցուցէք այս անուններուն վերայ մենագրութիւններով հրատարակ իշած ուրիշներ, ինչպէս՝ Վ. Ահարոնեան, Մ. Իշխան, Թ. Ազատեան, Լ. Իսահանեան, Ա. Ալպոյանեան, Ս. Շահապա, Գ. Ճիւղէճեան, Հ. Ժամկոչեան եւ այլն:

Գրականութեան պատմութեան նշուիրուած հատոր մը ստորագրեց Կ. Մասունի, ուրիշ մը Կ. Ճանաչեան, զանց կ'անենք սահմանէն անդին եւ այս կողմ համազգային համբաւի հասած Ն. Ալբալեան, որուն քննադատական վաստակը՝ ունի մէկէ աւելի շահեկան եւ հետաքրքրական կողմեր:

Մենագրութեամբ մը Վահան Նախարդեան անդրադարձաւ Զարեմցի ստեղծագործական տաղանդին: Քննադատական-մենագրական մարզը այսքանով չէ վերջանար անշուշտ, բայց այսքանն ոչ բաւական է հաստատելու համար, թէ հայ միտքը անցնող շորս տասնամեակներու շրջանին, յածեցաւ գրականութեան բոլոր մարզերուն հետ նաեւ այս կալուածին վրայ ու փորձեց իր խօսքը ունենալ լոյս տեսած բազմաթիւ գործերու կամ նախնականով մահացած շարք մը հեղինակներու գրական վաստակին

շուրջ:

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՍԵՌԸ

Անմշակ չմնաց նաեւ հայ թատերական սեռը: Գրողներ նոր գործերով նիւթ հայթայթեցին հայ բեմին, առանց հաշուելու օտար լեզուներէ կատարուած կարգ մը թարգմանութիւններ:

Ինքնագիր գործեր տունն Շանթ, Նշան Պէշիկթաշեան, Եղիա Փասպարեան, Ղ. Մելոյեան, Ա. Զօպունեան, Ս. Պարթեւեան, Գ. Իփէկեան, Գ. Դարժի, Գ. Վահան, Մ. Իշխան - Հայրենիք Ամսագրի մէջ -, Լ. Նազարեանց, Մ. Հանեան, Մ. Մարտի, Յ. Մարութեան, եւ ուրիշներ:

Թատերական գործին յաջողութիւնը պայմանաւորող գրքոյկ մը հրատարակեց Կ. Մեհեան:

Սփիւռքի մեր զանգուածները ամէն տեղ առիթ ունեցան ներկայ գտնուելու եւ վայելելու թատրոնով իրենց մատուցուած արուեստի գործերը:

Եթէ շատ տեղեր պակեցան արուեստով դերասաններ, սիրողներ աշխատեցան ընել իրենց լուսազոյնը հանդէպ հայ բեմին, վառ պահելու համար հետաքրքրութիւնը հատարակութեան:

Օտար միջավայրերէ անոնք քաղեցին ինչ որ կարելոր էր, տալու համար զայն ժողովուրդին: Ճիշտով մը եւ որոշ գոհողութեամբ, հաւանօրէն Սփիւռքը խթանէր խորացնելու կարգ մը երիտասարդներու մէջ նշմարուած շնորհներ:

Ձեզաւ այդպէս միշտ գծախտաբար, տարակեղրոն անձնասիրութեամբ, որ մնաց անտարբեր, շրջապատի ուժերու եւ արժէքներու նկատմամբ:

ԵՐԳԻՆԱՆՔԸ

Յանձին Նշան Պէշիկթաշեանի երգիծանքը ունեցաւ իր նոր եւ լուսազոյն ներկայացուցիչը: Օտեան գրկեց փառքը ու բաժնուեցաւ մեզմէ՝ մզկէ՛ կտք իր գլուխ-գործոցը՝ Փանդունին:

Պէշիկթաշեան աւելի քան երեսուն

տարի է ահա անսպառ եռանդով կը պեղէ սեռը, իրարու ետեւէ տալով տասնհակ մը հատորներ: Եղիպտոսէն ի՞նչ Տէտէնան քանի մը սրամիտ կտորներով սկսած է գրակել ուշադրութիւն:

ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂՄՈՒԹԻՒՆ

Արձակ բանաստեղծութիւնը չափածոյի մօտ ունեցաւ իր մշակները նոյնպէս: Շաւարշ Նարզունի, Կ. Մեհեան, Ա. Երկաթ, Մաննիկ Պէրպէրեան, մշակեցին սեռը գերազանց զեղումով:

ՅՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ

Ապրիլիան Եղեռնով մեր գրականութեան մաս կազմող գրական սեռ մը դարձաւ յուշագրութիւնը:

Յեղափոխական իր Յուշերով առաջին գծի վրայ եւ առաջին անգամ հրատարակ իջաւ Ռուբէն: Իրենց յուշերը տուին նմանապէս Մալխաս՝ Ապրումներ, Ճամբուս վրայ հատորներով, Վահան Փափազեան - Կոմս - Յուշեր, Երկու հա-

տոր եւ Խոմարի Հերոսներու ցարդ լոյս տեսած երեք զբոյժներով:

Արմէն Գարօ տուաւ իր Ապրումն Օրերը, Ս. Վրացեան կեանքի ուղիներով, Երկու հատոր, զօրավար Սեպուհ իր էջեր իմ Յուշերէնը երկու հատոր: Ուրբիշեք փորձեցին սեռը, բայց թերթերու մէջ, ոչ հատորով:

Պէտք է ընդունիլ, որ մեր մօտաւոր անցեալին հետ սերտօրէն շաղկապուած պործիշներու եւ ծանօթ գէմքերու յուշերով է որ կարելի պիտի ըլլայ օր մը գրել մեր յեղափոխական եւ քաղաքական կեանքին հարազատ պատմութիւնը: Այս տեսակէտով ահա՝ անփոխարինելի գանձեր են ցարդ տրուածները, որոնք աւելցընելով Հայկական սպանդի պատմութիւններուն վրայ, կ'ունենանք ամբողջական պատկերը տասներկններորդ եւ ըսաներորդ դարու առաջին կէսի հայկական կեանքին:

(3)

Վ. Գ.



ԹՈՒՂԹԵՐ՝ ԳՐՈՂԻ ՄԸ ՕՐԱԳԻՐԷՆ

« ԱՂՄՈՒԿՆ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ »

ԼԵՒՈՆ ԳԱՐՄԷՆ

Ա. - ԳՐԱԿԱՆ ՀԱՆԳԱՆԱԿՆԵՐԸ

Գրական տեսութիւններու անունով բարձրացող գոյնզգոյն եւ պոռոտ դրօշակները, գրական հոսանքներու ու վարդապետութեանց շուրջ ստեղծուած վէճերն ու տարակարծութիւնները՝ տըւեալներ են, մասամբ ինքնութիւնը արդարացին կրաւորական մտաւորականութեան կամ մտավախութիւնը փարատող այն տապնապին, թէ դարուն ողին չըմբռնելով՝ դարուն միտքն ու մտաւորականութիւնը կը զառնան ժամանակավերջի, թաղուելով առյաւէտ պատմութեան աղբիւններուն տակ:

Ժամանակի արշալին հետ շնորհանալու եւ կամ անկէ ետ մնալու արդի մտաւորականութեան հիւանդազին այս հոգեվիճակը Լոթրէամոն կը նմանցնէ հանրակառքը փախցնող մանուկի մը հետ, ի հեւ վաղքին կամ մոզանջին:

Վէճի նիւթ ըլլայ հաւանաբար, թէ գրականութեան անունով տարազուած տեսութիւններն ու առաջադրանքները՝ նպատակներ են պատուաստելու ստեղծագործական գրականութիւնը կամ տաւոյններ՝ յղկելու, ձեւաւորելու ներդաստնութիւնն ու տաղանդը գրողին:

Կա՞ն արդեօք այս վարկածին արուեստական յոխորտանքով ինքնապահ մտքեր, որոնք իրենց գրական վարդապետութեանց տեսարանական ծիրանիով կը փորձեն հովանաւորել գրականութիւնը, իրենց մտքին կրաւորականութիւնը ապրեցնելով՝ արուեստագէտին ստեղծագործող արիւնովն ու շիղեքու խայտանջովը:

Կա՞ն եւ լատ են անոնք. - ամբողջ դասակարգ մը, որուն գրական հարցերու շուրջ արծարծած տեսութիւններն իսկ հիմնուած են եթէ ոչ երրորդ՝ առ առաւելն երկրորդ կարգի ծանօթութեանց վրայ, - այնպէս ինչպէս վերջին գիտական նուաճումներն ու տեսութիւնները ժամանակակից մտաւորականութեան կը հասնին երկրորդ աստիճանի ծանօթութեանց. - օրաթերթերու կամ ժողովրդաշին գիտական հանդէսներու ճամբով:

Մեղադրանք մը չէ որ կը բանաձևեմ այս հաստատումով, որովհետեւ վերջին յիսնամեակին, այլապէս կայունացնելու ներս, մարդկային իմացական զարգացման ընդհանուր կատարելագործումը հասած է տեղ մը, ուր մարդուն կամ աւելի ճիշդ է ըսել քնակամոն մտաւորականի մը ուղեղը կը մատնուի անելի, երբ կը փորձէ յատակ, ամբողջական եւ ճշգրտօրէն ըմբռնել այդ զարգացման քարճրագոյն արտայայտութիւնները եւ կը բաւարարուի իր մտաւորականի հետ տաքրքրութիւնը գոհացնել՝ նիւթերու

Մեղադրանք մը չէ որ կը բանաձևեմ այս հաստատումով, որովհետեւ վերջին յիսնամեակին, այլապէս կայունացնելու ներս, մարդկային իմացական զարգացման ընդհանուր կատարելագործումը հասած է տեղ մը, ուր մարդուն կամ աւելի ճիշդ է ըսել քնակամոն մտաւորականի մը ուղեղը կը մատնուի անելի, երբ կը փորձէ յատակ, ամբողջական եւ ճշգրտօրէն ըմբռնել այդ զարգացման քարճրագոյն արտայայտութիւնները եւ կը բաւարարուի իր մտաւորականի հետ տաքրքրութիւնը գոհացնել՝ նիւթերու

ժողովրդականացած մատուցումով, երկրորդ կամ երրորդ կարգի ծանօթութեանց ճամբով:

Այսօր մեր շախմատի շնորհիվ աշխարհում փառաբանուած տիեզերագնացներուն յայտնակը կ'ըմբռնենք, տրուած տեղեկագրութեանց հիման վրայ, սակայն չենք ըմբռնիր եւ չենք ալ կրնար ըմբռնել այն ուղիղը, որ սուտղութեան բարձրագոյն արտայայտութեամբ, սենեակի մը մենուութեան մէջ, պարզ թուղթի մը վրայ մեղի ծանօթ թուանշաններով ապահովեց տիեզերագնացին թոխըը, անոր ընթացքն ու ճշգրիտ վերադարձը դէպի երկիր:

Այժմ վերադառնանք Լոթրէամոնի հանրակառքին: Դարուն ոգին արտայայտելու մեր տալանապը, արուեստը տիեզերականացնելու մեր մշտականը կը նպաստեն միայն տեսութիւններ տարազելու, անոնց շուրջ տարակարծութիւններ եւ պզտիկ ախորժակներ գոհացնող հետաքրքրութիւններ ստեղծելու: մինչ այդ, հանրակառքը կը սուրայ եւ հոն նստած դրագէտը հաին ձգած մեր ամէն տեսակի եւ գոյնի գրական վարդապետութիւնները, գլանիկը բերնին, իր սեփական աչքերով հանրակառքի բաց պատահանէն կը ներգգայ, կ'ապրի փախչող ցուցափեղկերը, անցնող մարդիկը, մայթերու խճողումը, ամբողջ կամ մասնակի տեսարաններ, որոնք իր ներաշխարհին մէջ ենթագիտակցական ճամբով կ'ենթարկուին խորման, կ'անցնին իր ներքին զնտաններէն, կը փչուրին, կը մանրալուծուին եւ վերստին համադրուելով կը դառնան ստեղծագործութիւն՝ անջնջի դրամովը ստեղծագործողին:

Սմէն ստեղծագործութիւն, խօսքս իրաւ գրողներու մասին է, առաւել կամ նուազ երանգաւորումով կ'արտայայտէ ժամանակի ոգին, որովհետեւ արուեստագէտը նախ մարդ է, եւ մարդն է, որ դաբերու հոլովոյթով կ'օղակուի իր տարած ժամանակաշրջանին՝ դրոշմելով հոն իր հոլովոյթին ներքին ուժականութեան շափն ու աստիճանը:

Ժամանակի ոգին մասնայատկութիւն մը չէ, ինչպէս ոմանք կը կարծեն, միայն 20-րդ դարու մեքենայի զարգացման կամ ճարտարաբանութիւնի իւրաքանչիւր դար ունեցած է իր ոգին եւ դայն արտայայտող տաղանդը:

Տանթէ, բոլոր ժամանակներու մեծագոյն դասականը, իր Աստուածային կատակերգութեան մէջ խտացուց իր ապրած ժամանակաշրջանի ամբողջ դճարութիւնը, մտածումներն ու շունչը — «Սթէ ալրիւր ըլլանք Միլին դարու ամբողջ պատմութիւնն ու վաւերաթուղթերը, կ'ըսէ պատմագէտ Հէնրիխ Վան Լուսն, Տանթէի դործը առանձինն կը բաւէ, վերստին կերտելու Միլին դարու գիմարիծը, այնպէս ինչպէս որ էր»:

Տանթէ արտայայտեց իր ժամանակի ոգին, առանց գրական հանգանակի մը կամ դպրոցի մը պարտադրիչ օրէնսդրութեան:

Ան, եթէ ոչ հանրակառք, սակայն ունէր կառք մը առուազն, որուն մէջ նստած հանդարտօրէն կ'անցնէր ծանօթ եւ անծանօթ ճամբաներէն, որսալով իր հոգիին եւ մտքին ուղեւորութիւնը՝ կեանքըն ու մարդիկը:

Տաղանդը շատեղծուիլը գրական դպրոցներով կամ վարդապետութիւններով:

Գրական դպրոցներն ու վարդապետութիւնները, նոյնիսկ գրական ըմբռնողութիւնները կը ծնին գրական գործերէ:

Այս այսպէս ըլլալով հաղերձ, այսօր կարծէք թէ փոխուած են դերերը եւ գրական հոսանքներու կամ հանգանակներու տեսարանները, դիւրին ճամբաներով եւ երկրորդական ծանօթութեանց պաշարով կը պայմանաւորեն գրականութիւնը իրենց տեսութեանց կշռաքարերով:

Համայնավար իրաւակարգին դրական հանգանակը՝ ձեռով ազգային, բովանդակութեամբ միջազգային: Յարայի եւ իր խմբակին ցուցապաշտական եւ զարուեստի նախապաշարումներն ու

բանականութիւնը ժխտող Տատայիզմը կամ գերիրապաշտ շարժումը, որ իր սկզբնական շրջանին գրական հանդանակ մը չէր եւ ոչ ալ քննադատական մեթոտ մը, այլ մտային վիճակ մը Հիմնովին փոխելու կեանքը՝ ստեղծելով նոր մարդը եւ երեւակայութեամբ վերադարձնել վտանգի եւ երկիւղի մէջ տուայտող նիրկայ մարդկութեան ոչ պայմանագրական պզտութեան զազափարը, - այսպէս կը պատգամէր միջազգային գերիրապաշտներու ցուցահանդէս-համագումարի 'չրբաւէրը՝ Ամստերտամի մէջ (*), - ծառայեցին միմիայն Ա. Աշխարհամարտէն վերջ ինքզինք կորսնցուցած Արեւմտեան, ի մասնաւորի Փարիզի եւ Պերլինի երիտասարդութեան արտառոցութիւններուն, ջղազար ելոյթներուն եւ անթեւահաղթային ճիշտով բանաստեղծութեանց մշակման:

Տատայիզմի տեսաբաններէն ժազ վաչէ անձնապատկերութեամբ գտաւ իր կորսնցուցած անձը, Իսկ Գերիրապաշտ շարժումը մինչեւ 10-ական թուականները լեռ մը աղմուկ եւ հեղեղ մը շփոթութիւն ստեղծելէ վերջ, այսօր հրատեղիի գլխարկը գլխուն, կոնակը դարձուցած կեանքին՝ կը հեռանայ, պարտուած ինքն իր մէջ:

Գալով ձեռով ազգային եւ բովանդակութեամբ միջազգային տեսութեան, որ աշխարհի հզօրագոյն պետութեան մը հրամայական պարտադրանքը դարձաւ, կաշկանդեց տասնամեակներ ամբողջ սլաւ ստեղծագործ մաքին թուիչը եւ պետականացած այս հանգանակը չկրցաւ արթնցնել սլաւական հանճարը ստեղծելով՝ «Գարամագով եղբայրներու» համարժէք գործ մը, իր ձեռով, իր Տիմիմիթիթիթերով, Իվաններով եւ Ալիոյշաներով՝ ազգային, սակայն բովանդակութեամբ, աւելի ճիշդ է ըսել խորքով ոչ թէ միայն միջազգային, այլ համամարդկային եւ իր մարդկայնութեամբ անմի-

ջականօրէն հաղորդիչ ներկայ եւ ապագայ ժամանակներու մէջ ապրող մարդներուն:

Տոտոյեակիի հանճարը ստեղծագործեց առանց ձեռով ազգային եւ բովանդակութեամբ միջազգային գրական հանգանակի մը պարտադրիչ օրէնսդրութեան:

Տոտոյեակիէն տասնամեակներ ետք, սլաւ երկու տաղանդաւոր բանաստեղծներ՝ Բլոք եւ Մայակովսքի, որոնք դեռ չէին հասած իրենց ստեղծագործութեան լրումին, փրկեցին իրենց տաղանդը՝ զրական պարտադրանքներու ճնշումէն՝ անձնասպանութեամբ, հակառակ որ երկուքն ալ համոզուած էր խառնուածքով զաշափարապաշտ համայնավարներէին:

Չարենց եւս բարձրացուց իր ձայնը գրական կաշկանդիչ այս հանգանակին դէմ, երբ ստորագրեց իր «Նօթը Ռորհուրդ Գալիքի Երգասաններին»:

Եւ ասում եմ ահա ձեզ, որ պիտի երգէք

Կարդալով մատենան այս խորախորհուրդ:

Խորհուրդ շի ընդունում ապագայի երգը, -

Եւ այս է իմ խորհուրդը
 Եօթներորդ...

Չարենց չէր ապրեր Արեւմուտքի մէջ, այլ կ'ապրէր մեծատիրական այն երկրամասին վրայ, ուր ամէն ինչ օրէնք էր եւ հրահանգ, եւ մազալափ շեղում մը Իսկ այդ օրէնքներէն եւ հրահանգներէն կ'արժէր օրինազանցին կեանքը:

Չարենց տաղանդ մըն էր, Ինչպէս բոլոր իրաւ տաղանդները՝ կը հաւատարմիմիայն իր ստեղծագործութեամբ բացուած ահօսին: Ան չէր հաւատար գրական մանուածապատ վարդապետութեանց միջոցաւ բացուած ահօսներուն: Չարենց տուաւ իր կեանքը այս շեղումին համար, ճիշդ է, սակայն փրկեց իր տաղանդը եւ մտաւ յաւերժութեան դռնէն ներս:

Գրողը չէ պատրաստուիլ, այլ կը

(*) Կարդալ՝ Cyrill Connolly-ի «Farewell to Surrealism»-ը:

պատրաստէ ինքզինք, եւ միակ դպրոցը, որուն միջոցաւ կը պատրաստուի՝ կեանքը է եւ իր խառնուածքը: Իրաւ տա-
 րանգները սկզբնական խարխափումներէ վերջը՝ ինչպէս, ազմուկ բարձրացնել գրական շարժումներու անունով կամ գրական յեղափոխութիւններ ստեղծելու հետապետներով՝ համախմբուել հանգա-
 նաշփոթութիւնէն վերջ կը գտնէ կոր-
 սրած իր անձը եւ իր անհատականու-
 ցըւած իր անձը եւ իր անհատականու-
 թեան ճամբով կը ստեղծէ իր գրակա-
 նութիւնը:

Արուեստը, անդամագործութեան տեսանկիւնէն, բացարձակապէս անհա-
 տական է:

Գրագէտին երկունքը անհատական է: Մտունդէն ետք ծնելալը կը պատկանի զանգուածին: Երկունքի պահուն ար-
 ուեստագէտը չի մտածեր՝ զանգուածին կամ հանպահանգներու մասին, որովհե-
 տեւ երկունքին ներքին ցուերն ու զա-
 լարումները կ'արդիւնեն այդ մտածումը: Այսպէս ծնած են արուեստի մնա-
 յուն գործերը, որոնք կրցած են յաղթա-
 հարել ժամանակը. և էականը ժամանա-
 կը նուաճելն է՝ Այս է կը կարծեմ, ըս-
 տեղծագործութեան մը գրական արժէ-
 քին միակ յատկանիշը՝ նուաճել ժամա-
 նակը:

**Բ. ԱՐՔԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ
 ԵՒ ԱՅՆ ՀԱՐՑԵՐ**

Արդին, որպէս վերագիր գրականու-
 թեան, ժամանակը յատկանշող երեւոյթ մըն է եւ ոչ թէ արժէքի շափանիչ մը: Ինչպէս որ գոյութիւն ունի արդի երա-
 ժըլտութիւնը, պարը, ապրելակերպը՝ գոյութիւն ունի նաեւ արդի գրականու-
 թիւնը:

Արդի գրականութեան գլխաւոր յատկանիշն է արագութիւնը՝ պայմանա-
 ւորուած խորութեամբ եւ նախապատճա-
 օրի փնտրողութեամբ:

Յիսնամեակ մը առաջ դեռ, վէպը կ'ընթանար պատմումի եւ առարկայա-
 կան գործողութեանց ճամբով: Այսօր

պատմումը իր տեղը զիջած է՝ վէպը կա-
 ուցող նիւթին անուամբ իսկ առարկա-
 յական գործողութիւնը՝ եկեղեցական
 գործունէութեամբ: Բնորոշիչ օրինակներ են այս ուղղութեամբ օտարներէն՝ Քաթ-
 ֆայի «Դղնակը» եւ «Դատաւարութիւ-
 նը», Քամիւի «Ժանտախտը» իսկ մեր
 մէջ Օշականի «Մնացորդացը»:

Դժուարագոյնը, ներկայ վէպին ա-
 ուրնչութեամբ, արագութեան եւ խորքի
 զուգահեռ ընթացքն է: Վերը յիշուած
 հեղինակները ոչ թէ արագութեան, այլ
 անոր սովորական ընթացքէն իսկ հետո
 էին մղոններով: Նորերէն Հէմինկուէյն
 էր միայն, որ կրցու մասամբ պահել
 արագութեան եւ խորքի զուգահեռ այս
 ընթացքը, - մասամբ կ'ըսեմ, որովհե-
 տեւ յաճախ արագութեան ի շահ անոր
 մօտ առժեց՝ խորքը, սակայն ըլլալով
 ան թէքները իր կատարելութեան հաս-
 ցուցած վարպետ մը, խորքի թիրաքման
 պահուն իսկ քողարկեց զայն իր կերպար-
 ներուն միջեւ ստեղծելով բնական եւ
 հանդամանքներէն ծնունդ առած խօ-
 սակցութիւն մը:

Այս հակիրճ բնորոշումէն ետք հարց
 կը ծագի զարձակ, թէ արդի գրակա-
 նութիւնը հանպահանգ մըն է՞:

Տարօրինակ թուի Հաւանարար այս
 հարցումը, որովհետեւ արդի վերադի-
 րը, ինչպէս նշեցի, ժամանակ բնորոշող
 երեւոյթ մըն է:

Ինչ որ այսօր արդի է, կը դառնայ
 վաղը ոչ արդիական... կը դառնայ հնա-
 մենի:

Երեսուն տարի առաջ դեռ արդի էին
 որեւէ մայրաքաղաքի մը պողոտաներուն
 վրայ Ծորա-թի ինքնաշարժները, որոնք
 հիացում կը պատճառէին բոլորիս: Այ-
 սօր երեսնամեակ մը վերջ, երբ դեռ բո-
 յորս ողջ ենք եւ մեր յիշողութիւնները
 տեղին, ի՞նչ անդրադարձում պիտի ու-
 նենանք, եթէ յանկարծ նմոյշի համար
 պահուած նոր Ծորա-թի մը անցքին ա-
 կանատես ըլլանք որեւէ մայրաքաղաքի
 մը որեւէ պողոտային վրայ:

Ուրեմն, արդին ժամանակը ճշդօր

վիճակ մըն է եւ ոչ թէ արժէքի մնայուն չափանիշ մը :

Այս խորհրդածութիւնները անոր համար պարզապէս, որովհետեւ «Բազին»-ն մէջ երիտասարդ զրոյ Վահէ Օշական իր Արդի Եւրոպական եւ Ամերիկեան Գրականութիւնը՝ ուսումնասիրութեան նախարանով անցած է իր մշակած նութիւն ծանօթագրութեան սահմանէն եւ արդի գրականութեամբ պայմանաւորած՝ գրական ըմբռնողութիւնն ու ստեղծագործութեան արժէքը :

Առանց ուղղակիօրէն արտայայտուելու, այդ նախարանով, ան գրականութեան եւ արուեստի իր բանաձեւումը վերածած է տեսակ մը հանգանակի եւ արժէքներ ճշդ ու կշիռաւոր :

Իր ուսումնասիրութեան նախարանին ընթերցումէն վերջ՝ մտածումս զընաց ուղղակիօրէն բնորոշիչ եւ այս առնչութեամբ բացատրիչ պատկերի մը . - Հայաստանի գրողներու չորրորդ համալսարանին, Կենտրոնի նախկին քարտուղար Սորէն Թովմասեան, իր բացման ճառին մէջ խօսելով կարգ մը գրողներու ալիքներէն եւ շեշտելով ինքնահաստատութեան մասին, կ'ըսէր . - «Պատմութեան օրինակ, որ նշանաւոր կոմպոզիտոր՝ Գունտն, երբ 17 տարեկան էր, ասում էր՝ - Միայն ես եմ - երբ զարձաւ 20 տարեկան, ասաց - Ես եմ եւ Մոցարտը - 25 տարեկանում աւելի խոհեմանալով ասում էր - Մոցարտն է եւ ես - իսկ երբ արդէն 30 տարեկան էր, ասաց - Միայն Մոցարտն է :

Վահէ Օշական անցած է 30-ի սահմաններէն . - Ան, ինչպէս Գունտն, չ'ըսէր՝ - Միայն ես եմ - սակայն իր կարծիքները, որոնք կարգախօսներու տարազով կը պարզուին՝ գունդայական են : - Հոգեվիճակ մըն է այս, որ յաճախ յատուկ է, որպէս նորաձեւութիւն այն գրողներուն, որոնք չ'բացած իրենց սեփական ակօսը, կը կառչին գրական նախապաշարումներու եւ իրենց անտեղիւնները կը պարզեն՝ դիտելով լայն ու անպարսպիծ հորիզոնները, խիստ նեղ բացում

պատուհանէ մը : Ընդգծեցի նախապաշարումը, որովհետեւ ան միայն հինէն կամ աւանդութիւններէն փոխանցուած մտային վիճակ մը չէ մարդուն մէջ, այլ մտածութի կերպ մը, ըլլայ այդ արդիական կամ գերարդիական՝ հիմնուած միակողմանի եւ քարացած մտեցումներու վրայ :

Հակառակ անոր, որ Վահէ Օշական դէմ է անցեալի այն գրողներուն, որոնք կը կարծէին թէ շնորհիւ իրենց տաղանդին ու կոշտին կեցած կ'ըլլան պատուանդանի մը վրայ, ինք սակայն իր սուսմանասիրութեան յառաջարկով ստեղծած է արդէն, համաձայն իր նախասիրութեան, գրական պատուանդան մը՝ պարզելով անկէ անտեղիւններ կարգախօսային միակողմանիութեամբ եւ գունդայական մտեցումով :

Ի՞նչ կ'ըսեն սակայն իր կողմէ բարձրացուած կարգախօսներն ու պարզած պատգամները :

Անկէ յիսուն կամ հարիւր տարի առաջ, ըստ Վ. Օշականի .-

- 1.- Պատերը պատուհան չ'են այսօրուան պէս :
- 2.- Մարդիկ անկարող էին նախամարդը հասկնալ, հիմա կը հասկնան :
- 3.- Արդի գրողը ամէն բանէ առաջ աղքատաւաք կառք է ու մոխրաման :

Է.- Յիսուն տարի առաջ մարդ ըսելով կը հասկնայինք հոգեբանութիւն, միջավայր, ազդեցութիւններ, գործողութիւն եւ արդարութիւն : Նաեւ յուզում ու գեղեցկութիւն : Այլ կ'արժէ՞ խօսիլ գեղեցկութեան մասին : Հիբրոյմայի գերեզմանատունը, Ալմերիոյ բանտերը, Հոնկ-Գոնկի բողոնոցը, Պէյրութի ըսպանդանոցի թաղը, պանքայի տնօրէններու ժողովը, - ու ամէն ապրող էակի խղճին անկիւնը գտնուող մութ ու զոց սենեակը - վերջ ունի՞ թուումը այն վայրերուն՝ ուր արդի արուեստագէտը կտոր կտոր կը թաղէ մեռած վացած դարերու գեղեցկութիւնները՝ յանուն ուրիշ ճշմարտութեան :

Ծ.- Պէտք չ'կայ այլեւս տարբերու-

թիւն գնել ժարդոց ու առարկաներու միջեւ: Կեանք ու գոյք նոյն բանն են: Ահա այս է որ նոր դրողը կը փորձէ հասկըցնել, առանց բացատրելու սակայն:

6.— Արդի արուեստը ոչ ժամանց է, ոչ աղգային խնդրական հոգիի մը աւելի խնդրական պատկերացումը, ոչ ալ ակունք փոսած ակնացաւոր բարոյախօսի քարոզ:

7.— Երբ մարդկութեան դոյութիւնն է ինչորոշ առարկան ու կրնանք մէկ վայրկեանէն միւսը անէանալ՝ պէտք է առնուազն լրջանալ ու գիրտը չխաբել: Արդի արուեստը այդ լրջութեան վկայութիւնն է:

Այո, ճիշդ է Վ. Օշական, պէտք է այլեւա լրջանանք եւ գիրտը չխաբենք: Ուրեմն լրջանանք...

Նախ առիթ չտայու համար որեւէ թիւրեմացութեան նշան թէ, Վ. Օշականի արդի գրականութեան նուիրուած ուսումնասիրութիւնը, անկախ իր նախաբանէն, ուրուազծային տեղեկագրութեամբ, յաջող է եւ կըցած է տալ Օւրուպայի եւ Ամերիկայի արդի գրականութեանը՝ դիտուած իր զանազան անկիւնադարձերէն: Այս ուղղութեամբ օգտագործած է ան, իր նիւթին առնչութեամբ դոյութիւնն սնկեցող ժամանակակից լատազոյն աղբիւրները, եւ ճիշդ ու պարկեշտ ձեւն է այս՝ ուսումնասիրութիւնն մը ստեղծ կեցնելու համար:

Այս հաստատումէն ետք, իր նախաբանը, զոր ներկայացուցի վերը՝ ամփոփելով եօթը կէտերու մէջ.— ձգտում մըն է ապաւորելու, զարմացնելու ուրիշները, իր յայտնած դադարներուն «յեղափոխական» բնոյթովը:

Ըստ իս՝ գրող մը պատասխանատու է իր իւրաքանչիւր բառին, տողին եւ դադարներուն համար: Այս կը պահանջէ արուեստը: Այս կը պահանջէ գրողին միջավայրին, շրջապատին անխորտակելի ճամարութիւնը:

Վ. Օշականի նախաբանին տեսութիւնները չեն ապաւորեր, չեն զարմացրեր մեզ իրենց «յեղափոխական» կամ

աղմկոտ բնոյթովը, որովհետեւ նորութիւններ չեն, այլ յապաղած նորածեութիւններ, որոնք այսօր 1962-ին ժամանակավրէպ են այլեւս: Իր իսկ վկայութեամբ, իրմէ առաջ 1943-ին Մթնաղբի, 1951-ին Բոտմէնի եւ ուրիշներու վկայութեամբ.— արուեստի աղմկոտ յեղափոխութիւնը, նւրոպայի մտաւորականութեան տեսականօրէն դէպի ձախ հանումը, Ա. աշխարհամարտի կորուսած սերունդը, իզմիրաւ ստեղծած պատրանքներն ու անոնց կարասներուն մէջ պատրաստուած խարդախուած դիմիին տոթած գիւնդութիւնները, տեւեցին 1920-1940 եւ շոգիացան անդրում:

Բ. աշխարհամարտը եւ անոր յաջորդող սերունդը՝ ձերբազատեց ինչոյնք արուեստի անունով ստեղծուած արուեստական «յեղափոխութենէն» եւ ազմուկէն եւ աշխարհը զարմացնող արտաբոյութիւններէն, որովհետեւ հասած էր այն միակ ճամարութեան, թէ գրողը նախ պէտք է փնտռէ եւ գտնէ ինչոյնք եւ իր տաղանդով հարկադրէ իր գրականութեանը ներկայ եւ ապագայ ժամանակներուն եւ ոչ թէ Փարիզի պոզորտաներուն վրայ լամբակին սխտոր անցրելով, կամ հաւաքական ճառագործութեանց մոլուցքին յանձնուելով, (մերօրեայ Ռոքն Ռոքն ու Թուրստը յիշեցընող), ինչպէս որ ըրին Տատայականներն ու գերբապաշտները, իրենց սկզբնական տարիներուն:

Այս փակագիծը բանալի է գոցելի վերջ.— Վ. Օշական արդի գրականութեան նուիրուած իր նախաբանին տեսութիւնները՝ չի բացատրեր անոր համար, որովհետեւ իր տեսակէտն է.— «Նախ գրողը կը փորձէ հասկցնել առանց բացատրելու»: Համակարծիք եմ իր հետ: Բացատրելը արուեստի մէջ՝ ուսուցչական է, սակայն «փորձել հասկցնելը» ընդհանրապէս արուեստի գործերուն մէջ եւ մասնաւորաբար տեսական հարցերու առնչութեամբ՝ անհրաժեշտութիւն մըն է: Մեր լատազոյն զննադատը՝ Յակոբ Օշական չի բացատրեր, իսկ եթէ փոր-

ձէր բացատրել հակասութիւններ կը ըստեղծէր, սակայն կը հասկցնէր:

Վ. Օշական չի բացատրեր. — այդ իր իրաւունքն է, սակայն եւ չի հասկցներ, այդ իր իրաւունքը չէ: Ան չի հասկցներ, որովհետեւ իր տեսութիւնները չեն դար իրմէ, այլ կու գան Եւրոպա անցուցած իր տարիներէն. — ստացական եւ յապաղած արուեստի քմայքներէն:

Եւ քմայքը միշտ ինչ տարադի կամ ինչ հանդամանքի պիտակովն իսկ ներկայանայ կը մնայ անհասկնալի, եթէ ոչ անլուծելի:

Կը գրեմ այս տողերը առանց վերապահութեան, որովհետեւ «Պատուհան» քերթուածներու գրքոյկին հեղինակ՝ Վ. Օշական խառնուածք մըն է, ունի իր խօսքը, իր սեփական աշխարհին խօսքը, զոր պէտք չէ դիմադրուի, նօսրանայ արուեստի քմայքներով եւ ուրիշները զարմացնելու տարօրինակութիւններով:

Եզրափակելէ առաջ այս էջերը, կը նկատեմ անհրաժեշտ իր տեսութիւններէն մաս մը, ոչ թէ հասկացողութեան, այլ կուսուսիչի ճամբով քննել հասնելու համար անոնց միջուկին:

— Վ. Օշական կը հաստատէ թէ ասկէ յիսուն կամ հարիւր տարի տառջ պատերը պատուհան չէին այսօրուսն պէս: — Այսինքն նեղ էր գրողին սահմանը, գրողը զուրկ էր տիեզերազգայութենէ կամ գրողը չէր բացած իր ներքին աշխարհին պատուհանները. — հարիւր տարիէն շատ աւելի առաջ Շէյքսպիրի կամ յիսուն տարիէն աւելի առաջ Բոյի գրականութեան պատերը պատուհան ունէին թէ ոչ... Եզրակացութիւնը կը ձգուի այս տողերը կարգացողին:

— Կը գրէ, միշտ յիսուն կամ հարիւր տարի առաջ, մարդիկ անկարգ էին ցախամարդը հասկնալ: Նախ ո՞վ է նախամարդը... Նախամարդը մեր հետն է, բերած ենք զայն դարերու բովէն՝ հասցուցած մեր դարուն, Միլերկրականէն մինչեւ Տիգրիսի ափերը: Ան օտար մը չէ, իսկ եթէ նախամարդը հասկնալը պայմանադրական է, ո՞վ աւելի խոր,

աւելի կատարեալ ըմբռնած է զայն, նոր գրողը թէ ոչ Մովսէս, Յիսուս, Մուհամմէտ կամ Պահլավաւ-Կիթայի երգերը:

— Դարձեալ յիսուն տարի տառջ մարդ ըսելով, կը պատշաճ է Վ. Օշական, կը հասկնային հոգեբանութիւն, միջավայր, ազդեցութիւն... Հիմա այդ չենք հասկընար: Ի՞նչ կը հասկնանք, այդ չընենք Վ. Օշական, կը ձգէ անորոշութեան մէջ եւ մեկնելով այս անորոշութենէն կը հասնի այն վարկածին, թէ Հիբրոյի մայր գերեզմանատան, Պէյրութի սպանդանոցի եւ այլ բաներու հետեանքով արդի արուեստագէտը թաղած է մեռած դացած դարերու գեղեցկութիւնները յառու ուրիշ նշմարութեան: Ո՞ր ճշմարտութեան՝ զարձեալ անորոշութիւն, որովհետեւ ամբողջ այս տեսութիւնը, խզած իր կապերը իմացութեան հետ, երբ մեծղի հասակովը փաթեռած է նորածին մանուկի մը քմայք-խանձարուրին մէջ:

Ոչ Հիբրոյի մայր գերեզմանատունը, ոչ ալ Պէյրութի սպանդանոցի թաղը ազդակներ են թաղելու գեղեցկութիւնը, Եթէ արդի գրողը թաղած է արտաքին եւ ռոմանտիկ գեղեցկութիւնները, սակայն չէ թաղած եւ չի կրնար թաղել իր մարդկայնութեան գերագոյն գեղեցկութիւնը. — Ո՞ր թաղել տարիքուս սղարահաւաքին աչքերէն տարածուող արտմութեան խաղաղ գեղեցկութիւնը կամ երիտասարդ սղարահաւաքին աչքերէն բարձրացող գալթոյթի ու դառնութեան տերապետող գեղեցկութիւնը:

Վ. Օշական իր նախաբանին մէջ կը գրէ, թէ արդի արուեստը ոչ ժամանց է ոչ ալ ազգային ինդրական հոգիի մը աւելի խնդրական պատկերացումը:

Սակայն ո՞ւր, ե՞րբ, ո՞ր դարուն ժամանցը եղած է չափանիւր՝ արուեստին: Անցեալ դարուն պատկանող հոս հոն քանի մը ափիկներու գրական սալուններու չափանիւրով կանխորոշուած է գրական գործի մը արժէքը, եւ եթէ եղած է, եղած է օճառի պղպղակի տես-

ղութեամբ միայն, ոչ աւելի, ոչ պակաս: Ուրեմն, ինչո՞ւ չգոյ գրութիւնէ մը ըստեղծել հակադրութիւն մը եւ դրել՝ արդի արուեստը ժամանց է: Գալով իր ազգային ինդրական հոգիի մը աւելի խնդրական պատկերացման՝ ժխտումին. - մտածել կու տայ, որ այս կարծիքը հեղինակին մէջ իսկ չէ յստակացած, այլ պարզ իր կազմած բառերուն շարահարմարութիւնը հմայած է զինք եւ որպէս նորածնութիւն՝ պայթեցուցած զայն:

Դարերու գրական հոլովոյթը, ազգային ոգիին դերն ու տեղը ճշգրտել արուեստին մէջ: Եթէ Վ. Օշական կը ժխտէ այս, անհրաժեշտ է այլեւս, որ ինք կա՛մ իր մտածելակերպին վարպետները քիչ մը բացատրեն ժինդրականով պայմանաւորուած ազգային ոգին:

Համակարծիք եմ, որ ազգայնամուտութիւնը արուեստը կը դարձնէ տեղական եւ սահմանափակ, սակայն ազգայնամուտութիւնն ու ազգային ոգին նոյն բաները չեն եւ այս, լատադոյնս կը դեմադրէ ինք՝ Վ. Օշական, ուրեմն ի՞նչպէս կրնանք մէկ դարձուածքով «խընդրականի» տարակոյսին ենթարկել մեր մտլորակին վրայ ապրող ժողովուրդները իրարմէ՛ զատորշող ոգին, որը մեծադոյն ստեղծագործութիւնն է եւ մոզայիքեան ներդաշնակութիւնը՝ Կեանքին:

Ազգային բառը իր առարկայական կաղապարով՝ արուեստի կապակցութեամբ, յաճախ չիոթ ստեղծեր է ոմանց մաքերուն մէջ, նկատուելով նեղմիտ եւ սահմանափակ տարազ մը. եթէ խորացնելու ըլլաք այս տարապը կը հասնիք ցեղային ոգիին, որը այն գիծն է, ինչպէս իւրաքանչիւր ապրող էակի նսը՝ ինքնութիւնը ճշգրտելու եւ զատորշող մարդ մը ուրիշ մարդէ մը, նոյն հետեւողութեամբ ցեղային ոգին ալ կը ճշգրտէ ինքնութիւնը եւ կը դանազանէ ժողովուրդ մը ուրիշ ժողովուրդէ մը:

Դիտելով այս մեկնակէտէն, հակառակ Վ. Օշականի այն բնորոշումին, թէ Ծոգընրի գրականութիւնը ամերիկեան չէ, այլ տիեզերական - «Բագին» թիւ

5, - կ'ընդգծեմ, թէ Ծոգընրի գրականութիւնը ամերիկեան սահմանափակումէն աւելի նեղ չըլանի մը՝ Ամերիկայի հարաւի՝ Միսիսիպի նահանգին գրականութիւնն է, սակայն դարձած է տիեզերական եւ հաւասարապէս կը խօսի բոլորիս, իր ցեղային ոգիին շեշտաւորութեամբ ու ներթափանցող ապրումովը, ինչպէս պարսիկ Օմար Խայամը, սլաւոնաւորութիւն կամ Ծլորսիի Տանթէն: - Այս նեղ չըլանքներուն մէջ ապրող այս մեծ արուեստագէտները, իրենց հանճարով բարձրացուցին իրենց ձայնը եւ ցեղին հարազատ ինքնութեան շեշտը՝ անկէ հասնելու եւ դեանդուելու տիեզերքի մոզայիքեան ներդաշնակութեան մէջ:

Փակելէ առաջ այս էջերը կը կըրկենեմ, որ Վ. Օշականի Արդի գրականութեան նուիրուած իր նախաբանին - «Բագին» թիւ 2 - տեսութիւնները չեն բխիր իր ինքնութենէն, այլ ունին միտումը ուշացած նորածնութիւններ վերաբերեցնելու եւ տպաւորելու: Վերջին պահունակայն, երբ դրուած էին այս տողերը, կարգալով իր ուսումնասիրութեան շարունակութիւնը - «Բագին» թիւ 6, - յստակօրէն նկատեցի, որ նորածնութիւններու հետամուտ Վ. Օշական, ինք լուծած է արդէն իր ստեղծած քմայքներուն շփոթը, մոռցած իր նախաբանին ուղիմանադրական տեսութիւնները, երբ ապրող եւ իր ինքնութիւնը գտած գրողի մը ճշմարտութեամբ կը գրէ. - «Այլ խօսուելով գրականութիւն է այն, գոր մարդիկ կը ստեղծեն եւ ծիծաղելի է սպասել որ ան կանխորշ չափամիջի մը յարմարի: Ով որ գրող է ան լաւ կը հասկնայ, քե՛ ինչո՞ւ գրական բնագիտութիւնը արուեստիմ ետ ալմամն աղերս ունի որքան գրաշարութիւնը»:

Այս խորհրդածութեամբ արդէն, Վ. Օշական, իր ինքնութենէն բխող հաստատումով՝ կը ժխտէ իր նախաբանին մէջ արեարծած պայմանագրական տըխրութիւնները եւ կը հաստատէ այն ինչ որ այս էջերը փորձեցին տարազել:

Վ. ՕՇԱԿԱՆ

ՈՒՒԼԻԸՄ ՖՈԼԻՔՆԸՐ

Կասկածէ դուրս է որ ամերիկեան գրականութեան մեծագոյն վիպասանն էր որ մեռաւ անցեալ ամառ: Վիպասանը՝ ոչ թէ իր նոր գգնատով, Պրանսայի արտագրութիւն, զբացարձակ գիտակցութիւն մը ու իր առարկայական աշխարհը: Ոչ ալ դասական իմաստը վիպասանին որ անհատական ու հաւաքական կեանքերու գնացքին, բախումին հոլովոյթէն կը գոզնայ քանի մը պատահ, զայն հասկնալու ու մանաւանդ անոր տիրապետելու ունայն, հպարտ յոյսով: Այլ՝ ի՞ր իմաստով, այսինքն՝ վիպական իրականութեան մէջ ներարկելով բանաստեղծական տենդ մը ու բարութիւն մը. ու տակաւին այս երկուքը շարտելով դիւցազներգական փոթորիկներու թափին մէջ, զհրազանցօրէն մարդկային ու անմարդկային, նոյն ստեն:

Այսպէս էր Ֆոլքները... վիպասանբանաստեղծ-գիւցազներգակ: Որո՞ւ հետ բաղդատել զայն: Ամերիկեան գրական-նութեան մէջ, իրմէ անմիջապէս վերջ եկող գրապէսը Հէնրի Յէյմզն է, որուն գործը ծոյլ մօրաքոյրներու ու բազմոցէ բազմոց անվերջ տեղափոխուող սրամիտ, անգործ մտաւորականներու անհատու՛մ վիճարանութեանց պատկերացումն է: Աւելի մօտ է ամերիկեան մեծա-

զոյն բանաստեղծին, Ուիթմընին, որ իրեն պէս մեծ կը տեսնէր մարդիկն ու իրենց կիրքերը, իրեն պէս առասպելական շունչ մը ունէր: Աւելի միջապէս կայ եզրական թոմըս Վուլֆը իր հեղեղային, այլանդակ ու տարերային թափով, Ֆոլքները իման Հարաւէն, ըսյց որ կանխահաս մահ մը ունեցաւ ու իր ամբողջ շուքը շնետած մեկնեցաւ:

Գերդաստանին միւս անդամները, նոյնիսկ արմատը, Եւրոպա փնտռելու է: Ոչ թէ Պալլաք, Քօլաթոյ, Տիքընդ կամ Ժիւլ Ռօմէն, որոնց հօրը իրապաշտութիւնն ու բարոյական մտահոգութիւնները իմացականութեան սահմաններէն քիչ անգամ դուրս կը թափէին, այլ միւսները - Յէյմս Ճոյս, Թոմըս Հարտի, Հիւկօ ու մասամբ Բրուսթ, Տօսթոյնսքի ու մանաւանդ Քաղանցաքի Կրէտէցին: Այսքան: Մեր մէջ, Արտվեանը միայն ունեցած է, շատ տարտամ շափով, գիւցազներգական այդ շունչը ու տեսիլքի կարկառը. ու եթէ միայն գրել գիտնար ու նաեւ գրականութիւնը իբր միջոց շժառայեցնէր իր կեանքին այլ անոր նպատակը ընէր՝ հաւանաբար քիչ մը մօտենար հսկաներու լեռնաշղթային: Այսպէս էր որ Ֆոլքները նախ եւրոպական գնահատանքի արժանացաւ, իր

երկրին մէջ արժեւորուելէ շատ առաջ: Եւրոպան էր որ զինք դտաւ, Յրանսան էր որ նախ խանդավառուեցաւ իրմով: Նիւ Եորք Հրատարակուելէ քանի մը տարի ետք, կամ յաճախ նոյն տարին իսկ, իր վէպերը կը թարգմանուէին ու կը հրատարակուէին Փարիզ, շատ անգամ յառաջաբաններով — Տը Սառնատ էմտ սը Ֆիուրի վէպին ու Լայթ ին Օլըքս վէպինը գրած է Մօրիս Քուէնարո, Ուայլ ալ ի՛շ Տայիմիկը գրած է Վալէրի Լարպո, մինչ Սէնքլուքիինը նշանաւոր դարձած է Անտրէ Մալրօն է հեղինակը, ու յառաջարկուին մէջ հետեւեալ դատումը կ'ընէ. «Սէնքլուքիին ոտիկանական վէպ մըն է, ուր ներխուժած է հին յունական ողբերգութիւնը»: Ուայլ ալ ի՛շ Տայիմիկ վէպը ժան-Լուի Պարրօ թատերգութեան վերածած է, ու իր Սիքիւսիսմենթոն մէջ՝ ժան-Բոլ Մարթը ընդարձակ ուսումնասիրութիւն մը նուիրած է իրեն: Ա. Քամիւ նմանապէս թարգմանած ու թատրոնի վերածած է 1956-ին Ռէքսիեմ Չօր է Նան վէպը:

Ազդեցութիւններու տեսակէտէն ալ բացառիկ երեւոյթ էրաւ Յուլիանը: Ամերիկացի գրողներ շատ զիջ անգամ լուրջ ներգործում կ'ունենան Եւրոպայի վրայ: Առաջինն ու մեծագոյնը ազդեցութիւններուն՝ եղած է Էտկլը Էլըն Բոյինը, Պալէսէն մինչև Վալէրի: Անկէ մինչև Յուլիանը քանի՞ հոգի կարելի է զեանդել Հարիւր տարուան մէջ: Հէնրի Ճէյմզ, Հէնրի Միլլըր, Էլթըթ, (հաւանաբար Էոժէն Օ'Նէլ ու Մէյվել): Ասոնցմէ Միլլըր զբեթէ փորձիցի է, Էլթըթ ու Ճէյմզ իրենց կեանքին մեծ մասը Եւրոպա անցուցած են, անձնագիր իսկ փոխելով:

Այս ամբողջը կ'ըսուին՝ զեանդելու համար գրագէտ մը որ ինքզինք պարզ հողագործ մը կը հաշակէր... (*) : Մարդ

(*) «Ես գրագէտ չեմ, պարզ հողագործ մըն եմ: Երբեմն երբեմն սակայն կը գրեմ, պարզ ժամանցի խմբար...: Ու պարբերաբար, հրատարակական տունի մը պաշտօնեան կուգայ քովէս

մը՝ որուն պարզութիւնը այնքան բացարձակ էր որքան գրագէտի խառնուածքը (**): Որ աշխարհէն քաշուած, սրզողած, մեկուսացուած՝ ամբողջներու մահացու պաշտամունքէն, ու լրագրողներու մարդակեր հետաքրքրութենէն փախած՝ կ'ապրէր ազարակին մէջ, անցնող դարու Հարաւի ազնուականներուն նման ձին հեծած կը պատէր առտուան թարմ անմեղութեան մէջ, դիւզի աղբիւրին մը շահներու հետ օրուան հոգերով կը գրա-

հոս հոն ինկած Թուղթերը կը հաւաքէ ու կը տանի, գիրքի կը վերածէ ու կը տպէ: Որքա՞ն լուրջ է այս ամբողջը...:

Լը Ֆիկարօ Լիթէր, 14. 7. 62. Թիւ 847:

(**) «Գրել չեմ սիրեր: Կը գրեմ միայն երբ անգուլ պահանջը գգամ, օրուայ որ ժամուն որ պատահի, գիշեր Թէ ցերեկ: Այն ատեն կը գրեմ, մէկ կտոր տասնիցիկ ժամ երբեմն: Յետոյ կը հանգչիմ, ամիսներով...: Ամէն գրողի խորագոյն ցանկութիւնը քանսասեղծ քլլան է: Երբ ձախողի, կը փորձէ վիպակ գրել: Եթէ հոն ալ ձախողի, կը նետուի վէպին մէջ... Գրողին նպատակը ինքզինք գերազանցել է: Ապահովութիւն կամ գոհունակութիւն կապ չունին արուեստի հետ: Ու գրողը պէտք չունի նիւթական յաջողութեան. բայց երբ երկրորդական կարգի գրող է՝ նիւթական դժուարութիւնները պատճառ կը բռնէ իր միջակութեան: Թաշտութեան հարսդէպ վարուելու է ինչպէս կը վարուին կրկներու հանդէպ — արհամարհելով: Այն ատեն ան է որ քեզ կը փնտռէ...:

Ես ոչ գրող եմ, ո՛չ փիլիսոփայ — հողագործ եմ պարզապէս: Որեւէ գործի ստակ եմ, մանաւանդ ձեռային... ու աշխարհի են տխուր քաներին մէկն է տեսնել մարդիկ որ ամէն օր ուժը ժամ հաւատարմօրէն կ'աշխատին միջ մարդէակին պարտականութիւնն է փորձել գերազանցել իր քնական վիճակը, իր ընտանեան վիճակը: Գրագէտին պարտքը ուրիշ է — ան մարդկային արտի ճշմարտութիւնը պէտք է արտայայտէ ու այդ ընելով քիչ մը քաջալերել ու ազնուացնել փորձէ այդ սիրտը: Բոլոր միջոցները, այս նպատակին համար, արտօնելի են իր գործին մէջ, — քրտութիւն, ատելութիւն, սէր: Ոգեկոյել անմկութեան ու չարաբանքի մէջ մարդ էակին ամբողջ անցնալի տառապանքը, ապագայի ցանկութիւնները — այն գրողին կոբումը: Այս, ու նաև, մանաւանդ՝ զուարթացնել, ժամանց հայթայթել ընթերցողին: Կը հաւատամ Աստուծոյ բայց ոչ կ'ըմբիս...»

Լէ Նուվէլ Լիթէր, 12. 7. 1962 Թիւ 1819:

ղէք, իր երեւակայութեան մէջ նոյնացած իր գերդաստանի նշանաւոր նախնիքներուն հետ՝ որոնք նոյն հողին վերայ կը կուռէին, կը մեռնէին ու կ'ապրէին Քաղաքացիական Պատերազմէն շատ առաջ - մեծ-մեծ հայրը որ երկու անգամ մահապատիժէն պրծած էր, ասպատակներու պետ ու Հարաւի ամէնէն կերակոտ սպաներէն. իր մեծ հայրը, մեծահարուստ փաստարան, քաղաքական լէճմը, պատկանելի ու խուչ, սարսափելի ջղախն ու պայթուցիկ բնաւորութեամբ մարդ մը... Պէտք կ'այ տեսնելու թէ Ֆոլքերը իր վէպերուն գերմարդկային ու անասնական հերոսներուն տիպարները իր ընտանիքէն թաւ իր մանկութեան երեւակայական աշխարհէն շինած է - Քոլոնէլ Սարթօրիսը որ իր մեծ մեծ-հօր տիպարն է, Պայսր Սարթօրիսը որ իր մեծ հայրն է, Քոմբարն ընտանիքը որ իր իսկ անմիջական ծնողքն է եւայլն: Մարդիկ՝ որոնք Հարաւի հաւաքական ենթագիտակցութեան շիջն իսկ կը կազմեն, վերածուած առաջաւելի ու աւանդութեան, տեսակ մը դիւցազներգական հերոսներու՝ որոնք հողի շուրթերուն խորքը կը լսար մանուկ Ուլիլլիմ, նիհար, տկար աշակերտ մը, մեծ մօր հին գոգնոցի հոտին մէջ մեծցած, գլուխը անոր գողը քնանալով, երեւակայելով իր նշանաւոր մեծ-հօր կեանքը նոյն տան մէջ, նոյն շունչին հեքէն բռնուած, նոյն սեւամորթներու գիշերային երգերուն խենթեցնող եղբրականութեամբ վարակուած, մինչ մեծ մօրը տղի ձայնը կը պատմէր ինչպէս իր մեծ-մեծ հայրը, գլուխը անցած Հարաւի աղքատ, տգէտ բայց անյաղթահարելի գինուորներու 'խումբին' կը հալածէր իր նժոյզին կատաղութենէն աւելի ահաւոր կիրքով մը Հիւսիտի լըկտի, անբարոյական գինուորները...:

Հողագործ մարդիկ չեն մեծնար, այլ կը շատնան, ներսէն գիտուած ու երբ հողագործը ազնուական ընտանիքի մը փառքը կը ճառագայթէ ու արուեստի ծանր տաղանդ մը կը կրէ իր շիջերուն մէջ, այն ատեն յայտնի կ'ըլլայ ուրիշ



այդ հողագործը կը գտնէ տիպարներու հսկայ, խճողուն բազմութիւնը, շարժումներու ու արարքներու ճակատագրական որակը, գերմարդկայինի տպաւորութիւնը ձգող այդ հողամբ նայուածքին, բառին, լուսութեան, որոնք կը շինեն Ֆոլքերի տիեզերքը: Այս բոլոր յատկանիշներով հանդերձ, ու հաւանաբար ատենց իսկ պատճառով՝ Ֆոլքերը չէր գնահատուած իր երկրին մէջ... (***) : Երեւոյթ մըն է այս որ իր պատճառները ունի - թէ ինչո՞ւ 1945-ին Ֆոլքերը վէպերը ամերիկեան հրատարակչին վրայ անդտանելի էին, սպառած շատոնց ու վերհրատարակութեան անարժան նկատուած, ու անոնց հեղինակը գրեթէ մոռցուած: Պատերազմական վէպերու ու սրբօրբայմաներու հեղիքը, հանրութեան

(***) Ներկայիս կայսրութիւնը փոխառած է: Ֆոլքերը Հարաւին հսկայ ծափ մը տուած է ու այժմ Ֆոլքերիան գրական դպրոց մըն ալ կայ - Թոմաս Վոլֆ (որ մեռաւ վերջերս) Թրումբի Գաիթ, Քարսն Մաք-Քալլըր, Ուիլիամ Սեյպրըն, Էրսթին Քոլտուէլ Թենեսսի Ուիլիամ Եւայն: Գրական դպրոց երբ կ'ըստի՝ անշուշտ իստ-նոսաճի մտտաւոր նոյնութիւնն է որ նկատի կ'անտուի:

ճաշակի հարց եւայլն — բուն պատճառը հաւանաբար տարբեր է: Մանօթ է Հարաւի ու Հիւսիսի երկուստեք անհանդուրժողութիւնը, չըսելու համար թըշնամանքը, Արդարեւ, երկու Միացեալ Նահանգներ կան, հակադիր երկու մրտայնութիւն ու կենցաղ, կեանքի երկու փելիտոփայտութիւն:

Ամերիկան ցարդ մղած է ութը պատերազմ էր պատմութեան ընթացքին եւ բոլորին մէջէն յաղթական դուրս ելած: Կոռուած է յանուն բարոյական բարձր ըսկըրտներէն ու յաջողած է նիւթական էր բարօրութիւնը անստան պահել: Ամերիկան եղած է նաեւ աշխարհի հզօրագոյն ուժը, առանց էր ուզելուն...: Այս բոլորը տակաւ շինած են, անշուշտ Հիւսիսի մէջ, առասպելը Ամերիկայի մը, որուն սկսած են հաւատալ է վերջոյ...

Ամերիկացին կը ներկայացնէ տիեզերքի մէջ պտըտող հպարտ, անմեղ, յաղթական, լաւատես, բարգաւաճ ու խելացի տիպար մը, առաքինութեան եւ ուժի կատարեալ միաձուլումը: Այս է առասպելը:

Հարաւը սակայն, ուրիշ առասպել ունի: Հարաւը պարտութիւն կրած է 1865-ի քաղաքացիական պատերազմին, առասպած է էր նուառագումէն, անզօրութեան մէջ խրած ու կատաղութեամբ մը որ մօտ է մեր, Հայերու կատաղութեան, որն ու հպարտութիւնը նոյնացուցած է, մերժած է պարտութիւն կրած ըլլալը առանց զայն կարենալ մոռնալու, ու նետուած սմբողովին առասպելական ու կորսուած աշխարհի մը վերականգնանացման, արուեստի ու նաեւ կենցաղի ճամբով: Տառապանքը տուած է իրեն սէրն ու հնազանդութիւնը բնութեան, սէրը մարդոց, տուած է հաւատքը քանի մը մեծ առաքինութիւններու: Կրօնասէր, բարեպաշտ, աննախանձ, քաջ, մարդամօտ, ու հպարտ մարդն է Հարաւի տիպարը: Հարաւը աղքատ ալ է, այսինքն չարքաւ ու կարծր, քիչ մը ծոյլ ու բաւական մը խման, շէն ու ան-

հող (*):

Այսպէս է որ կը հակադրուին երկու մասերը, անհաշտ ու անզիջող իրենց աշխարհահայեացքներով — Հարաւը բնադրական ուժերու թափին մէջ, եղբրակաւնութեան մասնաւոր հակումով, ազնուական ու արուեստագէտ. Հիւսիսը գործունեայ ու իմացապաշտ, անեղբրական (Փիլմերու ու դիրքերու հերթ-էմուլիցիները կը վկայեն արդէն) հարուստ եւ ինքնավստահ, շահամոլ ու անբարոյ, ճակատագրի շիտաբաժնէն... (**): Այս վիճակին արդիւնքը նկատելու է Յոլիվուդի հանդէպ Հիւսիսի դժկամ վերաբերումը, մանաւանդ երբ նկատենք որ Յոլիվուդի դրական գործը մինչեւ էր յետին ստորակէտը Հարաւի հողերանութեան մէջէն թաթխուած դուրս կը ժայթքէ, անոր արժէքներն են որ կը պատուեն երջանիկ ընկերութեան կեղծ ժպիտը, կը մերկացնեն մարդը էր ընկերային շինուած իմաստէն ու կը նետեն ճակատագրին գիրկը, բնութեան գիրկը:

Արդ, ինչպէ՞ս բացատրել պատերազմէն վերջ Յոլիվուդի շահած ժողովրդականութիւնը: 1948-ի Նոպէլեան դրականութեան մրցանակ էր որ արժնուց մարդիկը, էր դործերուն դէպի Հոլիվուտ ճամբորդութեանը՝ թէ անուեստական,

(*) 1922-ին էր որ 12 Հարաւի ծննդաւորներ հրատարակեցին Նյանասոր Այլ թէյթ Մայ Սթէնս (Իրրքորոյում) մանիֆէստը, որ պատերազմի յայտարարութիւն մըն էր Հիւսիսի Յէքնօլօնին ու Յաւաքիմութեան վարդապետութեան դէմ, ըսելով:— Մայնացու կուի մը կայ Յէքնօլօնին ու ապրելը, սովորական իրողութեան միջեւ... Իտէպլ ընկերութիւնը այն է որ կ'ընդունի Յէ մարդը իարխույ էակ մըն է ու Յպատակը Ինտեման:

(**) Գաղափար մը տալու Յամար Յակամարտութեան սաստիկութեան մասին, իրենք հետեւեալը:— 1950 Ապրիլ 21-ին, Պրն. Տօնրլտ Տայվիտսըն, Միսիսիպի Սթէյթ Քոլէջ-ի մէջ տուած դասախօսութեան ընթացքին, ասպարէզ կը կարդար գիտնական-ընկերարաններուն որ բացատրելին Յէ ինչո՞ւ Յոլիվուդը Հիւսիս շէր կրնար ճնիլ, ինչո՞ւ միայն Միսիսիպի Նաիպօլին մէջ կրնար ծնիլ եւ ոչ մէկ ուրիշ վայր...:

քաղաքական ու այլ շահագրգռող սերտ կապերու երկաթեայ ցանցը՝ որ կը գրգռուէ, կը սեղմէ արդէ աշխարհը, շնչահեղձ կը սպառնայ ընեւ արդէն սարսափահար մարդկութիւն մը: Բան մը, որ անշուշտ մշակոյթի վրայ ալ կ'ազդէ: Ամէն պարզայի, իրողութիւնը անվիճելի է այսօր ու հաւանաբար հաստատուի քանակին պարի վերջն ալ երբ լուսութեան ու մտազոյժի անխուսափելի շրջանը անցած ըլլայ - Փոլքները նոր ժամանակներու մեծագոյն վիպասաններէն մէկն եղաւ:

Այսպէս, Փոլքները կը կայնի Հարաւի հոգեվարձին մէջ, աղնուսպետական անցեալի մը կարօտով ու յանցանքով վերադարձող այդ Հարաւը որ իր վերջալուստին մէջ աւելի եւս կը զոտ ու հեւասպառ կը թուի, ու կ'ընէ միակ արարքը որ կրնայ փրկել ոչ միայն իր երկիրը, այլ եւ իր անձնական անցեալը որ կը նոյնանայ իր հողին հետ - կը վերստեղծէ զայն իր գրականութեամբ, աւելի հզօր ու բռնազգական, աւելի վայրագ ու ճակատագրական քան եղած էին իր բնակիչները իր մեծ մեծ-հօր ժամանակ: Եւ որպէսզի կատարեալ ըլլայ իր երկիրը նախ իրեն համար, ան կը ստեղծէր երեւակայական ամբողջ նահանգ մը Միսիսիբիի մէջ եւ որուն անունը կը դնէր Ծօֆարաքառօֆա, որ իրականութեան մէջ կը հաստատասխանէր ճշգրիտ ու պատմական վայրերու Հիւսիսային Միսիսիբիի մէջ (Լաֆայէթ ֆաունթէն) (**), Առասպելական այս երկրին մէջ, որուն համար ինք կ'ըսէր «իմ գրոյմաթուղթի չափ պղտիկ բնիկ հողս», Փոլքները կը թափէ իր 30-ի չափ հատորներուն ամբողջ բովանդակութիւնը, ցոյց տալով՝ ինչպէ՛ս մարդիկ կը քայքայուին երբ կը մեղանջն մարդկային հիմնական առանձնաչը-

նորումներու դէմ - սիրոյ, պատուի, զուրի, հպարտութեան, կարեկցութեան ու զոհողութեան կարողութեան դէմ (Սթոքհոլմի բանախօսութիւնը, 1949-ին): Անթափանց օդերգութիւն մըն է որ կը հոսի՝ արիւնի ու սեմի ու առհասուական Միսիսիբիի հետ, հատորէ հատոր, կայծակ փայտակող փոթորիկներու, օժով վիտացող անտառներու, կողորդելոսով ճախճախուաներու ու հըրկիզուող ապարանքներու մէջէն, մինչ շարժուող, կոտորացող ու շնչասպառ մարդիկ կը պայթին անաղմուկ, բայց ոչ-վերջնական ճակատագրի բուռին մէջ կամ Յուլիի սրտին կէտօրէն ետք, բանտին միակ խցիկին մէջ ոպասելով մահուան (Լայք ին Օլքսք) ու Ֆրանսացի արկածախնդի ճարտարագետը կը մուրի ճահճներու կուտութեան մէջ (Ապալոմ Ապալոմ), փայտական սրբահարները կ'ապաստանին կղզին ու մարդը սարտինի ժանդատ կախարչով նորածինին պորտակալը կը կտրէ (Տը Ուայլտ Բայլմ) մինչ, անդին ոճրագործ սեւամորթը ու յի՛ կինը կը տարուբրուին հեղեղած Միսիսիբիի երկայնքին (Տը Օլտ Մէն): Տղան իր հօրը կը յայտնէ թէ իր քոյրը բռնաբարած է զայն փրկելու համար հաւանական պոռնիկութեան ամբաստանութենէն - յետոյ անձնասպան կ'ըլլայ (Տը Սառնտ Էնտ տը Փիուլի): Կամ այն միւս մարդը, որ երեսուն տարի կը փորձէ փախիլ կասկածէն թէ՛ կրնայ սեւամորթի արիւն ըլլալ երակներունը, ու անկարող՝ երկուքն ալ կը հարուածէ, սեւին ու սպիտակին, ու զերագոյն կատաղութեամբ՝ սեւամորթներու եկեղեցիին մէջ Աստուծոյ կը հարհոյ՜... ու ի վերջոյ անձնասպան կ'ըլլայ (Լայք ին Օլքսք): Անդին, աշակերտուհի մը կը բռնաբարուի աննականութենէ զուրկ ոճրագործի մը կողմէ, ցորենի հասկի մը միջոցաւ (Տը Աեմֆալըրի): Այսպէս, ամբողջ բազմութիւն մը խենթ մեծ-հայրերու, սեռէ սոված կոյրերու, կոպերու սիրահարած ապուշնեբու, փառամուլ ու անգութ կաշուածա-

(**) Այս իր իսկ տուած սահմանումը: Մայրաքաղաք ձեֆրարն, Միսիսիբիի նահանգ տարածութիւն 2400 քառակուսի մղոն, քնակութիւն 6298 Տերմակներ, 9313 սեւամորթեր: Միակ սեփականատէր՝ Ուիլիամ Ֆոլքեր:

տէրներու, ամենի զինուորներու, մոսյլ հերոսական մեծ-մայրերու՝ կը թաւալի, բոլորն ալ իրենց անյետաձգելի ակորժակ ներով ու երազներով, ճմաթկուած անցեալներով ու անկարելի, աննախընթաց կեանքերով, գրկելով քանի մը սերունդներու յիմար ու Հոյակապ գոյութիւնը (սկսելով հնգիկէն ու առաջին գերիներէն ու հասնելով մինչեւ Երկրորդ Մեծ Պատերազմը) հասնելու համար բարոյական հզօր պատգամին, որ կրնայ յուսախար ընել իր պարզութեամբ ու տափակութեամբ, բայց որ հատրներու հետապառ, կրքոտ թափին տուած կշռոյթին շնորհիւ կը վերածուի գեղազիտական, կամ աւելի ճիշդ արուեստի սկզբունքի։ Այսինքն՝ հաւատք ու հնազանդութիւն Բնութեան մեծ օրէնքներուն, ներդաշնակութեան մը փնտռուքը կեանքի մէջ ախրող բարոյական քառնէն վեր, տեսակ մը ճակատագրի ներկայութիւն՝ որմէ առանց գիտնելու կ'օգտուին անոնք որոնց մէջ կը վառին դեռ սէրն ու գութը, քաջութիւնը ողբերգութեան սովորու եւ նաեւ գոհուելու՝ գերանձնական էութեան մը - անոնք որոնք իրապէս խոնարհ են ու իրապէս հպարտ, նոյն ատեն։

Ո՛րք կարելի է գտնել այս տեսակ մարդիկ, մարդկութեան ո՞ր գասակարգին մէջ։ Ճողջները իր խայտարղէտ ամբողները երեք խաւի, որակի կը բաժնէ։ Նախ կան անուակամները, այսինքն Սայրթօրիս ու Քոմսարն գերդաստանները, որոնք թէ՛ հողին կապուած են, թէ՛ ալ առեւտուրի աշխարհին։ Քաջ, յախուռն ու հպարտ մարդիկ, որոնք մարմնացումն են հին քաղաքակրթութեան արժէքներուն, բայց որոնց օրը չիջելու վրայ է, այսինքն տոսպելի վերածուելու վրայ են։ Կայ երկրորդ խաւ մը մարդերու՝ որոնք նոր են ու կը սողոսկին ամէն կողմ, անգիմադիծ, անբարոյ, շահամոլ խուժանը որ խելքն ու նենդութիւնը կը զործածէ քաջութեան տեղ։ Վէպերուն մէջ այս գասակարգը, այս ցեղը մարդոց կը ներկայացուի Մնօրս

գերդաստանով, Հիւսիսէն Հարաւ դարձեալ խախտել գրուի մարդկութիւնը՝ որուն բոլորս մաս կը կազմենք, որովհետեւ զայն կ'ընդունենք իբր օրինաւոր։ Այս երկուքն առաջինն է որ կարողութիւնը ունի հասնելու ճակատագրի ճշմարտութեան բայց... միշտ զՈ՛ր կ'երթայ իր մարդկային կիրքերուն։ Այսուհանդերձ, ան է որ գիւցադնեղական Սիմօնիսիոն մը կու տայ թէ՛ կեանքին, թէ՛ ալ երկին։

Կայ երրորդ մարդկութիւնը - սեւամորթներու մարդկութիւնը։ Կարկի չէ Հարաւի մասին խօսիլ առանց այդ ողբերգութիւնը մասնանշելու։ Մանօթ են Ճողջները զգացումները այս հարցին մէջ։ Քանի մը տարի առաջ, երբ Լիթթըլ Ռօքի տաղնապը ծագեցաւ, Ճողջները վճռական կերպով խորակնութեան կողմը պաշտպանեց, յայտարարելով - «Մի խառնուիք Հարաւի զործերուն... եթէ պէտք ըլլայ ես մինակս զէնքս առած Հիւսիսի դէմ կուտի կ'երթամ»։ Անշուշտ Ճողջները կ'ատէր իր Հարաւն իսկ որ չէր կրցած տոկալ նիւթապաշտական միօրինակութեան, բայց իրեն համար փտած հինն իսկ նախընտրելի էր անհողի նորէն։

Բայց Ճողջները իբր վիպասան ո՛չ պաշտպանած է, ոչ ալ ձագկած սեւամորթին տիպարը։ Ներկայացուցած է անոր կացութիւնը այնպէս ինչպէս որ տեսած է, առանց քարոզի, ու հաւանաբար առանց ալ շատ բան հակնալու Արկալոյի հոգեբանութենէն։ Ճակատագրական ու անթափանցելի յատկութիւն մը ունին իր սեւամորթները, սեռի ու մահուան կրկնակ սպառնալիքով եւ որոնց տառապանքը ու կրած անարդարութիւնը ճերմակին մէջ ստեղծած են յանցանքի զգացում մը։ Ըստ Ճողջների, գերութիւնն էր որ Հարաւի կործանումին պատճառը եղաւ ու զորքան ատեն որ մարդիկ զգան այդ յանցանքը, այնքան ատեն իրենց կործանումին յիշատակը պիտի կրծէ զիրենք»։ Սեւամորթը մաս կը կազմէ Հարաւի քրամիկին ու

կարելի չէ անջատել զանոնք իրարմէ :

Այս էր Ֆուլքնըրը, իբր բուրբ հակասութիւններով ու հակադրութիւններով : Աւելորդ է ըսել թէ ներկայ մակերեսային ակնարկը նուազագոյն զաղափարն իսկ չի տար իբր հիմնական արժանիքին — իբր սոճի շառայլին : Կարդալու է բնագիրը, հասկնալու համար թէ ի՞նչ է այդ մտքական ուժը որ, ըլլալ իբր մանրամասն նկարագրութիւններուն, իբր դիտակցութեան հոսանքներուն կամ բարդ հոգեբանական վիճակներուն մէջ՝ իբր սողներուն կու տայ անդիմադրելի էնթալթի մը, զեղեցկութիւն մը :

Որքա՞ն կը տոկայ այս հակոյ վաստակը : Գրողին համար, ինք կ'ըսէր — «Ոչ նիւթական, ոչ մարդկութիւն կրնան կործանել զբողբ : Միայն Մահը կրնայ զայն կործանել» : Հաւանաբար նոյնը կարելի է ըսել իբր երկին համար ալ : Պիտի մնայ ան՝ որքան կ'ազդին մարդեր, մեր ներկայ ըմբռնումով մարդեր — կարծիք մը, որ միջազգային մամուլի էջերը անվարան յայտարարեցին մահուան օրն իսկ : Իր հոգեբանական ու փիլիսոփայական հանդոյցներու առանցքը կազմող այդ սուղծուածը, ժամանակը ցոյց ուիտի տայ :

Վ. Օ.





ՎԱԶԳԻՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ

Սփիւռքի թիւ մէկ սերունդին թիւ մէկ գրագէտը: Թերեւս ոչ ամէնէն տաղանդաւորը, ոչ ամէնէն հմուտը, ամէնէն վարպետը: Բայց յայտնօրէն ամէնէն տաքը: Տաք ձայն մը: Տաք գրական կանոններն մը: Մէկուկէս աստնամակ, մօտ երկու՝ սերունդի մը գլխաւոր ներկայացուցիչն է, գրական ու հանրային կեանքին բազմերակը: Մտղքը կորսնցուցած ազոց եւ ծնողք ունեցող, այլ բոլորովին որբային պայմաններու մէջ ապրող ծնողատէր որբերուն նախընտրած անունն է Վ. Շուշանեան: Բառն է, նախադասութիւնն է, օրագիրն է ու պատմուածքը, յատկապէս 1930-ին երկու կողմը տարածուող մօտ քսան մը տարիներուն: Դրօշակիրն է գեղեցիկ զայրոյթին եւ բիրտ անկեղծութեան: Յոռաջակա՛հը:

Իր գրականութիւնը մերկ խօսք է ու նաեւ մերկացուցի՛լ խօսք: Տեմոքրատիք մտաւորութիւն է շարունակ, ազգային ու արուեստի անմար տազնապ: Սէր է եւ յեղափոխութիւն՝ կեանքին մէջ ու գրականութեան մէջ, Ընկերային հար-

ցերու կոտորացող վէճք է մէշտ, մըրիկ է միշտ: Իր սերունդին բացատրիկ փայլն է եւ նաեւ տազնապալի մտաթը: Շուշանեանի անձին եւ գրականութեան մէջ, որոնք նոյն բաներն են, խտացած կը գըտնենք սերունդ մը, իր առաւելութիւններով ու թերութիւններով, իր ուժով ու տկարութեամբ: Ողբկան լրյաբերով եւ ախտերու խաւարով:



Տաք եւ ապահովիլ անուն մըն էր: Վստահութիւն եւ ուժ ներշնչող ստորագրութիւն մը: Կը ոպասէ՛ր իր ձայնին: Եւ ուրիշ ամէն ձայնէ աւելի: Արիտասարդ՝ բայց անվիճելիօրէն աւելի՛՝ հեղինակաւոր եղաւ յաճախ քան շատ մը հին հեղինակութիւններ: Այդ հեղինակութեան աղբիւրը որբութեան կրակն էր, աաղանդի մը հուրը, այս երկուքին մեծազուճար ջերմութիւնը:

Սփիւռքի մէջ երիտասարդ երկու սերունդ ամէնէն աւելի Շուշանեանի ըստորագրութիւնը փնտոեց, երբ ուղեց

աղուոր բան մը կարգալ, ըմբոստ բան մը կարգալ, արդա՛ր բան մը կարգալ: Այսպէս նաեւ՝ երբ երկու սերունդի տըղաք ուղեցին սիրել, երբ ուղեցին դժգոհիլ եւ ատել, երբ ուղեցին հաղորդուիլ յեղափոխութեամբ եւ ուղիղ խօսքով: Սպասեցին ի՛ր յուզած խնդիրներուն, ի՛ր դրած հարցերուն, ի՛ր յարուցած վէճերուն: Ըսուած ու ապագրուած արիւրութիւններուն մէջ նախապատուութիւն տուին Շուշանեանի՛ տիրութեան, Շուշանեանի՛ խռովքին, Շուշանեանի՛ հայհոյանքին: Այդ սերունդին ուրիշ մէկ տղան, Շահան Շահնուր, նորէն ուժեղ եւ առոյշ, յստակամիտ եւ պայծառ, Շուշանեանէն աւելի ճարտար եւ շատ աւելի ճարտարապետ՝ մնաց սակայն անոր մէկ derivé-ն, հեղնութեան եւ քաջասական ուրիշ բաներու ուղղութեամբ անձած մէկ ենթամասը: Իրաւութեան տեսակէտով պակաս եղաւ քան ռոտոսթոյգի որբը: Խորքէ ու խռովքէ աւելի բառական փայլ ու սրամտութեան վճարուած անհարկի տուրք եղան երբևէն Շահնուրի մեծալիւնը զննադատութիւնները: Շուշանեան չկրցաւ հեզնել, չկրցաւ իմացական զով պահ մը զսնել սրամտութիւն ընելու համար: Յատկացուց ողջ անձը գեղեցկութեան ու լուրջ բաներու կրակին: Երկար էր, եւ խիզախութեամբ վարակեց իր սերունդը: Քայեց առաջ ծայրագոյն յանդգնութեամբ մը, մնալով մինչեւ մահ՝



զան եւ կը յորդէ՛ր իր ամաններէն, առանց սակայն դաւաճանելու անոնց: Հաւասար տունէն դուրս՝ ոգի ի բռին կը պաշտպանէր այդ տունը: Գիտէ՛ր պաշտպանել, գիտէր պտրկեշտ մնալ, նախանձախնդիր ու քաջ ըլլալուն: Գաղափարական տունին կատաղօրէն հաւատարիմ պամբոի մը վկայութիւնը չէ՞ իր վերջին խոստովանութիւնը, ջերմ, ջինջ ու զօրեղ:

Վազդէն Շուշանեան: —

Որքն էր ան տրորուած կեանքով, ընտանեկան անցեալի մը բնաջնջուած բարեկեցութեամբ: Մնաց որբը, ազգային ջախջախուած արժանապատուութեան մը ուրուականէն հալածական, պատանութեան բուրբ լոյսերուն պապուկը սրտին, եւ սակայն բուրբ լոյսերէն հեռու եւ զուրկ, հայ՛ ոբբ մը ըլլալուն: Եւ այսպէս, տրորուած կեանքով ու փըշու՛ւք փշու՛ր արժանապատուութեամբ որբէն ծնունդ առաւ քանի մը տարի ետք երիտասարդ զրազէտ մը, գեղեցիկ ընդվզող մանրու գեղեցիկ երկրպագու մը մինչեւ վերջ, սրուն հողին, հազար պատճառներով, բզիկ բզիկ կ'ըլլար փարեզի Լատինական Թաղին մէջ, Լիւբոսովուրկի հուշակար պարակէցին խորը:

Տաք, հրաշէ՛կ որբ մը: Տաք, հրաշէ՛կ զրազէտ մը: Ու տակաւին հրաշէ՛կ կուսակցական մը, զաղափարապաշտ մը, անհուն անվտրաք՝ մը: Ողնուծուծով դաշնակցական մը պապ. վկայ՝ առաւելագոյն հասցու իր ոգին, որոնող ու դժգոհ: Մարդկային հարցերու տախտով՝ ազատատենչ, ազգային ինդիքներու պարագային՝ անկախապաշտ: Տեւապէս խռով հետեւաբար, տեւապէս անհանգարտ: Տաքնապահար շարունակ: Եւ այս բուրբէն վերջ, այս բուրբէն վեր՝ լուրջ ու հաւատարիմ: Առատ բան մըն էր այս տը-

Վազգէն Շուշանեան : -

Յոսպ ու եռացուց շրջապատը : Ըրաւ այդպէս, այնքան ատեն որ շնչեց, այնքան ատեն որ տեսաւ աշխարհը եւ սնոր վրայ կուտակուող անհատնում հարցատուութիւնն ու անսպառ թշուառութիւնը կողք-կողքի : Ծոսց ու եռացուց՝ գրէչը աչք ըրած, սիրտ ըրած, միտք ըրած : Ըրած զայն արեւմտահայ արձակին բարձրագոյն նուաճումներուն ձգտող ազնիւ ու աղետական ճիգի մը գործիքը : Շուշանեանին արձա՛կը : Շուշանեանին յուսեղէն, լուսակարկաչ բարբա՛ռը : Լուսաբա՛նչ Հայերէնը : Որ սիրոյ եւ վէրքի երած շտուութեան մը պէս ծաւալեցաւ : Որ մեղքի եւ արտմուծեան մեղանոյշ արնգահարութեամբ մը անցաւ էջէ էջ : Որ շքեղօրէն վայրենացաւ գիշերային մայթերու լոյսին մէջ, ի խնդիր կիներու եւ արկածի : Որ յետոյ, այս բոլորին հետ եւ այս բոլորին աւելի՛՝ եղաւ յեղափոխականի մերկ խոսք, զսակարկային յուզումներու կրքոտ նախադասութիւն, եւ ապա ըմբոստութեան կարմիր ձայն, աղաղակ կարմիր :

Հալէպի հեղձուցիչ սալաշատակներուն այս փոքրիկ ջրկիրը, հանրապետական Երեւանի ու Պաթումի պոպոտաներուն երկայնքին բարկ երեւակայութեամբ մը սիրոյ եւ արկածի ետեւէն վազող այս պատանի դատարկապորտը եւ, վերջապէս, Պրանսայի հարաւ գիւղատնտեսութիւն ուսանած ու Պրանսայի հիւսիսը - Փարիզ - հայ դրականութեան լրքեալ ծաղկաստանը մշակող այս երիտասարդ գրագէտը, Շուշանեան, չէր կրնար չեռալ, չեռացնել շրջապատը : Գըրուած ըլլար կարծես ճակատին՝ պաշտելի կամ քճնելի : Այս երկու ծայրարձակ բաներուն մէջ աւարտեցաւ իր կեանքը, ըսպառեցաւ հոգին : Միջին վիճակներու եւ իրաւախոհութեան մարդը չէր Առաջին սիրայ եւ գորշ օրերու տաք գուսանը, այդ վիճակին երդուեալ թշնամին յայտարարեց ինքզինք բազում առիթներով ու մնաց այդպէս : Գրեց սիրայ եւ արկածի տղայը, եւ մնաց այդպէս : Ձեռու

տարբեր, երբ գրեց Գարնամայիցը, Մանուան Առագաստը, Սիրոյ եւ մեղքի պարտէզը, Օրերը գեղեցիկ չեմ վէպը, Մթնմ պատանութիւնը, Դառն հացը : Ու նաեւ այդպէս՝ իր անթիւ օրագիրներուն մէջ, քերթուածներուն եւ հրապարակագրական էջերուն մէջ :

Ամբան գիշերներուն հեղինակը գըրականութիւնը երկու տիմանսիոններով տեսաւ առհասարակ եւ գրչին բովանդակ գորութիւնը կեդրոնացուց այդ երկու տիմանսիոններուն վրայ, - Արդարութիւն եւ Գեղեցկութիւն, որոնց միջոց եւ ծաւալ Հայթայթող Շուշանեանի սէրը եղաւ դէպի մարդկութիւնն ու մարդկային կեանքը :

Ձեզքութիւնները չօրեց կեանքին թէ գրականութեան մէջ : Կրաւորականութիւնը ատեց : Ըստ իրեն, մարդը պէտք է սիրէ եւ կողմ ունենայ : Կատարողօրէն բանի մը կամ բաներու հետ ըլլայ, կատարողօրէն բանի մը կամ բաներու դէմ : Որով, գրականութիւնը խաղող անկիւն չէր Շուշանեանի համար, այլ ռազմապաշտ : Արուեստի, ազգային եւ դասակարգային շքեղ մարտերու տեսակ մը անվախճան Աւարայր, անհուն Սարդաւրապատ մը : Պատանիի երեսներուն հաղիւ քիչ մը մազ ճարած՝ էջաւ ռազմապաշտ, վայրագ, այլ բարի, ոգի եւ արգարութիւն այս տղան : Մինչեւ յետին յունչ, արգարութեան, գեղեցկութեան ու անկախութեան իր բազում մարտերը մղեց, կարծես գրական Ղարաբաղի ժողով, գրական ու գաղափարական Սարգարապատի մը մէջ, Բաղ-Արարանի մը մէջ, մշակութային Մայիս 28-ի մը հաշտոյն : Կեանքը օրհասական կուտի մը վերածեց, մոլեգին գուպարի մը՝ ընդդէմ մտքի տանկիներուն, հոգեկան թաթարներուն : Մոնկոլ ու բռնութիւն դարձած ընդդէմ ամէն բանի :

Այո՛, օտարութեան մէջ էր ինք, ուրիշ լեզուներու եւ ուրիշ լոյսերու անասանման յորդումի մը մէջ, այլ կառչած մնաց իր գոյութեան բոլոր նեարդներով Հայոց Մեծաց աշխարհի հիմաւորք բար-

բառին, վահագներուն կեանք, հուր ու հողի հայթայթող հայկական ծիրանի լոյսին: Մէնի ափերուն վրայ, թռեբուն ամբողջ զօրութեամբ ՄԵՆԻ պողոտայ կարգ մը իրեն պէս խելայիղօրէն շքեղ սղոց հետ - Ն. Սարաֆեան, Նարդունի, Ն. Պէշիկիթաշիկան, Ծ. Եահուր - , եւ այլ ՄԵՆԻՔը Հայոց որոտացող գեղեցկութեան ձայնն էր օտար գետի շուրճերուն հասած: Փարիզ էին, բայց Մեան եւ Գանաքեա կար իրենց մէջ, Մեքսիկո տեսիլք եւ Սայթ Նովա:

Ջրացումներու եւ խոհի ջրացումս այս դրագէտին առաջին յատկանիչը ուրեմն իր ջերմութիւնը եղաւ: Մայրաքոյն այն տեղը, որ կը վարէր զինք գէպի հեռուներն ու բարձրբը շարունակ: Որ կը վարձատրէր զինք եւ մերթ եւս կը պատժէր: Կը մխրճէր մերթ տիղմի մէջ, նետելու համար վերստին մաքուր արեւի մը գերիկը: Այնպէս որ, իր տենդին հլու հպատակն էր, խաղաղիքը կարծես: Եւ ներքին այդ եզերական խաղը վերջ չզըտաւ, տեւեց մինչեւ մահ, ըլլալով իրեն մեծութեան եւ խաչի դժուար ճանապարհ, զբազան բարձունքներու առաջնորդող ուղի:

Անհուն զգացում եւ անհուն կիրք ըլլալով հանդերձ, զինեց ինքզինք նոյն ատեն խոհով, տրամաբանութեամբ ու հմտութեան զէնքերով: Մտածումին փամփոշտակայնբը վրան էին միշտ եւ լի՝ պայքարի եւ դժան մաքառումներու փամփոշտակներով: Որք ազգի մը, որք դասակարգի մը, որք անհատի մը կրակներով պատող Փարիզի այս հայ մտաւորականը իր խօսքը ունէր միշտ գրականութեան եւ գրական հաւաքոյթներու մէջ, կուսակցութեան եւ կուսակցական ժողովներու մէջ, ընկերավարութեան եւ ընկերավարական համալուծարներու մէջ:

Գրական թէ՛ հանրային կեանքի պայքարներու ընթացքին, կրցաւ գործածել իր զէնքերը ու մտքէն շանցուց երեւիցէ շարաշահութիւն ընել անոնցմով: Գրական ասպատակութիւններ այսինքն՝ եւ արուեստի ու բարոյականի տե-

սակ տեսակ աւարտութիւն: Կաշառքի մթին առուշուրիւններէ շախորժեցաւ ու շուքեց օգտուիլ, երբ անօթութեան անառատ գիշերներ անցուց ուրիշ մարդերու յղիացած ցայգերուն առջեւ: Գնահատանքի եւ բարձր ժողովրդականութեան իր շփոթեալ օրերուն իսկ, իր բարոյական դրամագլուխը չգործածեց նիւթական ծածուկ խանութանութեան մը հաշուոյն, եւ իր գրական գործերու ձեռագրերէն զատ, դազանի զգրոցներու մէջ շքեղեցեց անտեսութիւն փայլեցնելու կոչուած ուրիշ հաշուետոմարներ եւս: Իր նկարագրին դրօշակը ըսել կ'ուզեմ մնաց միշտ բարձր ու միշտ անբիծ: Բարոյական վաճառքներէ այդ խորշանքն էր, աղտ չընդունող այդ ներքին մաքրութիւնը, որ ուժ ու տեւականութիւն կ'ընծայէր անոր գրականութեան ու պայքարի խօսքին: Ուղղամտութիւնն էր պատճառը, ու նաեւ մթին զրկանքներու եւ լքուածութեան օրերու իր կեցուածք՝ որ իր զէնքերուն արժանի բարձրութեան մը վրայ կը աւանդէր զինք: Կը գտնէիք արդար, որ ան ունենայ հեղինակութեան աւելի՛ դրամագլուխ քան ուրիշ մէկը, իրմէ առաջ, այլ մանաւանդ իրմէ ետք: Ոգեկան ընդարձակ կալուածներու այս երկտասարդ մարդկանին հեղինակութեան սահմանը կ'ուզէիք որ տեւարար անի գրականութեան մէջ:

Արդարութեան եւ գեղեցիկ բաներու համար մղուած ճակատամարտէն դուրս, Եռշանեան ոչ մէկ զնդակ պարպեց այլ տեղ, այլ նպատակով: Կրցաւ տղամարդ մնալ, մեծ թիւրիմացութիւններու եւ գերագոյն գոտութեան մը շրջանին իսկ, կից տալով իր անհուն խռովքը օգտագործելու փութացած կաշառատներուն: Այս խօլ «մարտկոցական»ը, «մարտկոցական»ը պահ մը, մէկդէ չըպլըրտեց թերթ ու խմբակցութիւն, առաջին հերթին իսկ, երբ խորհրդաւոր օսկարկութիւններու հոտը հասաւ զքթին: Դառն հացի մը դատնադոյն վերջին պատառը ծամեց ու այդպէս մեռաւ: Փաջ ու մաքրամաքուր:

❖

Քսաներորդ դարու այս առաւելաբար արձակագիր Գեարդոս Դուրեանին, ու դեռ աւելի մօտ նմանութեամբ մը, Արտասահմանի այս նորէն կրակ ու բոց Չարենցին կեանքը բազմահանգոյց ողբերգութիւն մը եղաւ, երբ ահա քսան տարի ետք կը գիտենք այդ կեանքը իր ամբողջութեանը մէջ:

Տիրութիւնը կը կրկնապատկուի սա տողերուն առիթով, երբ նուիրական մարգերու մէջ փոխանակութիւններու տարում առեւտուր մը տեղի կ'ունենայ ժամանակէ մը ի վեր, ընդմէջ ուղեկան ու նիւթական բաներու: Հոգեկան հարստութեան սահմաններուն մէջ սխալագիտի համեմատութեան հասած ցանկութիւն մը կայ այսօր, նիւթապէս ու նիւթական վայելքներով առատանալու, տեղ մը հասնելու, ներկայէն ու անցեալէն դրամական վրէժ մը լուծելու, շրջապատի մը եւ ծանօթներու հանդէպ կուտակուած քինայնդութիւն մը սնտակապէս յագեցնելու: Ցանկութիւնը վերածուած է արդէն արարքի եւ ինքզինք թաքցնող ճարտար տեսութիւններու: Մաքրելու համար խիղճը այս նոր աղտերէն, խաբելու համար ներկային հետ քիչ մըն ալ ապագան, ժամանակը, կը դիմուի շարժական մեծ լուացքի մը պարբերականութեամբ՝ հանրային սրբազան օճառափոշիներու եւ ամէնէն առաջ հայրենասիրութեան հրաշագործ նիւթին: Կը ծախուին ողբերգական սպասարկու մարդիկ, ներքին անհաստատի դիրքութեամբ մը, հոգիի դժնդակ այլուրութեան մը մէջ: Ու կը ծախեն իրենց հոգին, չիֆլէք ծախողի մը չափ մանրավաճառ, ասեղդերձան ծախողի մը չափ փերեզակ: Եւ որքան նախկին բացարձակ համոզումներ դրուած են անուրդի, տխուր գոյքի պէս, դժնդակ կարասիներու նման: Եւ դեռ ի՞նչ խորագիրներու ետին, եւ դեռ ի՞նչ սրտայոյզ նախադասութիւններու ետին, և դեռ ինչ նուիրական բնարաններու, անյաղթահարելի՜ անուններու ետին թաքնուած, կը կատարուի մեր ժա-

մանակներու մեծագոյն անբարոյութիւններէն մին, մարդկային կեղծիքներուն զուցէ ամէնէն վատթարը: Նիւթական վարկի ու վայելքի թշուա՛ս սուպադուրներու համար, սիրտ մը իր բոլոր աստուածներով մէկտեղ ու հոգի մը իր բոլոր աստուածունհիներով հանդերձ՝ կուտան ուրիշի՛: Ի՞նչ չեն իւրացներ եւ չեն ծախեր ի՞նչ, հոգիները, երբ անոնք վերածուին այլեւս ձմրան օրերու Սուրճ Նուրիէի, երբ ըլլան պատուած իմացականութեան մէջ մէկ պիթ-պապար:

...Ի՛յ Շուշանեան Վազգէ՛ն, անհուն ու զե՛րմ տղայ, նման՝ Մակու քաղաքի ճարեւահամ զուլու. խոռվքի աշուղ եղբորդ չափ ըմբոստ, անո՛ր չափ պայծառ, անո՛ր չափ անկաշառ: Խնեթ ու հեղեղ եղաք ձեր հաւատքին համար, ձեր արուեստին ու ազգին համար: Քաղաքացի ու քաղաքի ճեղխակ, դուն որքան ինք: Բարձր ու պինդ երգեցիք, բարձր ու շտրե՛ղ խօսեցաք, բարձր ու մաքուր շինչեցիք: Արդարութեան ու կրօնատմի բառ էիք դուք յաճախ, մէկը Փարիզի մէջ ու միւսը Երևանի: Խոռվք ու շնտէիք ստեղծումի, մէկը Սէնի ափերուն ու միւսը Չանգուի: Վայրագ էիք, բայց այնքան լուրջ նոյն ատեն, այնքան իմաստուն նաեւ: Մեծ պատերազմէ մը յառնող արիւնքամ ժողովուրդի մը կեննքը լեցուցիք, անողոք խօսքով, արու ու ջինջ հայեացքով, հեռահաս խոհով, դուն կեղեքո՛ղ դրամատիրութեան մը դէմ եւ ան կեղեքող ու կեղծ համայնավարութեան մը դէմ: Երկուքդ ալ բունութեան դէմ, հոգեպանութեան եւ ազգասպանութեան դէմ: Չարենցի կուսակցութեան մէջ դուն Չարենց մը կ'ըլլայիր. յուսախաբ, ըմբոստ, զնդակահարուած: Եւ կ'ըլլար Չարենց թու կուսակցութեանդ մէջ Շուշանեան Վազգէն մը, հառանց անդամատեարի իսկ դաշնակցական: Երկուքդ, ա՛հ, կը չփոթուիք այլեւս տեղ մը, կոչուելու աստիճան կարծես Վազգէն Չարենց եւ Եղիշէ Շուշանեան, քանի որ նոյնը եղաք կարծես ձեր խոռվքով, ձեր ջերմութեամբ, ձեր

Հաւատարմութեամբ: Նոյնը մանաւանդ՝
 ձեր ցկեանն անկաշառութեամբ: Բոտոս-
 թոցի բարձրատաղանդ որբ եւ Մակուէն
 զէպի... աստուածութիւն ընթացող
 «Պիրք Ճանապարհի» տղայ՝ դուք ճա-
 կատաղբականօրէն յանդիցաք, պիտի
 յանդէիք անշուշտ ազգային, գրական ու
 գաղափարական մանուսան անխուսափելի
 տեսիլքին: Պիտի մտնէիք, անխուսափե-
 լիօրէն, Հայոց պատմութեան անտառին
 մէջ, տեսնելու Համար Հայրենասիրու-
 թիւն եւ Ալիշան, ազատութեան կամք եւ
 Բաֆֆի, յեղափոխութիւն եւ Քրիստա-
 փոր...:

Ձէիք կրնար, է՛յ Շուշանեան վազ-
 դէն, չյանգիլ Ձարենցին հետ յաւիտենա-
 կան մանուսան տեսիլքին, վասնդի նման
 չեղաք ձեր տաղանդին կոտորակներով
 միայն մէջտեղ եկած ձեզ ու ձեր հոգին
 կեղծել ուղղորդներուն, սիրել ու քարոզել
 ուղղորդներուն, այլ միայն դանոնք այսօր

առատօրէն վաճառողներուն: Չեղաք նը-
 ման՝ ձեր տառապանքն ու մահն իսկ
 նիւթական բարեկեցիկ պայմանի վերա-
 ծող այսօրուան ծայրայեղ ճարպիկնե-
 րուն, կարգ մը ձրի յեղափոխականնե-
 րուն ու ձրի՛ որբերուն: Եղաք Հարա-
 զատ դաւանիլ մեր ոգեկան ու մտաւոր
 փառքի պատմութեան. խոսիլքի եղաք
 մրրկահաւ՝ որոնց պէտք ունի, հազար
 տարի սոսոյսուան չափ նաև այսօր. հայ
 ժողովուրդը, իր հողին վրայ ըլլայ թէ
 իր հողէն դուրս, գրականութիւն ընէ թէ
 յեղափոխութիւն, կրօնք քարոզէ թէ ար-
 ուեստ, դրօշակ ծալած թէ դրօշակ պար-
 դած ատեն: Օրնրը գեղեցիկ չեն, բայց
 պիտի ըլլան, հաւատա՛, քոսնեմէկ
 տարուայ հետու հողաթումբիդ վրայէն,
 հաւատա՛, ոգի Շուշանեան, որ օրերը
 զեղեցիկ պիտի ըլլա՛ն...:

Ե. Գ.



ԼԵՋՈՒԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ՆԻԻԹԵՐ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Գրեց՝ Բ. ԹԱՇԵԱՆ

Վերջերս դարձեալ կարգացի Վարդան վարդապետի պատմագիրքը, հրատարակուած՝ Վենետիկ, 1862-ին, «Հաւաքումն Պատմութեան Վարդանայ Վարդապետի» խորագրին տակ եւ յաւելեալ ծանօթագրութիւններով:

Նախ, անշուշտ, կ'արժէ ծանօթացընել անձը, ապա բուն իսկ դործին մէջ փնտռել նիւթեր՝ աշխարհաբարի պատմութեան համար: Ինձի առաջնորդ ունիմ Հայր Գար. Զարբանաւանի «Պատմութիւն Հայ Հին դպրութեան» առաջին հատորը եւ Ալիշանի «Հայագատում»ը:

Վարդան Պատմիչ, կոչեցեալն Արեւելցի, ծնած է Արեւելիան Հայոց եւ Աղուանից աշխարհի սահմանակից քաղաքներէն մէկուն մէջ: Ատկէ առած է Արեւելցի կոչումը: Եղած է աշակերտ հրոշակաւոր Վանական վարդապետի եւ աշակերտակից՝ Կիրակոս Գանձակեցիի: Ուխտի համար Նրուսաղէմ կատարած ճամբորդութեան առեն հանդիպած է Կիլիկիա, ուր մնացած է հինգ տարի, Հե-

թում Ա. Թաղաւորին եւ Կոստանդին Ա. կաթողիկոսին խնդրանքով: Կաթողիկոսը Վարդան վարդապետի ձեռամբ շրջաբերական թուղթ մը զրկած է «առ արեւելեայ»: Իր այս քուղթին մէջ Կոստանդին Ա. արդիւնական վարդապետ եւ նախախնամութեան մասնաւոր պարզեւ՝ կ'անուանէ Վարդան Պատմիչը:

Զարբանաւան կը կարծէ, թէ Կիլիկիա գտնուած միջոցին Վարդան վրդաբարդմանած է Միխայիլ ասորոց պատերիարքի ժամանակազրութիւնը, իրեն օգնական ունենալով Իշոխ անուն ասորի քահանայ մը: Ուրիշներ այս թարգմանութիւնը կը վերագրեն Դաւիթ քահանայի մը: Կիլիկիայէն վերադարձին էր, որ Վարդան առանձնացաւ Անդրէի վանքը, ուր եւ գրի առաւ իր գլխաւոր երկասիրութիւնները:

Կոստանդին կաթողիկոս թաթարաց Հուլաղու Խանին մօտ զբիկց Վարդանը, իրրեւ նուիրակ: Պատմիչը, յիշելով այս պարագան իր գրքի 97րդ դրուխին մէջ,

կ'աւելցնէ, թէ Խանին հետ խօսած է կըրօնական հարցերու մասին եւ յորդորած զայն՝ բարութեամբ վարուիլ քրիստոնեաներուն հետ, իսկ ամենուան հանդէպ ըլլալ արդարազատ: Խանը, ըստ երեւոյթին, պատուով ընդունած է հայ վարդապետը, դինի օրհնել տուած է անոր եւ խնդրած, որ ազօթէ իրեն համար: Ապա զանազան հարցումներ ըրած եւ ստացած է պատշաճ պատասխաններ, զորս կարելի մանրամասնութեամբ կը յիշատակէ պատմիչը իր գրքի վերջին գլուխներուն մէջ:

Խանին մօտէն մեկնելէ հետք, Վարդան կը Հանդիպի տառակներու: «Յատուրս յայս, - կ'ըստմէ, - ի մեզաց իմոց անկաւ գրեցնկս ի ձեռս Հարամեաց, սոցայօջ մեր (ակնարկութիւն՝ իր աշակերտներուն. Բ. Թ.). եւ յորմութենէն Յիսուսի ապրեցան սոցայն առ ժամն. Ե յիս ամի եւ կիսոյ գիրքս ի Տփիսիս ի վաճառ բերեալ եւ դնեալ ի տանէ եղբոր մերոյ՝ միայ Մելիք կոչեցնյոյ»:

Վարդանի կը վերագրուին զանազան մեկնութիւններ, ներքոյներ, վարձադրութիւններ, շարականներ եւ շահեկան գրքոյկ մը՝ «ժղլանք», որ կը նշանակէ դուարճալիք, զբօս եւ որ կը բովանդակէ Ս. Գրոց, մանաւանդ Նոր Կտակարանի անձանց եւ դէպքերու մասին ծանօթութիւններ: Զարբանայեան չի յիշատակեր այդ գրքոյկը Վարդանի միւս գործերուն կարգին, իսկ Ալիշան ո՛չ միայն կը յիշատակէ, այլեւ կ'աւելցնէ, թէ գրքոյկը յանձնուած էր Հեթում Թաղաւորին եւ թէ Բրիտանոմ զայն Թարգմանած է Ֆրանսերէնի, 1867-ին:

Վարդանի գործերուն մէջ իր կարեւորութեամբ առջին տեղը կը գրուէ անշուշտ Հայոց պատմութիւնը («Տիեզերական Պատմութիւն»), որ կը սկսի արարչադրո՞ծութենէն եւ կը հասնի մինչեւ Հայոց 716 թուականը (1267): Կը կարծուի, թէ հեղինակը վախճանած է քանի մը տարի հետք, հաւանաբար 1271-ին:

Երկու ձեռագիր օրինակներ կը յիշուին Վարդանի Հայոց Պատմութեան.

մէկը հնագոյն օրինակն է Վենետիկի մատենադարանին, միւսին մէջ աւելցուած է, - կ'ըսուի, - Թաթարաց պատմութիւնը: «Մայց որովհետեւ, - կը գրէ Զարբանայեան, - այս յաւելուածին մէջ գրութեան ո՞ճը եւ լեզուն կը փոխուին, աշխարհիկ բառք կը յաճախեն, տարբրինակ եւ ի տղիտաց հրաշալի համարուած դէպք, թուականաց անդադար կրկնութիւնք եւայլն, յո՞մանց անհարազատ կարծուած է Վարդանայ պատմութեան այս մասը, եւ յաւելուած յայլոց»:

Նոյն կապակցութեամբ, բայց ո՛չ նոյն եզրակացութեամբ, Ալիշան կը գրէ իր կարգին. «Շարաբանութիւնը պարզ է, եւ երբ Հուլաղուի խօսակցութիւնը պատմէ, ուսմկօրէնի կը մօտենայ, ինչպէս ժղլանայ մէջ»:

Մեզ հետաքրքրող ճիշդ այս «աշխարհիկ բառք»ը եւ «ուսմկօրէն»ն են: Դժբախտաբար ձեռքի տակ չունինք «ժղլանք»ը, ուր աշխարհարարի աւելի կարեւոր հետքեր պիտի գտնէինք հաւանորէն: Ուստի՝ առ այժմ պիտի օգտուինք Վարդանի պատմաագիտքէն, անոր մէջ աշխարհարարի պատմութեան նիւթեր փնտռելու համար:

Ճ

Այո՛, արդարեւ, Վարդան վրդ.ի պատմագրքին մէջ առատօրէն կը դրօնենք հետքեր լատիներէնի, արաբերէնի, պարսկերէնի, եզրպտերէնի, Թաթարերէնի, թուրքերէնի, յունարէնի եւ այլ լեզուներու: Պատմիչը ո՛չ միայն բառեր առած է այդ լեզուներէն, այլեւ շարադասութեան ձեւեր, յասցուածքներ, նըւերապետական ախտոցներ, պաշտօնական բացատրութիւններ: Մինչեւ իսկ փորձած է ներկայացնել զլիսուոր յատկանիշները կարգ մը լեզուներու: Այսպէս, օրինակ, «փափկագոյն» կը կոչէ հելլենացւոց լեզուն, «սաստկազին»՝ Հըռոմայեցւոց լեզուն, «սպառնական»՝ հոներու լեզուն, «աղաշական»՝ ասորերէնը, «պերճական»՝ պարսկերէնը, «զեղիցկածեւ»՝ ալաններու լեզուն, «ծաղրական»՝ զոթերէնը (զոթերը գերման.

հին ցեղ մըն էին), «խարափաճայն» ե-
դիպտացւոց լեզուն, «ճճուող»՝ Հնդկե-
րէնը, իսկ հայերէնը՝ «ճամեղ եւ ամե-
նազարդ եւ համեմական»:

Պէ՞տք է հետեւցնել, թէ պատմիչը
ծանօթ էր իր յիշատակած լեզուներուն
կամ գոնէ լռած էր զանոնք անձամբ: Կը
տարակուսիմ: Միւս կողմէ՛ պարզ է, որ
մեր պատմիչներն ու մատենագիրները
ս'ը միայն հիմնովին ծանօթ էին արեւ-
ելեան կարգ մը լեզուներու (ինչպէս՝
յունարէն, ասորերէն, պարսկերէն, թա-
թարերէն, արաբերէն), այլեւ հաւանա-
բար անգէտ չէին հեռակայ ժողովուրդ-
ներու գոնէ խօսակցական լեզուին ալ:
Կրնանք ըսել, թէ լեզուներու խառնարան
մըն էր Հայաստան: Ենթոհիւ ընդօրինա-
կէյու, իւրացնելու մեր բնածին ընդու-
նակութեան, մենք այդ խառնարանը վե-
րածեցինք կայուն բանի մը, առինք ինչ
որ յարմար գտանք մեր ճաշակին: Ասկէ
թերեւս տուժեց մեր լեզուին տոճմէկ
դրոմը, բայց անժխտելի է, որ «հայրե-
նի բարբառ»ը հարստացաւ, ճոխացաւ ու
զարձաւ աւելի քան ճկուն: Սերտական
բոլոր լեզուները փոխառութիւններ ըրած
են իրարմէ, բայց նաեւ պահած-պահ-
պանած են իրենց ցեղային յատկանիշն ու
տեղական գոյնը: Այսօր այլեւս անկա-
րելի է մեր լեզուական կառոյցէն վտա-
րել պարսկական, յունական, ասորական
կամ արաբական տարրերը: Նման պա-
րազայի մը՝ հայերէնը շատ բան պիտի
կորսնցնէր, առանց մեծ բան մը շահե-
լու: Մնաց որ մեր կատարած փոխառու-
թիւնները հայացուած են իրենց հիմնա-
կան գիծերուն մէջ:

Բայց անաւասիկ քանի մը քաղ-
ուածքներ վարդանի պատմագիրքէն
(ընթերցողը դիւրութեամբ պիտի նկատէ
օտար բառերը).

1. «...Եւ կատապան եղին ինքեանք
քաղաքին» (էջ 99): Հրատարակիչը ծա-
նօթութեան մէջ կը գրէ. «Կատապան,
թուի յոյն գաթարան, իբր ամենապետ
կամ համակար իշխան»:

2. Կարուց Գազիկ թաղաւորը, «նեղ-
եալ յերկուղէ թուրքացն», իր երկիրը

կը յանձնէ յոյներուն եւ փոխարէն կը
ստանայ զպոռառտինս հարիւր» (էջ 102):
Պոռառտին կամ պոռառտին յունարէն բառ
մըն է եւ կը նշանակէ գիւղ:

3. «...Մինչ զի զպատրիարզն Բար-
սեղ վերացեալ խաչիւ առաջի իւր մու-
ծանէր, եւ պատուէր պարզեօք, եւ
սուղբայիւ գրոյ» (էջ 104): Տուղբա
կամ թուղբա, ըստ պարսից, կը նշանա-
կէ արքունի կնիք, թրքա՛սայոց մէջ առ-
վորարար զործածուած բառ մը՝ նոյն ի-
մաստով:

4. «...Եւ զօրք նորա ամբացեալ ի
կլայնս (էջ 104): Կլայն արաբերէն
قلايلىն է անկասկած. կը նշանակէ
բերդ, ամրոց:

5. «Վ սոյն աւուրս սպանաւ Բեխտն
իշխանն Երբակունի...» (էջ 105): Հրա-
տարակիչը ծանօթութեան մը մէջ կը
ճշդէ. «Բեխտ՝ թուի վեհառ (a veste,
ըստ լատինաց, պաշտօնեայ զգեստաւոր-
իչ): Իշխան Երբակունի ծանօթ է առ
Բիւզանդացիս, եւ ընիկ անունն է Խա-
չատուր»: Հա՛րկ է հետեւցնել, թէ Գա-
զիկ Բ.ի վատահամբաւ նախարարը՝
Վեհա Սարգիս պետք է եղած ըլլայ
«պաշտօնեայ զգեստաւորիչ», թերեւս մեր
օրերու արքունի սենեկապետը:

6. «Որ եւ զքեռին իւր զիմայիչն ա-
բարեալ հէջուք, կարի քաղցր եւ բարե-
միտ առ Հայս» (էջ 108): Հրատարակի-
չը կ'աւելցնէ իր կողմէ. «Հէջուք, հա-
ճիպ, ըստ Արարացւոց, դոնապան կամ
սենեկապետ»: Իսկ մեր հանդուցեալ ա-
բարազէտ բարեկամը՝ Գէորգ Մըջըր-
լեան, որուն զիմած էի այս բառին ի-
մաստը ճշդելու համար, հաստատեց, թէ
հաճիպ՝ կը նշանակէ նաեւ զատաւորի
դեր կատարող պաշտօնեայ, ինչ որ կը
թուի պատշաճիլ ներկայ պարազային:

Եարունակենք մեր քաղուածքը:
Պատմիչը կը գրէ.

7. «Վ հինգ հարիւր քառասուն ե հին
թուին (1) Դանըլմանն տէրն Սերա-
տիոյ, զորմէ ասէն յազգէն Հայոց, եկ-
աւ ի վերայ Մելիքոյ...» (էջ 112):
Հրատարակիչը ծանօթագրութեան մը
մէջ կը նկատէ. «Դաշըման է Տէնիշ»

մէնտ, որ նշանակէ գիտուն, ընթերցող»։ Այս բառը, ինչպէս կ'ազմութեանն ալ կը հետեւի, պարսկերէն է եւ կը նշանակէ գիտուն, ուսեալ, բայց ո՛չ՝ «ընթերցող»։ Գէորգ Դպիր Պայատեցի իր Պարսկահայ բառգիրքին մէջ (Պոլիս, 1826) տաճիշմեմտ բառին ջով դրած է, իբրեւ հոմանիշ, շարմէշարէ։ Մեր պատմիչը Հասարակ գոյականը գործածած է իբրեւ անձի անուն (թէ եւ անհունական չէ, որ Դանըշման նաեւ անձի անուն ըլլայ)։

8. «Եւ ի պալ միւս ամին, անկաւ հուր յերկնից ի ճէմիայն Ամթայ, որ է մնիրայն հաւաքման մտիմանաց, եւ այրեաց զքարաշէն յարկն եւ էլանէր բոցն մինչեւ յերկինս» (Էջ 117)։ Այս հատուածին մէջ աղաւաղեալ ձևով գործածուած են արարեղէն երկու բառեր, - Աւիլայն, որ մեր գիտած մամիւն է (ձգկիթ, եւ չիպտացիները կ'ըսեն կամա), եւ մնիրայն, որ նոյնպէս մեզի ծանօթ միմարկն է, այսինքն՝ մզկիթին աշտարակը, ուրկէ մուէզզինը աղօթքի կը հրաւիրէ հաւատացեալները։ Ուշագրաւ է, որ մեր մատենագիրները հետամուտ եղած են միւս «հայագնելու» թէ՛ բառերը եւ թէ անոնց ձևական կառուցուածքը։

9. «...Որք (Փռանդք) ի նաւ մտեալ փախչէին, նֆատ ձգեալ ի նաւն՝ այրեաց (Անդրոնիկոս) երեսուն հազար արանց» էջ 132)։ Նֆատը յունարէն նափթա բառն է, զոր ընդունած են եւրոպացիք եւ որ մեզի ծանօթ նաւթն է, հայերէն տառադարձութեամբ՝ նփատ կամ նափատ։ Չեմ գիտեր իրապէս, թէ երբէն ի վեր սկսած է գործածուիլ Որոսթը իբրեւ վառելանիւթ. առաջին անգամ կը հանդիպիմ այս բառին Վարդանի պատմագրքին մէջ (ԺԳ. դար)։

10. «...Պարաչայն որ է առ զՄառաբար, ...ընդ պարեօպն իջեալ, եւ երկու ջնիրայով շոգաւ ի Մանդկերտ...» (էջ 132)։ Խարաչայ ըստ երևոյթին կազմուած է խարաչ (խարան) բառէն, որ կը նշանակէ հարկ, գլխահարկ։ Պէտք է ենթադրել ուրեմն, որ խարաչ կամ խարանա՝ հարկահանի, տուրք գանձող պաշտօնեայի իմաստով գործածուած է

այստեղ։ Ջնիրայի մասին հրատարակուող կ'ըսէ ծանօթագրութեան մէջ. «Ջնիրա, ճէնիպէ, ճէնայիպ ըստ Արարացուց է նօրյք ի ձեռանէ»։ Արդարեւ, ճնիրայ արարեղէն բառ մըն է եւ կը նշանակէ «նօրյք ի ձեռն», Փրանսերէն շրվալ ամ մէն կամ շրվալ տը ըկրկով եւ կամ շրվալ տը բարատ մընէ ամ լեսար։

11. «...Եւ անդ տիպին թանձր ամպն կոչեցեալ ռաստ, եւ կամ զանպըն» (էջ 137)։ Հրատարակիչը կը բացատրէ. «Չանապն եւ ռասան նշանակեն զհանդոյցս լուսնի ի վերայ Պաւարման ծրին, եւ զկէան՝ յորում դիտի աստղն»։ Վիեննա տպագրուած թուրքերէնէ չայերէն բառարանի մը մէջ գտայ զգնէպ արարեղէն բառը՝ պոչ, ազի, տաուն նշանակութեամբ, իսկ նոր Հայկազեան բառգիրքը ունի զանապը՝ «Վիշապ համաստեղութեան պոչը» իմաստով։ Նոյն բառգիրքը տուած է նաեւ ռաստ բառը՝ «թանձր ամպ» նշանակութեամբ։ Պատմիչը ինքն ալ կը գործածէ արդէն «թանձր ամպը» բացատրութիւնը։ Այս երկու բառերը, հետեւաբար, նոյն իմաստը շուին։

Վարդան Պատմիչ կը գործածէ բազմաթիւ ուրիշ օտար բառեր ալ, օրինակ՝ տուկ (գուշա, մուշ), բրինձ (իշխան, prince), ալաման (զերման), անգլիզ (անգլիացի), փռանցիս (Փրանսացի), նոյին (մոնկոլերէն՝ բիրապետ նշանակութեամբ), Ռաջարզ (Ռիշար) եւայլն, եւայլն։

Այո՛, Վարդանի պատմագրքին մէջ կան շատ ու շատ օտար բառեր (յունարէն, պարսկերէն, արաբերէն, թաթարերէն, նոյնիսկ հնդկերէն), որոնք գործածութենէ դադրած են հիմա եւ պատմական արժէք ունին միայն, բայց ցոյց կու տան, թէ լեզուական ինչ ազդեցութիւններ կրած է հայերէնը, ինչ չափով եւ ո՛ր դարերուն։ Ուսումնասիրել այս ազդեցութիւնները, ճշգեւ անոնց ժամանակն ու տեսչութիւնը, բազդասել զանոնք իբրտու հետ եւ համապատասխան եզրակացութիւններ հանել, հետաքրքրական նիւթեր են հմուտներուն համար։

Վարդանի պատմագիրքը կարգալու
ատեն, հետաքրքրուեցայ այն հարցով,
թէ ինչու մեր պատմութեան մէջ գրեթէ
հետք չկայ վրացական մշակոյթէն, մա-
նական դիւանքէն: Հետաւոր Հնդկաստան
իսկ ներկայ է մեր մատենագրութեան
մէջ, իսկ դրացի Վրաստանը բացակայ
է: Ի՞նչ բանի պէտք է վերագրել այս ե-
րևոյթին պատճառը կամ պատճառները,
չեմ գիտեր: Թերեւս ներքի է ենթադրել,
թէ մենք սերտ շփում չենք ունեցած վր-
րացիներուն հետ եւ կամ վրացիները ի-
րենք օգտուած են մեր մշակոյթէն ու
լեզուէն: քան մենք՝ իրենցմէ (ի դէպ,
ԺԵ. եւ ԺԶ. դարերուն՝ վրաց արքունի-
քը հայերէնը կը դործածէր իրրեւ «ար-
քունի» լեզու):

Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Ֆէկ իր շահե-
կան մէկ դործին մէջ («Վրաց ազգիւրնե-
րը Հայաստանի եւ հայերու մասին») հե-
տեւեալ նկատողութիւնը կ'ընէ. «Արսէն
Սափարացու Վրաց եւ Հայոց բաժանման
մասին» երկասիրութեան յորինման ժա-
մանակ, Թ. դարու երկրորդ կիսում,
կամ զուցէ նրանից մի փոքր առաջ, նոյն
Թ. դարու առաջին կիսում, վրաց գրա-
կանութեան մէջ նկատուում է մի հոսանք՝
վրացերէնի վերածելու հայոց կամ յայն-
բիւզանդական գրականութեան մէջ գո-
յութիւն ունեցող բոլոր այն գրուածքե-
րը, որոնք պարունակում են որեւէ տե-
ղեկութիւն հայերի «փորձանք»ի մասին,
սկսած Խորենացու «Ողբ»ից ու Սահակի
տեսիլքից մինչև դանազան «Պատմու-
թիւն» կոչուած երկերը»:

Այս նկատողութենէն կարելի է հե-
տեւցնել, թէ Թ. դարէն սկսեալ՝ վրա-
ցիները հետամուտ եղած են հետազոտե-
լու հայ մատենագրութիւնն ու պատմու-
թիւնը իրրեւ աղբիւր, իսկ հայերը ո՛չ
պէտք ունեցած են, ո՛չ ալ պահանջ՝ օգ-
տուելու վրաց մշակոյթէն, որ կերպով
մը արդէն հարկատու էր հայոց մշակոյ-
թին:

Բայց վերադառնաք Վարդանի
պատմագիրքին, որուն վերջին հինգ դը-
լուիններուն մէջ աշխարհաբարի հետքեր
կան: Պատմիչը կը ներկայացնէ իր տե-
սակցութիւնը Հուլաղու Խանին հետ (էջ
157-158): Ընդուած չէ, թէ ի՞նչ լեզուով
կը խօսէին, սակայն տեսակցութեան ըն-
թացքին գործածուած են այնպիսի բա-
ռեր ու բացատրութիւններ, որոնք կը
յիշեցնեն արեւելահայ բարբառը եւ մին-
չև հիմա ալ պահուած են գրեթէ նոյ-
նութեամբ: Ահա՛ քանի մը օրինակներ.-
շալակ, հէնց, ո՞նց է, կարգացել ենք,
մեղաւոր մարդ ենք, խօսք մի եմ յասել,
աղօթ են առնում, եւ այլն:

Այո՛, աշխարհաբարի հետքեր կան
մեր պատմիչներուն մօտ, եւ դարէն
մինչև ԺԷ դար, երբ տիրող լեզուն զը-
րարարն էր դեռ:

Ես չեմ յիշեր, որ մեր բանասէրնե-
րէն մէկը մասնաւոր կերպով ուսումնա-
սիրած ըլլայ աշխարհաբարի հետքերը
մեր պատմիչներու գործին մէջ:

Ո՞վ պիտի կատարէ այս աշխատան-
քը...

Բ. Թ.





ՎԵԱՆՔԻ ՅՈՐՁԱՆՈՒՏԻՆ ՄԷՋ

(Հեղ. Կ. ՍԱՍՈՒՆԻ)

ՏՊ. ԱՏԼԱՍ, ՊԵՅՐՈՒԹ 1962

Կարո Սասունիի պատմաճգնեղու առաջին հատորին՝ «Ալեոներու Ռորհուր-դը»-ն քսանհինգ տարիներ վերջ միայն, լոյսին կու գայ անոր նոյն սեպին պատկանող երկրորդ հատորը, «Կեանքի Յորձանուտին Մէջ» ընդհանուր վերտառութեան տակ:

Արագընթաց եւ պահանջկոտ այս դարուն հետ, զուգընթաց չէ դանդաղ այս երթը:

Քսանհինգ տարիներու անընդհատ մը եւ երկու հատորներ միայն. սակայն երբ կը փոխադրենք այս դանդաղութիւնը մեր ապրած իրականութեան կալուածէն ներս եւ երբ նկատի կ'ունենանք հեղինակին անձն ու զործը, այս առերեւոյթ զանդաղութիւնը կը փոխուի մեր իրականութեան չափանիշներուն յատուկ արագութեան, վերածուելով բեղուն վաստակի մը, այն հիմնաւորումով, որ Կարո Սասունի, ստեղծագործական իր երկու հատորները քսանհինգամեակով մը իրարմէ բաժնող միջոցին՝ լծուած է կրթական եւ մտային աշխատանքի, լոյսին բերելով՝ գրականութիւնը դասաւանդող, գրականութիւնը հետաքրքրական դարձնող եւ գրական ճաշակ մշակող գործեր, ինչպէս «Սասունցի Դաւիթը», «Տարօնի Պատերազմը», «Արեւմտեան Արդի Գրականութեան Պատմութիւնը» եւ «Գրական Գոհարները», որոնց առընթեր լոյս ընծայած է նաեւ պատմական եւ ընկերային գործեր առանձին հատորներով — «Տանկահայաստանը Ռուսական Տիրապետութեան Տակ»:

«Այրիւեան Եղեռնը Քննական Ակնարկով», «Հրայր», «Գիտք Զաւուշ» եւ «Պատմութիւն Տարօնի Աշխարհի» ընդարձակ երկասիրութիւնը:

Սովորաբար զբողը ընտելացման ճամբով, իր կենսակցութիւնը գրականութեան հետ կը սկսի, եթէ ոչ պատանեկութեան գէթ առաջին երիտասարդութեան շրջանէն, եւ եթէ իր տաղանդը անխառն է, եւ գրականութիւնը անտեղիտալի պահանջ մը կամ ներքին մտքակոծ մըն է իր մէջ, կը շարունակէ այդ կենսակցութիւնը արուեստին հետ մինչեւ դերեզման:

Վերջին տասնամեակներուն սակայն, դարձանք վկաները հիմնովին անօրինակ երեւոյթի մը — անուններ, որոնք կազմուած դէմքեր էին արդէն, որպէս յեղափոխական եւ ազգային գործիչներ, որոնք պորտի ոչ մէկ կապով օղակուած էին գրականութեան եւ արուեստին հետ, եւ որոնք յեղափոխական կամ հանրային գործունէութեան հարուստ ենթահողով մը անցած էին երիտասարդութեան սահմաններէն եւ մտած՝ հասունութեան, նոյնիսկ ոմանք ծերութեան սահմաններէն ներս, իրենց անցեալի յուշերու պատմումին տարօղին տակ՝ ենթադրապահակաօրէն յայտնաբերեցին գրական հակումներ եւ գրողի մը խառնուածքը շեշտող տարրեր, ինչպէս Արմէն Գարո, Ռուբէն, Մալխաս, Մինախորեան եւ Վրացեան — այս խումբին հետ քաղեց եւ այս խումբին կը պատկանի նաեւ Սասունին, սակայն ան իր գրական հակումնե-

բը չսահմանափակեց յուշագրութիւններու շրջագծով, այլ առաւ քայլ մը աւելի եւ գրականութիւնը, ի մասնաւորի պատմութեանը սեռը դարձուց նպատակակէտ՝ արտայայտելու իր մէջ կազմուող գրողին՝ ապրումներն ու մտորումները:

1931-ին էր, որ լոյս կը տեսնէր Սասունիի առաջին պատմութեանը Պարտուկանի «Կեանք եւ Արուեստ» տարեգրքին մէջ՝ «Առաջին Զեփիւրք» խորագրին տակ, ուր սեղմ գծերով հեղինակը, իր տան պարտկոյնի մէջ խաղացող՝ մանկութենէ դէպի պատանութիւն անցնող երկսեռ փոքրերու ներքին արթնութեան առաջին տարուաները կ'արտայայտէր:

Եթէ չեմ սխալիւր այս պատմութեանը նախամուտն էր, հայոց նորագոյն պատմութեան թոհուրէն մէջ կազմուած՝ Սասունիի հանրային եւ յեղափոխական դիմադրին քովն ի վեր կազմուող՝ գրագէտի նոր դիմագծին:

Պրախօսող մը կրնայ դեղչել այս երկրորդական կարծուած մանրամասնութիւնները, որոնք թէեւ ուղղակիօրէն չունին աղերս մը գրախօսուող դրքին հետ, սակայն անպայմանօրէն կը բերին նպատակ մը, գրախօսականի մը առիթով ծանօթացնելու նախ գրող մը, որուն կոչումը գրականութիւնը չէր, սակայն կեանքը եւ նոր ստեղծուած դադրաշխարհի պայմանները, արթնացնին անոր մէջ տարիներէ ի վեր իր ներքին աշխարհին մէջ քննող երկրորդ դիմագիծ մը, ինչպէս նոյն սերունդին պատկանող այլ անուններու մէջ, որոնց յիշատակումը բերի վերի տողերուն մէջ:

Անցնող տարիներու ընթացքին, երկրորդ դիմագիծին յապաղած այս զարթնումը մնաց տիրապետութեանը տակ առաջին այն դիմագիծին, որ կազմուած էր Սասունիի պատանեկութեան ընթացքին եւ քալած ու ուռնացած անոր հետ: Այդ դիմագիծը մեր յեղափոխութեան եւ ցեղային ընդհանուր մտահոգութիւններուն արտայայտութիւնն էր, որուն ազդեցութեան եւ շուքին տակ մնաց՝

հասունութեան տարիքին նոր կազմուող գրողներին դիմագիծը:

Այս է ըստ իս, Սասունիի գրականութեան ընդհանուր եւ պարզագոյնին իջած բնորոշումը: Իր առաջին հատորը «Լեռներու խորհուրդը», պատմութեանը ներու տարալին տակ կը ներկայացնէ, մեզի անծանօթ լեռնաշխարհի մը՝ Տարօնի զուտ, սակայն ներքին ուժակալութեամբ լեցուն ոգին, եւ այդ ոգին արտայայտող մարդերը: Հոս սեղմ պարբերութիւններով Սասունը կը բարձրանայ իր ձիւնանիստ զազաթներով եւ հոն ապրող մարդերը այդ բարձունքներէն կը հաղորդուին մեր յեղափոխութեան հետ, բազմեցուած իրենց հոգիներուն մէջ կողք կողքի՝ կարծրութիւնը իրենց ժայռերուն եւ նրբութիւնը իրենց լեռներու ձիւնածաղիկներուն:

Իսկ այսօր, եղբարկան հարուածէն վերջ, ի՞նչ մնաց անոնցմէ, որոնք իրենց աչքերով ըմպած էին այդ երկնամերձ լեռնաշխարհին ծագող արշալոյսները: Մաս մը անոնցմէ այսօր, Արագածի լուրջերուն թրտած՝ դարձած են քաղցրահունց ճիւղիւն ծիրանի փող մը, իսկ ուրիշ մաս մը հնամենի եւ քարաշէն Հայկազի մէջ՝ յանձնուած ջաղացքի մը մենութեան կամ գէմ յանդիման կեցած՝ փուռի մը կեղտոտ քիչերուն կը վերածեն տակաւ առ տակաւ հանդիտող գեղեցիկ եւ անաղմուկ մայրամուտ մը

Լեռնականներու մայրամուտը...

Սասունի, իր «Կեանքի Յորձանուտին մէջ» գործով, օտար արիւնքով վերայ, իրենց ցեղային յոյսին ու հաւատքին դեռ կառչած այդ լեռնականներու հորիզոնն ի վար սուղուող վերջալոյսին երանդներն է, որ կը փոխանցէ մեզի: Այս շարքին կը պատկանին, «Երբ մօր սիրտն է որ կը խօսի», «Քարը քարին վրայ չկայ, բայց հողը կայ», «Երկրի ցաւ ունիմ», «Մտքըր Զայի» եւ այլ պատմութեան ճիւղեր:

Սասունիի «Կեանքի Յորձանուտին Մէջ» հաւաքածոն, համաձայն մշակուած նիւթերու ընդգրկած շրջանակին,

կը պահէին աւազուտքէն: Այս պատգամաւորները քառասուն օր խորհուրդէ ետք դեռ չէին գտած՝ հայրենիքի ճամբան, երբ աւերակ պալատի պատուհանէն ներս կը մտնէ՝ ծիծեռնակ մը, քառասուն եւ մէկերորդ պատգամաւորը, կը թեւարարէ պալատի կամարներուն տակ եւ կը սլանայ դուրս... պատգամաւորները կը խուփեն դէպի պատուհանը եւ կը տեսնեն ծիծեռնակին թռիչքը՝ դէպի հիւսիս... Այս սլացքէն ետք պատգամաւորները գտնուեցան՝ կը բռնեն հիւսիսի ուղղութիւնը՝ գտնելու համար իրենց կորսնցուցած հայրենիքը...:

Տարազիւր հայ մարդուն քառասուն տարիներու այս լուս ու շուտըն՝ հայրենիքի որոնումն ու աստուածները, Մասունի ուրուագծած է խորունկ ապրումով եւ այրող ներզաշտութեամբ, սակայն զժրախտաբար արուեստի կատարելութեան հասած այս հատուածին մէջ, ան գիտակցաբար կաշկանդած է, այլ մտահոգութիւններէ մղուած, գրադէպին անկախութիւնը, մշուշելով տեղ տեղ իր տողերը եւ կացինահարելով յաճախ իր Թօսքին ամբողջականութիւնը: Ի մասնաւորի այս հատուածին վերջաբանը՝ էջ 68, ուր կարծէք հեղինակը դիտումնաւորէն կոնակէն դաշունահարած է իր իսկ ստեղծած պատգամաբեր ծիծեռնակին խորհուրդը:

«Կեանքի Յորձանուտին Մէջ» կան էջեր, որոնք կարելի էր դուրս քաշել այս հատորէն, ինչպէս «Մակընթացութիւնը», «Մայրիկի մը Մահը», կամ «Մէհիտ փաշան», որոնք իրենց կառուցուածքով կը մնան ռիթմիկ շրջագծին մէջ եւ չեն անցած գրականութեան սահմանէն ներս:— այս հատուածներու խոցելիութիւնները, արուեստի անկիւնէն մօտեցած, կարելի է վերադարձնել հեղինակին անսպարանքին եւ մասամբ ալ անփոյթ վերաբերմունքին:

Ինչպէս իւրաքանչիւր պրոպ օւնի իր ինքնուրոյն գրելակերպը, Մասունի եւս ստեղծած է լեզու մը, ուր տիրապետող է հարապատութեան շեշտը: Մասունի կը գրէ այնպէս ինչպէս կը խօսի:— Արեւմտահայերէնը, Տարօնի ասոյթներն ու դարձուածքները եւ մասամբ ալ Արեւելահայերէնի խոնարհումները իրար օղակելով ստեղծած է ոճ մը, որուն գլխաւոր յատկանիշն է անսթեքեթ պարզութիւնն ու ջերմութիւնը:

Կարօ Մասունիի «Կեանքի Յորձանուտին Մէջ» հատորը, պատմուածքներու եւ խորհրդապաշտ պատկերներու տարադին տակ, կը մնայ յատկանշական գործերէն մին՝ Մփիւքի գրականութիւնը ներկայացնող:

ՄԱՆՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**ԱՐՇԱԿ ԱԼՊՅԱՃԵԱՆ
(1879 — 1962)**

Երկու ամիս առաջ, Յունիս 20-ին, Գահիրէի մէջ իր մահականացուն կնքեց 83-ամեայ Արշակ Ալպոյանեան: Հայ ժողովուրդի անցեալի պատմութեան նշանոր ունեցած վաստակն է որ մեզ կը մղէ յարգանքի այս խօսքերը ուզողելու:

Ալպոյանեան ծնած է Մկիտար (Պոլիս) 1879 Յունիս 19-ին (նոր տոմարով): Եանեական կրթութիւնը ստացած է թաղային վարժարանին մէջ, իսկ երկրորդականը՝ Պէրպէրեանի եւ Կեդրոնականի մէջ: 1899-1908 վարած է զբաղիւրի պաշտօն՝ զլիսաւորաբար իր եղբոր քով:

1900 թուականին է, որ իր սկանակի քայլերը կ'առնէ Բիւզանդ Քէչեանի Բիւզանդիստի մէջ՝ յաջորդաբար լոյս ընծայելով զլիսաւորաբար կենսագրական նշմարներ: Հետզհետէ այս պիծը աւելի պիտի շնչուի իր մէջ եւ հետագային իրմէ պիտի ունենանք Հայ Հանրային պանդան զործիչներու նուիրուած առանձին ուսումնասիրութիւններ:

Բիւզանդիստի հետ իր ունեցած շփումը զինք պիտի մղէ ստանձնելու նոյն թերթին վարչական պատասխանատւութիւնը, զոր պիտի վարէ 1908-1918: Ուշատ Հաւանաբար իր այս փորձառութիւնն է որ զինք պիտի մղէ 1936-37, Գահիրէի մէջ լոյս ընծայելու Ազատ ՄիաՔ շտաբաթերթը:

Ալպոյանեան 1916-1922 եղած է Պոլսոյ Ազգ. Պատրիարքարանի Տեղեկատու Դիւանի տնօրէնը: 1922-23 գտնուած է Գործու (Յունաստան), իսկ 1923-ին փոխադրուած է Գահիրէ, ուր ապրած է մինչեւ իր մահը: 1926-36 եղած է Գահիրէի Ազգ. Առաջնորդարանի քարտուղար:

Ալպոյանեան վարած է նաև ուսուցչական պաշտօն: Դասուանդած է Հայոց

պատմութիւն Պոլսոյ Եսայեան վրժ.ին (1915-22), Գործուի նպաստամատոյցի որբանոցին (1922-23) եւ Գահիրէի Գալուստեան վրժ.ին մէջ:

Կենսագրական այս հպանցիկ սկիզբէն ետք, կ'անցնինք Ալպոյանեանի պատմա-բանասիրական վաստակին: Այդ հունձքը, որ կը տարածուի 62 տարեկանու վրայ, կարելի է բաժնել զլիսաւորաբար երկուքի. 1) Առաջին ուսումնասիրութիւններ, ուրիշ բառով մենագրութիւններ, հանրային զործիչներու նշանիրուած. 2) Հայ գաղութներու եւ գաւառներու պատմութիւն: Այս երկուքն ալ իր հիմնական հետաքրքրութիւնները կազմած են եւ իր գործունէութեան ըսկիզբէն իսկ գոյութիւն ունին: Մենագրութիւններով զբաղած է եւ իր պրպըտումներուն արդիւնքը լոյս ընծայած է 1900-1940, իսկ գաղութներու եւ գաւառներու պատմութեան արդիւնքը՝ 1937-1962:

Տպուած մենագրութիւններն են.

- 1) Ուսումնասիրութիւն Սըբուհի Տիւսարի, Վենետիկ, 1901.
- 2) Գրիգոր Զօհրապ, Պոլիս, 1919.
- 3) Մինաս Զեբապ, Գահիրէ, 1927.
- 4) Գրիգոր Կեսարացի Պատրիարք եւ Ժամանակը, Երուսաղէմ, 1937.
- 5) Թորգոմ Պատր. Գուշակեան, Գահիրէ, 1940.

Հայ գաղութներու եւ գաւառներու պատմութեան նուիրուած սպուած Հատորներն են.

- 1) Պատմութիւն Հայ Կեսարիոյ, 2 Հատոր, Գահիրէ, 1937.
- 2) Պատմութիւն Հայ Գաղթականութեան, 2 Հատոր, Գահիրէ, 1941-1955.
- 3) Առաջնութիւն ի Հայկչիտան, Գահիրէ, 1946.
- 4) Պատմական Հայաստանի սահ-

մանները, Գահիրէ, 1950.
5) Պատմութիւն Եւրոպայի Հայոց, Գահիրէ, 1952.

6) Պատմութիւն Մալաթիոյ, Պէտրոս, 1961.

Ալպոյանեանի տպուած գործերուն չափ, եւ նոյնիսկ աւելի, կան անտիպներ, որոնք կրնան մեր մշակոյթի պատմութեան համար նորութիւններ պարունակել: Կարծէ որ Հայաստանի պատկան մարմինները տէր կանգնին այդ թողունին, որպէսզի անստոյգ ճակատագիր չունենայ:

Ալպոյանեանի պատմա-բանասիրական վաստակին երկրորդ մասը, հակառակ իր կարգ մը թերութիւններուն, գընահատելի նպաստ մըն է հայ մշակոյթի պատմութեան համար: Ան գիտցած է փորձութեան գիմանալու եւ շտալու հայ մշակոյթի ընդարձակ պատմութիւնը, այլ կեդրոնացած է այդ մշակոյթի մէկ երեսին վրայ, որ հայ զաղթականութեան պատմութիւնն է: Ու եթէ մենք Կոմիտասով կը մտաբերենք հայ երգը, Թորամանեանով՝ հայկական ճարտարապետութիւնը, Ալպոյանեանով ալ անմիջապէս պիտի մտաբերենք հայ կենսագրութիւնն ու զաղթականութեան պատմութիւնը:

Անոր պատմա-բանասիրական վաստակին մաս կը կազմեն նաեւ այլ գործեր: Ազգային Սահմանադրութեան յիսնամեակին առիթով Ս. Փրկիչ Հիւանդանոցի 1910-ի Տարեցոյցին մէջ լոյս ընծայած է ընդարձակ ուսումնասիրութիւն մը, որ ցարգ կ'օգտագործուի Ազգ. Սահմանադրութեան պատմական ընթացքը ուսումնասիրողներուն կողմէ:

Ունի նաեւ Պատմութիւն Հայ Դպրոցի վերնագիրով գործ մը, որուն Ա. Հատորը տպուած է (Գահիրէ, 1947), Բ. Հատորը կը զտնուի անտիպներուն մէջ:

Ալպոյանեան շնորհիւ հայ զաղթաններու պատմութեան ուսումնասիրութեան, ամբարած է նաեւ որոշ ծանօթութիւն հայ տպագրութեան պատմութեան: Մեր կարծեքով, արտասահմանի մեր ի-

րականութեան մէջ այն հազուագիւտ անձերէն մէկն էր, Հայր Ներսէս Ակիմեանի կողքին, որ կրնար լուսագոյնս ներկայացնել հայ տպագրութեան ընթացքը: Իր անտիպներուն մէջ Տպագրութեան Արուեստը եւ Հայք վերնագիրով գործ մը կը յիշատակուի, որ եթէ Հայրենիք Ամսագիրի (Ժ. տարի, թ. 10-11) մէջ լոյս տեսած յօդուածաշարքն է, կը մընայ համեստ ներդրում մը: Ալպոյանեան ատակ էր աւելիին:

✽

Պատմագրութեան գլխաւոր հիմը պատմական տուեալին մէկտեղումն է, երբ այդ նիւթին հաւաքումը տեղի ունեցած է անաշտ կերպով, այսինքն գիտական ոգիով, տուեալ գործը կը դառնայ արժանի գնահատանքի: Պատմաբանին գործն է հաւաքուած նիւթին վերլուծումը: Ալպոյանեան գլխաւորաբար կատարած է առաջին ճիշդը, այսինքն պատմական նիւթին մէկտեղումը: Բայց գլխաւոր թերութիւնը՝ իրեն պակաս է նիւթի դասաւորման մեթոտը: Իր կենսաքի վերջալոյսին կարծեք մարմաշը ունէր հաստատուող հատորներ լոյս ընծայելու (երբեմն հազարաւոր էջերու վրայ տարածուող), որոնք յանդիմանաբար կրկնութիւններ պիտի պարունակէին:

Ուրիշ թերութիւն մը - իրեն պակաս է գիտական ոգիի այն մասը, որ կը յայտնուի գիրքերու հսին զետեղուած օժանդակ ցանկերով (օգտագործուած աղբիւր, տեղանուն, անձնանուն, եւն.): Ու այս մեղքը միայն իրը չէ, այլ արտասահմանի բազմաթիւ գործերը կը տառապին այդ մեղքէն: Միանգամ ընդմիջապահանալի պէտք է ըլլայ թէ հայ մշակոյթի պատմութեան որեւէ ճիւղ ներկայացնող լուրջ ուսումնասիրութիւն, պէտք է ներփակէ վերոյիշեալ ցանկերը, այլ լապէս ան կը դառնայ գրեթէ անգործածելի:

Հակառակ այս թերիներուն, Ալպոյանեանի գործը գնահատելի է եւ կրնայ օգտագործուիլ պատմաբանին կողմէ: ԱՐՏԱԿԵԱ ՏԷՐ ԽԱՋԱՏՈՒԲԱՆ

ՍՏԱՅՈՒԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Շնորհակալութեամբ ստացած ենք

Մասիս - շաբաթաթերթ - Պէյրուսթ

Ազատ Օր - օրաթերթ - Աթէնք

Հանդէս Ամսօրեայ - Հայազգիտական ուսումնասիրթ - Վիեննա

Աւետարանի Շուկչուլ - Արտակ Արք. Մանուկեան. 1962, Թեհրան

'Իերասանի աշխատանքը դերի վրայ - Պերճ Ֆաղլեան, Պէյրուսթ

Աշուտ Պատմագրեանի Յարեյեանը - Խմբագրող՝ Պէյրուսթ Սիմոնեան, Պէյրուսթ :

« ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ »

«Բագին»ի բաժանորդներէն կը խնդրուի անյապաղ վճարել իրենց բաժնեգինները մեր գանձիկներուն. Պէյրուսթի մէջ՝ Պրն. Պետրոս Պաստըր-մանեանի, Պուրճ Համուտի մէջ՝ Պրն. Յակոբ Մինասեանի :

«ԲԱԳԻՆ» ԿԸ ՆՈՒԻՐԷ

Պարոն Քրիստափոր Յակոբեան մէկ տարուան «Բագին» կը նուիրէ Պրն. Յարուսթիւն Արքիմեանի, անոր ամուսնութեան առօրէ :

ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷ

ED. BOYADJIAN

B. P. 1153


BEYROUTH - LIBAN

Հեռագայկի թիւ 256078

Տպարան ԱՏԼԱՍ, Ռիւ տը Ֆրանս - Հեռ. 245402

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻԲԱՆԱՆ 20 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 7 ՏՈՂԱՐ
ՀԱՏԱՎԱՅԱՌ 2 Լ. ՈՍԿԻ



Վարչութեան հասցէ.—

DIKRAN KOUYOUMDJIAN
P. B. 587, Beyrouth — Liban